«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՍԿ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2018

ՆԱԽԱԲԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի (ԵՄՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է հաստատության կողմից ներկայացված դիմումի համաձայն: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և Լեհաստանից ժամանած 1 փորձագետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, եվրոպական և հայաստանյան փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
2) իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու բուհի հավակնությունների տեսանկյունից:

Սույն զեկույցն անդրադառնում է ԵՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննության արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 18

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 21

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 21

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 221

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 25

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 25

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 27

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 30

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 39

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 45

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 54

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 63

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 70

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 78

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 81

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 85

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 91

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 92

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 94

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 96

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 99

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 100

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 101

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԵՄՀ փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Եվրասիա միջազգային համալսարանը 2015 թվականին անցել է հավատարմագրման գործընթաց ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով, որի արդյունքում համալսարանին շնորհվել է պայմանական հավատարմագրում՝ 2 տարի ժամկետով: Այդ գործընթացի արդյունքում անբավարար էին գնահատվել հաստատության երեք չափանիշներ («Մասնագիտական կրթական ծրագրերը», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը» և «Հետազոտությունը և զարգացումը»):

Սույն գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԵՄՀ-ն իր առաքելությունը նախանշում է երեք մակարդակներում՝ ուսուցում, հետազոտություն և հանրային ծառայություն՝ առաջնային դերակատարություն տալով արդյունավետ ուսուցման կազմակերպմանը: Առաքելության այսպիսի ձևակերպմամբ ՄՈՒՀ-ն, ըստ էության, առաջին պլան է բերում իր ՄԿԾ-ները, սահմանում է հետազոտության բնութագիրը՝ ընտրելով կիրառական հետազոտությունների իրականացման ուղին և հասարակության լայն շրջանակների հետ աշխատանքը տեսնում է որպես իր արժեքների և գիտելիքի տարածման միջոց: Իր տեսլականի համաձայն, ԵՄՀ-ն ձգտում է դառնալ ճկուն կառավարմամբ առաջատար կրթական հաստատություն, որը կկրթի աշխատաշուկայի պահանջներին բավարարող և կիրառական կարողություններով մասնագետներ:

Նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա ՄՈՒՀ-ը բարեփոխել է Ռազմավարական ծրագիրը: ՌԾ-ում իրականացվել են մի շարք բարելավումներ, մասնավորապես վերափոխվել և հստակեցվել են համալսարանի տեսլականը, ինչպես նաև կատարվել են լրացումներ առաքելության մեջ, լրամշակվել է գործողությունների ծրագիրը, սահմանվել են կողմնորոշիչ ցուցիչներ: Ողջունելի է, որ ռազմավարական նպատակների իրագործման նպատակով, հաստատությունը համագործակցում է ներքին և արտաքին շահակիցների հետ, և որ ներքին շահակիցներն անուղղակիորեն, հարցումների և հետադարձ կապի այլ մեխանիզմների միջոցով մասնակցել են ՌԾ-ի մշակման, կարիքների վերհանման գործընթացներին: ՄՈՒՀ-ն աշխատանքներ է իրականացնում ՌԾ-ի իրագործմանը արտաքին շահակիցների ներգրավվածությունն ակտիվացնելու և նրանց հետ կապն ամրապնդելու ուղղությամբ:

Ներկայումս համալսարանն իրականացնում է բակալավրիատի 4 («Իրավագիտություն», «Կառավարում», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆարմացիա») և մագիստրոսական 3 («Կառավարում», «Իրավագիտություն», «Անգլերեն լեզու և գրականություն») կրթական ծրագրեր՝ առկա և հեռակա ուսուցման ձևերով:

Համալսարանն ունի ՄԿԾ-ների մշակման, վերահսկման և վերանայման ընթացակարգեր: ՄԿԾ-ների և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների մշակման գործընթացում ՄՈՒՀ-ը ձգտել է ապահովել համապատասխանությունը ՈԱՇ-ին, կատարել է ազգային և միջազգային բենչմարքինգ համանման կրթական ծրագրերի հետ: ՄԿԾ-ների դասընթացների մակարդակում համալսարանն իրականացնում է որոշ բովանդակային և մեթոդական փոփոխություններ, բայց առ այս պահը վերլուծության չեն ենթարկվել բոլոր ՄԿԾ-ները՝ ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների համապատասխանության և ռիսկերի բացահայտման տեսանկյունից: Համալսարանն ընդգծում է գործատուների հետ համագործակցությունը, իր մատուցած կրթական ծառայությունների հարմարեցումը աշխատաշուկայի կարիքներին:

ՄՈՒՀ-ն ունի մի շարք ՄԿԾ-ներ իրականացնելու լիցենզիա, որոնք սակայն չեն իրականացվում. օրինակ՝ լրագրություն: Այս հանգամանքը վկայում է կրթական ծառայություններն սպառողների կարիքների, աշխատաշուկայի պահանջարկի, սեփական կարողությունների և ռեսուրսների թույլ վերլուծության մասին:

Չնայած այն փաստին, որ նախորդ հավատարմագրման գործընթացում տրված խորհրդատվությունների հիման վրա իրականացվել են ՄԿԾ-ների բարելավումներ, այնուամենայնիվ, դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք ՄՈՒՀ-ի կողմից ուշադրության են արժանի, մասնավորապես՝ ՄԿԾ-ներում քիչ են մասնագիտական առարկանելը, ՄԿԾ վերջնարդյունքները բակալավրի և մագիստրոսի աստիճաններում գրեթե կրկնվում են, ուսումնական պլաններում սակավ են առանձին առարկաների գործնական ժամերը, ինչը խոչընդոտում է ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանը, չկա ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և գնահատման մեթոդների ընտրության և կիրառման հստակ քաղաքականություն, ՄԿԾ-ների մշակման, վերանայման և շարունակական բարելավման գործընթացին գործատուների մասնակցությունը և բուհ-գործատու երկկողմ համագործակցությունը դեռևս սաղմնային փուլում են և կարիք ունեն ինստիտուցիոնալացման: Ներքին շահակիցները ՄԿԾ-ների բարելավմանը մասնակցում են ՈՆԱ բաժնի կողմից իրականացվող հարցումների միջոցով, այնուամենայնիվ, միշտ չէ, որ հարցումների արդյունքների վերլուծությունը հանգեցրել է ՄԿԾ-ների տեսանելի բարելավման:

Ներքին և արտաքին շահակիցների, այդ թվում՝ գործատուների և շրջանավարտների հետ գործակցության մեխանիզմներն ուժեղացման կարիք ունեն: Հատկապես արտաքին շահակիցների հետ կենսունակ մեխանիզմների գործարկումն էականորեն կնպաստի ՄՈՒՀ-ի կրթական ծառայությունների որակի բարձրացմանը՝ շահակիցներին տրամադրելով ուսուցման բովանդակության համատեղ որոշման և ՄԿԾ-ների իրականացման (համատեղ դասավանդում, աշխատանքների ղեկավարում, պրակտիկաների կազմակերպում և հետազոտական ծրագրերի իրականացում) ավելի մեծ հնարավորություն:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ ՄՈՒՀ-ում առկա են ՊԴ կազմի ընտրության քաղաքականություն և կառուցակարգ: ԵՄՀ-ն ունի 43 դասախոս[1], որոնք դասավանդում են 6 ՄԿԾ-ներում: Համալսարանական մակարդակում ԵՄՀ-ն բավարարում է ՊԴ կազմով բավարարվածության օրենսդրական պահանջին, սակայն ըստ ՄԿԾ-ների այսպիսի վերլուծություն առկա չէ: Թեև նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ՄՈՒՀ-ը փորձել է կանոնակարգել ՊԴ կազմի ընտրությունն ըստ չափանիշների, ՄԿԾ-ների մակարդակում և դրանց փաթեթներում ՊԴ կազմի նկատմամբ առաջադրված պահանջները, որակավորման նկարագրիչները, պաշտոնի անձնագրերի դրույթներն ընդհանրական են, տարբերակումն արված է ըստ տարակարգերի կամ պաշտոնների և ոչ ըստ ոլորտների կամ մասնագիտացումների: ՊԴ կազմի ընտրության քաղաքականությունն անմիջականորեն չի բխում ՄՈՒՀ-ում գործող կրթական ծրագրերի իրականացման խնդիրներից, չի ապահովում դրանց իրագործման արդյունավետությունը: Դասախոսների մեծ մասը դասավանդում է մեծ թվով առարկաներ, երբեմն՝ մինչև 6-8 առարկա, ինչը հանգեցնում է դասախոսների գերծանրաբեռնվածության: Այսպիսի բեռնվածությունը խոչընդոտում է հետազոտական աշխատանքներում դասախոսների ակտիվ ներգրավվածությունը և ուսուցման գործընթացի շարունակական բարելավումը: ՄՈՒՀ-ն ունի երիտասարդ դասախոսներին խրախուսելու որոշ մեխանիզմներ, այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ում առկա չէ ՊԴ կազմի երիտասարդացմանը, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության պատճառով գերծանրաբեռնվածություն ունեցող դասախոսներին փոխարինելուն ուղղված հատուկ քաղաքականություն, ինչը խոչընդոտում է դասախոսական կազմի և ուսումնական գործընթացի իրականացման կայունությունը: Ավելին, քանի որ դասախոսների աշխատավարձերը ձևավորվում են ուսանողների վարձավճարներից, դիմորդների նվազման դեպքում, ԵՄՀ-ն կկանգնի լավագույն դասախոսներին կորցնելու վտանգի առջև: Բացի ուսումնական գործընթացում առկա գերբեռնվածությունից, ՊԴ կազմի անդամների մի մասը նաև համատեղում է այլ, վարչական կամ գիտաուսումնական գործառույթներ, տարբեր մասնագիտացումներ ունեցող դասախոսները ներգրավվում են գոյություն ունեցող երեք ամբիոնների կազմում՝ Իրավագիտություն, Օտար լեզուներ և Կառավարում: Այս հանգամանքը կարող է խոչընդոտել մասնագիտական բովանդակային կենտրոնացումն ամբիոններում: Հետևաբար, ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետության բարձրացման վրա դրականորեն կարող է անդրադառնալ ներքին կառուցվածքային այնպիսի փոփոխությունը, որը կթիրախավորի ընդհանուր գործառույթների իրականացումը և ոչ բովանդակային միավորումը (օրինակ՝ առանձնացված ամբիոնների փոխարեն ունենալով առանձին ՄԿԾ-ի համար պատասխանատուների ինստիտուտը): Փորձագիտական խումբը նաև կարծում է, որ ՄՈՒՀ-ի համար առանձնակի նպաստավոր կլիներ վերանայել դասախոսի գնահատման ներկայիս համակարգը և վարկանշավորումը և կապակցել այն վերապատրաստման կարիքների հետ՝ միևնույն ժամանակ սահմանելով «կարիք - նպատակային վերապատրաստում - ակնկալվող արդյունք - արդյունքի գնահատում» պատճառահետևանքային շղթան:

---

[1] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

ՄՈՒՀ-ը զգալի ներդրում է կատարել՝ ապահովելու ուսուցման կազմակերպումը պատշաճ լսարանային պայմաններում, ՄՈՒՀ-ն ունի համակարգիչներով և պրոյեկտորներով հագեցած 2 լսարան, գրադարան, իսկ մարզադահլիճի նորոգման և կահավորման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են: ՄՈՒՀ-ը հատկացրել է միջոցներ և վերանորոգել է նոր հարկ՝ ապահովելու լսարաններ և լաբորատորիաներ նորաստեղծ Ֆարմացիա ՄԿԾ-ի համար: Գոյություն ունեցող ուսումնամեթոդական բազան հնարավորություն է տալիս պարապմունքները կազմակերպել մեծ և փոքր խմբերով՝ կախված նպատակներից և խնդիրներից: Առկա է դատախաղեր կազմակերպելու համար կահավորված լսարան: Փորձագիտական խումբը փաստում է, որ ԵՄՀ-ում ընդհանուր առմամբ առկա է ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա: Միևնույն ժամանակ, անհրաժեշտություն կա համալրելու գրադարանային ֆոնդը ժամանակակից գրականությամբ, տրամադրել ընդլայնված հասանելիություն գիտական շտեմարաններին, ինչպես նաև ապահովել հասանելիություն ազգային և միջազգային վիճակագրական տվյալների և փաստաթղթերի բազաներին՝ ուսանողների էմպիրիկ հետազոտական գործունեության աջակցման նպատակով:

Համալսարանի ռազմավարության կարևորագույն նպատակներից է ուսանողների թվաքանակի աճը: Ուստի ՄՈՒՀ-ը Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ իրականացնում է մի շարք միջոցառումներ (փոխանցելի հմտությունների ձևավորմանը միտված կարճաժամկետ դասընթացներ, հանդիպումներ և այլն) ավագ դպրոցների աշակերտների համար, որոնք միտված են դիմորդների ներգրավմանը և ԵՄՀ-ի մասին տեղեկատվության տարածմանը: Ուսանողների հավաքագրման նպատակով ՄՈՒՀ-ը նաև տեղեկություններ է տարածում սոցիալական ցանցերում, տպագրում է բուկլետներ, տեղադրում է տեղեկություններ Հայաստանի բուհերի տեղեկատուի մեջ, պատրաստում գովազդային վահանակներ և այլն: Փորձագիտական վերլուծությամբ պարզ է դառնում, որ ՄՈՒՀ-ը, լինելով ավելի մեծ համալիրի՝ «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի մի մասը, օգտվում է նաև իր վարժարանից ուսանողների՝ ՄՈՒՀ-ում կազմակերպվող քննությամբ հեռակա բաժին ընդունվելու հնարավորությունից: Բացի այդ, փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների մուտքը ՄՈՒՀ հիմնականում հեռակա ուսուցման ձևն է, այնուհետ՝ ամբողջական տեղափոխումը հեռակայից առկա կրթաձև: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այս աշխատակարգն այն առումով, որ փաստորեն հնարավոր է դառնում ներգրավվել առկա կրթաձևում՝ առանց հանձնելու համապատասխան միասնական քննությունները: ՄՈՒՀ-ի՝ բարձրագույն կրթական ծառայությունների շուկայում ավելի կայուն դիրքավորման համար խիստ նպաստավոր կլիներ հստակ սահմանագծել և տարբերակել կրթաձևը ՄԿԾ-ներում, մշակել առանձին ՄԿԾ-ներ յուրաքանչյուրի համար՝ միևնույն ժամանակ, օրենքով սահմանված կարգով, հիմնավորելով յուրաքանչյուր կրթաձևում ուսանողների բեռնվածությունն ըստ առաջադրանքների, ինքնուրույն և անհատական աշխատաձևերի:

Դրական է, որ ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր: Իրականացված հարցումների քանակական վերլուծությունից պարզ է դառնում, որ ուսանողներն ունեն խիստ բարձր

բավարարվածություն ՄՈՒՀ-ի տրամադրած կրթությունից և այլ օժանդակ ծառայություններից: Փորձագիտական խումբը գտնում է, որ բավարարվածության այսպիսի բարձր մակարդակը վկայում է ուսանողների կողմից սեփական գնահատականին քննական մտածողության դիրքերից չմոտենալու, համեմատության եզրեր չունենալու և հավանական բարելավումների հեռանկարներ չտեսնելու մասին: Ուստի փորձագիտական խումբը համարում է, որ ՄՈՒՀ-ի համար կենսականորեն կարևոր է ձեռնարկել ամեն հնարավորը՝ խթանելու ուսանողների քննական մտածողությունը, քանի որ այդ պարագայում ուսանողները հանդես կգան որպես ՄՈՒՀ-ի առավել հուսալի դաշնակիցը բարեփոխումների ճանապարհին: Այլապես, ուսանողների շրջանում իրենց կրթության բոլոր կողմերից բավարարվածության այսպիսի բարձր մակարդակը հնարավորություն չի տալիս ՄՈՒՀ-ին հարցումների արդյունքների հիման վրա ընտրել բարելավումների հստակ գործողություններ և իրականացնել նպատակային պլանավորում:

Ողջունելի է, որ ուսանողների հետ աշխատանքում բուհն իրականացնում է ուսանողների խորհրդատվություններ և ուսանողների ունեցած խնդիրների լուծման նպատակով հանդիպումներ ինչպես աշխատանքային կարգով՝ հընթացս, այնպես և համապատասխան գրաֆիկով կամ ըստ նախնական պայմանավորվածության: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ լինելով փոքր ՄՈՒՀ, ԵՄՀ-ն կարևորում է ուսանողների հետ անմիջական շփումները, ինչը և բարձր է գնահատվում ուսանողների կողմից: Այս համատեքստում ՄՈՒՀ-ում ուսանողների խնդիրներով զբաղվող երկու առանձին կառույցների առկայությունը կարելի է համարել կրկնական, ինչը հանգեցնում է անհարկի ֆորմալության, ուստի ՄՈՒՀ-ի համար առավել շահեկան կլիներ բացառել այսպիսի կրկնականությունը՝ ի շահ ուսանողների հետ ավելի բովանդակահեն շփումների:

Հավատարմագրման նախորդ գործընթացից հետո ՄՈՒՀ-ը վերանայել է իր հետազոտականության գործունեությունը՝ թիրախավորելով կիրառական հետազոտությունները: Այս նպատակով ՄՈՒՀ-ը սահմանել է մի շարք խթանիչ մեխանիզմներ, օրինակ՝ ներքին դրամաշնորհները, սեփական «Բանքերի» ստեղծումը: Փորձագիտական թիմը ողջունում է այն, որ հետազոտողներին խրախուսում են հետազոտություն իրականացնել օտարերկրյա գործընկերների մասնակցությամբ, գործում է ներհամալսարանական դրամաշնորհային համակարգ, մեծացել է հրատարակությունների թվաքանակը, ինչպես նաև այն, որ համալսարանը որոշակի քայլեր է ձեռնարկում՝ ուժեղացնելու հետազոտական տարրը կրթության գործընթացում: Այդուհանդերձ, նորաստեղծ բոլոր մեխանիզմները բարելավման կարիք ունեն բովանդակային և ընթացակարգային տեսանկյունից՝ ապահովելու, օրինակ, ներքին դրամաշնորհների արդյունավետությունը և ներգրավված հետազոտողների պարտականությունների հստակությունը, ԵՄՀ «Բանքերում» տպագրվող հետազոտությունների բարձր որակը և ճանաչելիությանը:

ՄՈՒՀ-ում փորձ է արվել սահմանել հետազոտական ուղղությունները, այնուամենայնիվ, ընտրված հետազոտական ուղղությունները պայմանավորված են ամբիոնների ներկայիս ներուժով, հաճախ միտված չեն բուն կիրառական հետազոտականությանը: Փորձագիտական խմբի վերլուծություններից ակնհայտ է նաև, որ ՄՈՒՀ-ի ՊԴ կազմը դեռևս չի կատարում կիրառական հետազոտություններ:

Դասախոսների և ուսանողների կողմից իրականացվող հետազոտությունները հիմնականում միտված են երկրորդային աղբյուրների ուսումնասիրությանը և նոր գիտելիք չեն ստեղծում: Այս իմաստով ՄՈՒՀ-ի համար կենսականորեն կարևոր է առանձնակի ուշադրություն դարձնել ակադեմիական ազնվության սկզբունքների պահպանմանը: ՄՈՒՀ-ի համար խիստ շահեկան կլիներ սեփական տեսլականի դիրքերից սահմանել կիրառական հետազոտությունների ուղղությունները՝ ընտրելով իր պրոֆիլային ՄԿԾ-ներին համահունչ, սակայն միևնույն ժամանակ ՀՀ-ում առավել պահանջարկված ուղղություններ, համագործակցել աշխատաշուկայի, ուսանողներին պրակտիկայի շրջանակներում ընդունող կազմակերպությունների՝ հետ, տեսանելի դարձնել իր հետազոտությունը նախ ՀՀ-ում, ապա միջազգային հետազոտական հարթակներում: Փորձագիտական խումբը կարծում է, որ ներկայումս ՄՈՒՀ-ի կողմից ներկայացվող հետազոտական արդյունքի որակը թույլ չի տալիս դիտարկել դրա միջազգայնացման հնարավորությունները, հատկապես՝ ազդեցության բարձր գործակից ունեցող պարբերականներում դրանց տպագրությանը: Առհասարակ ՄՈՒՀ-ում հետազոտության միջազգայնացման գործողությունները սահմանափակ են, ուղղված չեն արդի միջազգային գիտելիքի ներկրմանը: Փորձագիտական խումբը կարծում է, որ ՄՈՒՀ-ի համար էական է իրատեսական նպատակների և թիրախների սահմանումը: Հետազոտական նախագծերի միջոցով ուսուցման աշխատակարգը լայն տարածում չունի: ԵՄՀ-ի համար բարենպաստ կլիներ հետազոտության և ուսուցման ավելի սերտ փոխկապակցվածությունը ոչ միայն հետազոտական նախագծերի միջոցով ուսուցման, այլև ՊԴ կազմի կողմից սեփական դասավանդման աշխատակարգերի վերաբերյալ հետազոտության (action research), դրա հիման վրա դասավանդման որակի բարելավում ապահովելու իմաստով:

ԵՄՀ-ի անվանումն իսկ վկայում է միջազգային կապերի և համագործակցության ոլորտում ունեցած հավակնությունների մասին: ՄՈՒՀ-ը նաև մշակել է առանձին միջազգայնացման ռազմավարություն՝ սահմանելով բավականին բարձր թիրախներ: ՄՈՒՀ-ը ջանքեր է գործադրում տարբեր միջազգային հարթակներում ներկայացված լինելու ուղղությամբ: Մասնավորապես, ՄՈՒՀ-ը կարևորում է տարբեր կոնսորցիումային ձևաչափերով համագործակցությունները, արտերկրի առանձին ՄՈՒՀ-երի հետ համաժողովների կամ սեփական փորձի շարադրման աշխատանքները: Ներքին շահակիցների համար օտար լեզուների դասընթացների պլանավորմամբ՝ ՄՈՒՀ-ը նաև կարևորում է ուսանողների և ՊԴ կազմի համար փոխանակման ծրագրերը: Այս համատեքստում ՄՈՒՀ-ի շահակիցներն առանձնակի ընդգծեցին փոխանակման ծրագրերին դիմելու արդար և թափանցիկ ընթացակարգերից և հավասար հասանելիությունից իրենց բավարարվածությունը: ՄՈՒՀ-ը քայլեր է ծավալել՝ ներգրավելու օտարերկրյա ուսանողներ «Ֆարմացիա» նորաբաց ՄԿԾ-ում: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի միջազգայնացման հավակնություններն այս պահին դեռևս չեն համապատասխանում նրա ունեցած կարողություններին, քանի որ օտար լեզվով առաջարկվող իրական դասընթացները և դրանք անգլերենով վարելուն պատրաստ ՊԴ կազմի անդամները փոքրաթիվ են: ՄԿԾ-ների միջազգային բենչմարքինգն արված է ՄՈՒՀ-ի կարողությունների հետ ոչ համադրելի արտերկրյա համալսարանների հետ, իսկ սա սահմանափակում է իրական շարժունության և բովանդակային համագործակցության հնարավորությունները: ՄՈՒՀ-ի

համար միջազգային կապերի և համագործակցությունների ամրապնդման տեսանկյունից կարևոր է համադրելի կարողություններով ՄՈՒՀ-երի հետ բենչմարքինգը և համագործակցությունը՝ որպես մեկնարկ հետագա աստիճանական զարգացման համար: Կոնսորցիումների գործընկերների հետ կապերի ամրապնդումը շահեկան կարող է լինել ՊԴ կազմի և ուսանողների համար փոխանակման հնարավորությունների իմաստով, սակայն ոչ իր գործունեության համար հավակնությունների որոշման տեսանկյունից:

ՄՈՒՀ-ի կառավարման մոդելն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք իրենց հետագա ազդեցությունն են թողնում կառավարման բոլոր գործառույթների վրա: ՄՈՒՀ-ը «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի մի մասն է, և ՄՈՒՀ-ի ներկայիս կառավարման համակարգը բնորոշ է մասնավոր, բիզնես մոդելով գործող համալսարաններին, որոնք ունեն հիմնադիրների խորհուրդ և կառավարման խորհուրդ: Հավատարմագրման նախորդ գործընթացի արդյունքում ստացված խորհրդատվությունների հիման վրա ՄՈՒՀ-ը քայլեր է կատարել կանոնադրության լրամշակման, կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության իրավական փաստաթղթավորման, ռազմավարական ծրագրի լրամշակման ուղղությամբ: Կատարվել են մի շարք կառուցվածքային փոփոխություններ՝ ապահովելու ռազմավարական նպատակների իրականացումը: ՄՈՒՀ-ի գործառնություններն իրականացվում են հիերարխիկ կառուցվածքով ներկայացող մի շարք ստորաբաժանումներով և միայն Կառավարման խորհրդին հաշվետու մի քանի կառույցներով: ՄՈՒՀ-ը չունի ֆակուլտետներ և ներկայանում է ամբիոններով. կառուցվածքում պատկերված մի շարք ամբիոններ չեն գործում: Կառուցվածքային որոշ միավորներ ունեն կրկնական գործառույթներ, իսկ երբեմն միևնույն անձինք իրականացնում են մի քանի գործառույթ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի ռեսուրսների պլանավորման և կառավարչական գործողությունների արդյունավետությունն ու նպատակայնությունը ըստ ՌԾ-ի զգալիորեն կաճեն, եթե ՄՈՒՀ-ի ռեսուրսների պլանավորումն իրականացվի ՍՊԸ-ի այլ միավորներից զատ և ըստ ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների: ՄՈՒՀ-ի գործունեության վրա շահեկանորեն կանդրադառնա հստակ և փոխկապակցված երկարաժամկետ-միջնաժամկետ-կարճաժամկետ պլանավորման մեխանիզմի ներդնումը, որտեղ միջնաժամկետ պլանը կծառայի երկարաժամկետ նպատակների ճշգրտմանը:

ՄՈՒՀ-ի կառավարչական որոշումներում ներքին շահակիցների մասնակցությունն ապահովվում է կոլեգիալ մարմիններում նրանց ներկայացվածությամբ, սակայն արտաքին շահակիցների՝ այսպիսի որոշումներում մասնակցայնությունը թույլ է և անուղղակի: Կառավարչական գործողությունների բարելավմանն ուղղված գնահատման գործողություններում ներքին շահակիցների մասնակցությունը մեծ է, այնինչ արտաքին շահակիցների մասնակցությունը և արտաքին գործոնների վերլուծությունը սահմանափակ են: Այս տեղեկատվության սուղ քանակությունը, ինչպես նաև ներքին շահակիցների շրջանում անցկացված հարցումների տվյալների վերլուծությամբ ստացված փոքրաթիվ որակական եզրահանգումները չեն նպաստում ՄՈՒՀ-ի կառավարչական գործառույթների որակական բարելավմանը: Այս առումով ՄՈՒՀ-ի համար խիստ շահեկան կլիներ ապահովել արտաքին շահակիցների ավելի մեծ մասնակցություն կառավարչական որոշումների կայացմանը, բոլոր

շահակիցների մասնակցությանը կառավարչական գործընթացների գնահատմանը, այդ գնահատման արդյունքների նպատակային կիրարկմանը՝ հանուն կառավարչական գործընթացների բարելավման:

Որակի ընդհանրական կառավարման սկզբունքի կիրառումը ՄՈՒՀ-ում նկատելի է բազմամակարդակ պլանավորման գործողությունների միջոցով: Փորձագիտական խումբը փաստում է, որ որակի ներքին ապահովման մեխանիզմները ներդրված են, բազմակի են կատարվող հարցումներն ու գնահատումները: Մշակվում են մի շարք ռազմավարություններ և հայեցակարգային շրջանակներ: Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի գործընթացների շարունակական բարելավումն ապահովելու համար մշակված և ներդրված մեխանիզմների բովանդակային, պարբերական և նպատակային գործարկումը հրամայական է: Այս պահին ՄՈՒՀ-ում թույլ է որակի ապահովման մեխանիզմներով դուրս բերված տվյալների, դրանց գնահատման և հետագա բարելավման գործողությունների միջև կապակցվածությունը: ՄՈՒՀ-ին անհրաժեշտ է կենտրոնանալ իր ՈՆԱ մեխանիզմների գործարկման, այդ իսկ մեխանիզմների շարունակական բարելավումների վրա և ծառայեցնել ՈՆԱ-ն ՄՈՒՀ-ի կողմից սեփական նախաձեռնությամբ, իր առաքելությանն ու տեսլականին միտված զարգացման ուղու ուրվագծմանը:

Փորձագիտական խմբի փաստում է, որ թեև ՄՈՒՀ-ին հաջողվել է ներդնել որակի ապահովման մեխանիզմները, ստեղծել հիմնարար փաստաթղթերը, ընթացակարգերը, որակի մշակույթը դեռևս ամբողջապես չի դարձել ՄՈՒՀ-ի արժեհամակարգի մի մասը: Սրա մասին են վկայում Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից բազմաթիվ և բազմապիսի հարցում-գնահատումների արդյունքների՝ քանակական տվյալից որակական եզրահանգումների փոխարկման բացակայությունը և դրանց կիրառման ուղղությամբ բացերը՝ բարելավման և այլ գործողություններ պլանավորելիս: ՄՈՒՀ-ը գիտակցում է, որ որակի մշակույթի լիարժեք յուրացումը կախված է բոլոր դերակատարների շահագրգռությունից և որակի ապահովման գործողություններում ներգրավվածության բարձր մակարդակից: Ուստի, ՄՈՒՀ-ի հետագա քայլերը պետք է կողմնորոշված լինեն դեպի բոլոր շահակիցների ակտիվ և բովանդակային ներգրավումը որակի ապահովման գործողություններին:

Փորձագիտական խումբի համար նկատելի է, որ ՄՈՒՀ-ի ՈՆԱ բաժինն ունի բավարար կարողություններ՝ արդյունավետ կիրարկելու ներդրված մեխանիզմները: Բացի այդ, տեսանելի է, որ նախորդ և սույն գնահատման գործընթացների միջև ընկած ժամանակահատվածում ՄՈՒՀ-ն արել է առավելագույնը՝ որակի ներքին ապահովման պակասող փաստաթղթերի և ընթացակարգերի ստեղծման և ներդրման համար, սակայն հնարավորություն չի ունեցել կյանքի կոչել այդ ընթացակարգերը լիարժեք կերպով և բովանդակային կենտրոնացմամբ: Եվ թեև ինքնավերլուծության ուսումնասիրությամբ և այցի ընթացքում փորձագիտական խումբը պարզեց, որ ՈՆԱ համակարգի փոփոխություն և բարելավում ՈՆԱ կենտրոնը չի նախատեսում, խումբը գտնում է, որ ՈՆԱ համակարգի շարունակական և հետևողական որակի ապահովումն անհրաժեշտ է՝ որպես ՄՈՒՀ-ի բոլոր գործընթացների և ՈՆԱ համակարգի արդիականության և արդյունավետության երաշխիք:

Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ներքին ապահովման գործողություններում ՄՈՒՀ-ն արդեն պետք է թեակոխի բովանդակամետ հետազոտությունների ժամանակաշրջան, երբ Որակի ապահովման մեխանիզմները պետք է ծառայեն ոչ թե ապացուցողականությանը կամ հավատարմագրման ընթացքում գնահատվող դրույթների հավաստմանը, այլ բացառելով կրկնական կարգերը, ընթացակարգերը, հարցումները և թողնելով միայն ամենաանհրաժեշտը, կկենտրոնանան կարիքների և խնդիրների հայտորոշման, դրանց ուղղությամբ գործողությունների պլանավորման, իրականացման, գնահատման և ստուգման վրա:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Զարգացման ռազմավարական ծրագրի և դրա իրագործման գործողությունների պլանի առկայությունը,
2. Մատչելի կրթական ծառայություններ մատուցելու միջոցով ՀՀ-ում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը նպաստելը,
3. Վերանայված՝ վերջնարդյունքների սահմանմամբ ՄԿԾ-ների առկայությունը,
4. ՄԿԾ-ների վերջնարդյունքների համահունչությունը նմանատիպ այլ կրթական ծրագրերին,
5. Փոքր լինելուց բխող բոլոր առավելությունները՝ յուրաքանչյուր ուսանողին անհատական մոտեցում, կառավարման տարբեր օղակների հասանելիություն ուսանողին, փոխանակման ծրագրերին մասնակցելու մեծ հնարավորություններ ՊԴ կազմի և ուսանողների փոքրաթիվ լինելու շնորհիվ,
6. Ուսանողների մասնակցությունը կառավարման որոշումներին և գործընթացներին,
7. Շահակիցների կողմից բավարարվածության բարձր մակարդակը գրեթե բոլոր գործառույթների մասով,
8. Սեփական շրջանավարտներով ներկայանալու և հանրության հետ կապերի միջոցով իր գործունեությունը հանրահռչակելու կարողություն,
9. Հասարակության առջև կրած պատասխանատվության բարձր զգացում և հանրությանը մատուցվող բազմապիսի ծառայություններ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Հաստատության ոչ հստակ դիրքավորումը ՀՀ կրթական ծառայությունների շուկայում՝ ՌԾ-ի առաքելության ընդհանրական և մասշտաբային լինելու պատճառով,
2. Կառավարման համակարգի օղակների գործառույթների ոչ հստակ տարանջատումը և ՄՈՒՀ-ի ռեսուրսների հատկացումները ռազմավարական նպատակների հետ թույլ փոխկապակցվածությամբ,
3. Արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը կառավարման և կրթական գործընթացներում,
4. Մասնագիտության կրթական ծրագրերում ներկայացված վերջնարդյունքների ընդհանրականությունը և ուսուցման և գնահատման մեթոդների հետ թույլ կապակցվածությունը,

5. ՊԴ կազմի ընտրության, գնահատման և կայունության ապահովման քաղաքականության և դրա իրականացման մեխանիզմների անկատարությունը,
6. Առաքելությամբ սահմանված կիրառական հետազոտությունների բացակայությունը և նոր գիտելիքի ստեղծմանն ուղղված աշխատակարգերի պակասը,
7. Ակադեմիական ազնվության սկզբունքներին խստորեն չհետևելը,
8. Գրադարանային ռեսուրսների ժամանակակից մասնագիտական գրականությամբ թույլ հագեցվածությունը,
9. Միջազգայնացման գործընթացներում թիրախավորված գործողությունների պակասը,
10. ՄՈՒՀ-ի գործընթացների մեծ մասի հիմնականում ՊԻԳԲ շրջափուլի առաջին երկու փուլերում գտնվելը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. ՄՈՒՀ-ի տեղը կրթական ծառայությունների շուկայում որոշարկելու նպատակով իրատեսորեն հստակեցնել առաքելությունը՝ շեշտադրելով ՄՈՒՀ-ի ուժեղ կողմերը,
2. ՄՈՒՀ-ի զարգացման ընթացքը գնահատելու և մշտադիտարկելու նպատակով՝ մշակել ռազմավարական նպատակների իրականացման չափելի վերջնարդյունքներ, որոնք փոխկապակցված կլինեն իրագործման ժամկետների հետ, սահմանել քանակական և որակական գնահատման հստակ ցուցիչներ,
3. ՄՈՒՀ-ի նպատակների և խնդիրների՝ աշխատաշուկայի պահանջներին առավելագույն մոտարկման նպատակով ռազմավարական ծրագրի իրագործման ժամանակ ակտիվացնել արտաքին շահակիցների (հատկապես՝ գործատուների) ընդգրկվածությունը և նրանց հետ հետադարձ կապը:

Կառավարումն ու վարչարարությունը

4. ՄՈՒՀ-ի գործունեության և դրա կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով վերանայել կառավարման գործող համակարգը՝

   ա) առանձնացնելով ՄՈՒՀ-ի կառավարման գործընթացները և ռեսուրսները հիմնադիր ընկերության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից (վարժարանից, հյուրատնից և այլն),

   բ) հստակեցնելով կառավարման համակարգի աստիճանակարգությունը, առանձին միավորների ենթակայությունները,

   գ) վերանայելով կառավարման առանձին օղակների գործառույթները՝ բացառելու դրանց կրկնությունները,
5. Կառավարման համակարգի ստորաբաժանումների գործունեության անընդհատության և միևնույն անձի՝ տարբեր մարմիններում ներկայացված լինելու պատճառով շահերի բախումից խուսափելու նպատակով ՄՈՒՀ-ի

կառուցվածքային ստորաբաժանումներն ապահովել անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով,

6. Ներդնել ՄՈՒՀ-ում պլանավորման, այն է՝ ռիսկերի պլանավորման, միջանկյալ արդյունքների գնահատման, պլանների ճշգրտման մեխանիզմներով կանոնակարգված համակարգ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածների համար:
7. Տարբեր մասնագիտական ուղղվածությամբ դասախոսներին մեկ ամբիոնում միավորելու աշխատակարգից խուսափելու նպատակով վերանայել ըստ ՄԿԾ-ների ամբիոնների ձևավորման մոտեցումը՝ դիտարկելով ՄԿԾ-ների պատասխանատուի ինստիտուտի ներդրման հնարավորությունը:

Մասնագիտության կրթական ծրագրերը

8. ՄԿԾ-ների արդիականացման և ուսանողների շարժունությունը խթանելու նպատակով՝ ապահովել ՄԿԾ-ների վերջնարդյունքների, բովանդակության և ուսուցման ու գնահատման սերտ համապատասխանությունը ՈԱՇ նկարագրիչների, ՀՀ-ի և արտերկրյա համանման ՄԿԾ-ների հետ,
9. ՄԿԾ-ների վերջնարդյունքներին համապատասխանեցնել ուսումնական պլանով սահմանված կրթական բաղադրիչների վերջնարդյունքները, բովանդակությունը և մեթոդները,
10. Գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերման նպատակով՝ բազմազանեցնել ՄԿԾ-ների դասընթացները և համալրել գործնական բաղադրիչները,
11. ՄԿԾ-ների՝ աշխատաշուկայի պահանջների հետ համապատասխանեցման նպատակով՝ ապահովել գործատուների և շրջանավարտների գործուն մասնակցությունը ՄԿԾ-ների մշակման, իրականացման, գնահատման և բարելավման ընթացքում:

Ուսանողները

12. Օրենսդրական պահանջներին համապատասխանության և գործունեության թափանցիկության ապահովման նպատակով՝ հստակեցնել ուսանողների ընդունելության մեխանիզմները և վերանայել առկայի համալրման մեխանիզմը,
13. Ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների արդյունավետ կիրառելիության նպատակով՝ իրականացնել ՊԻԳԲ շրջափուլն ամբողջությամբ, ուսանողներին տեղեկացնել հարցումների արդյունքների, դրանց վերլուծությամբ ստացված եզրակացությունների և դրանցից բխող բարելավումների մասին,
14. Ուսանողների հետազոտական գործունեության խթանման նպատակով՝ վերանայել ՈւԳԸ-ի նպատակահարմարությունը որպես առանձին կառուցվածքային միավոր և կանոնակարգել ուսանողական հետազոտական միավորի գործունեությունը՝ շոշափելի արդյունքներին հետամուտ,
15. Ընդլայնել շրջանավարտներին միավորող կառույցի՝ Շրջանավարտների միության գործունեության շրջանակները՝ ուսանողների կարիերային նպաստելու և մատուցվող կրթական ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. ՄԿԾ-ների կարիքների և ՊԴ կազմի որակավորումների միջև փոխակապցվածության ապահովման նպատակով վերաձևակերպել որակավորման նկարագրիչներն ըստ մասնագիտությունների և ուղղությունների, սահմանել ՊԴ կազմի ընտրության չափանիշներ ըստ ՄԿԾ-ների նպատակների և կարիքների:
17. ՄՈՒՀ-ի չափերի և ՊԴ կազմի թվի հաշվառմամբ վերանայել ՊԴ կազմի բաշխումն ըստ ՄԿԾ-ների համար պատասխանատու ամբիոնների և ներդնել ՄԿԾ-ի պատասխանատուի ինստիտուտը՝ ՄԿԾ-ներում բովանդակային և մեթոդական զարգացումներն ավելի բնականոն դարձնելու նպատակով,
18. ՊԴ կազմի գործունեության արդյունավետության և դասավանդման բարձր որակի ապահովման նպատակով՝ սահմանել առավելագույն՝ առարկաների դասավանդման քանակ մեկ դասախոսի համար (3-4),
19. ՄՈՒՀ-ում դասավանդման որակի բարելավման նպատակով՝ ՊԴ կազմի վերապատրաստումները կազմակերպել ՊԴ կազմի գնահատումներից բխող կոնկրետ կարիքների հիման վրա,
20. ՊԴ կազմի գնահատման և դրա հետևանքների անաչառության և թափանցիկության ապահովման նպատակով հստակեցնել դասախոսին գնահատելու մեխանիզմները և դրանցից բխող հետևանքները,
21. ՄՈՒՀ-ի ՊԴ կազմի կայունության ապահովման նպատակով սահմանել ՊԴ կազմի երիտասարդացման, ՀՀ և միջազգային հարթակներում լավ ցուցանիշներ ունեցող ՊԴ կազմ ներգրավելու հատուկ քաղաքականություն,
22. ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով բացառել ՄՈՒՀ-ի վարչական աշխատակազմի ներգրավումը «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի այլ հաստատությունների գործունեության մեջ:

Հետազոտությունը և զարգացումը

23. ՄՈՒՀ-ի կրթության որակի բարելավման, միջազգային ճանաչման և տեսանելիության բարձրացման նպատակով վերանայել կիրառական հետազոտությունների ուղղությունները, կենտրոնացումը, դերը և նշանակությունը,
24. ՄՈՒՀ-ի կողմից շոշափելի հետազոտական արդյունքի ստեղծման համար սահմանել իրատեսական նպատակներ՝ հստակ նախանշված ժամկետներով և թիրախներով, կապակցել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության ռազմավարական պլանավորումը ստորաբաժանումների պլանավորման գործողություններին,
25. Հետազոտական կարողությունների հզորացման նպատակով կենտրոնանալ ՊԴ կազմի՝ հետազոտական կարողությունների, միջազգային չափանիշներին բավարարող հետազոտական գործունեության համար անհրաժեշտ միջոցառումների և վերապատրաստումների վրա,

26. ՄՈՒՀ-ի հետազոտության որակական բարելավման նպատակով օգտագործել փոխանակման հնարավորությունները նաև հետազոտական նպատակներով, ակտիվացնել ուսանողական հետազոտությունը՝ ապահովելով դրա օրիգինալությունը և նոր գիտելիքի ստեղծումը,
27. Նոր գիտելիքի ստեղծման և որակյալ հետազոտության ապահովման համար ներդնել գրագողության դեմ պայքարի կուռ կառուցակարգեր, սահմանել ակադեմիական ազնվության սկզբունքների խախտման դեպքում անզիջում պատժամիջոցներ,
28. Հետազոտական արդյունքի լայն ճանաչման նպատակով բազմազանեցնել հետազոտական ոլորտում միջազգայնացման հնարավորությունները՝ սեփական կարողությունների և մասշտաբների իրատեսական գնահատմամբ և համապատասխան գործընկեր և համագործակից հաստատությունների ներգրավմամբ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

29. ՄՈՒՀ-ի ռեսուրսներով շարունակական ապահովման նպատակով տարբերակել ՄՈՒՀ-ի եկամուտների աղբյուրները, սահմանել ֆինանսական ներհոսքերի կրճատման պայմաններում ՄՈՒՀ-ի վարվող քաղաքականությունը՝ կշռադատելով սպասվող ռիսկերը,
30. ՄՈՒՀ-ի ֆինանսական ինքնաբավության պատկերի հստակեցման, «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի մյուս միավորների՝ ՄՈՒՀ-ի միջոցներից խաչաձև սուբսիդավորման հավանականությունը բացառելու նպատակով այդ միավորների մուտքերն ու ծախսերը չներառել ՄՈՒՀ-ի բյուջեում,
31. ՄՈՒՀ-ում անվտանգության ապահովման նպատակով ներդնել քարտային կամ համարժեք այլ անցագրային համակարգ, ապահովել անվտանգության ծառայողի կողմից տեսախցիկներով առցանց վերահսկումը,
32. ՄՈՒՀ-ում պատշաճ մակարդակով ապահովել ուսանողների առողջական վիճակի մշտադիտարկման և անհրաժեշտության դեպքում առաջին օգնության ցուցաբերման գործընթացները[2]:

Հասարակական պատասխանատվությունը

33. ՄՈՒՀ-ի գործունեության մասին թափանցիկ հաշվետվողականության նպատակով վերանայել հաշվետվողականության ներկայիս կառուցակարգը և ապահովել քանակական և որակական գնահատումների մեկտեղումը և փոխլրացումը,
34. Շահակիցների հետ արդյունավետ հաղորդակցության նպատակով իրականությանը համապատասխանեցնել ՄՈՒՀ-ի գործունեության մասին տեղեկատվության բոլոր միջոցներում ներառված բովանդակությունը,
35. ՄՈՒՀ-ի միջազգային ճանաչման ընդլայնման նպատակով կայքի ռուսալեզու և անգլալեզու էջերում զետեղել համակողմանի և որակյալ տեղեկատվություն:

---

[2] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

36. ՄՈՒՀ-ի գործունեության միջազգայնացման խթանման նպատակով վերանայել հավակնություններն ու սահմանված նպատակներն ըստ ռեսուրսների և կարողությունների,
37. ՄՈՒՀ-ի միջազգային գործունեության բազմազանեցման նպատակով դիտարկել ոչ միայն կրթական, այլև հետազոտական համագործակցության հնարավորությունները համադրելի կարողություններով արտերկրյա ՄՈՒՀ-երի հետ:

Որակի ներքին ապահովման համակարգը.

38. Որակի ներքին ապահովման համակարգը ՄՈՒՀ-ի արդյունավետ գործունեությանն առավելագույնս ծառայեցնելու նպատակով մշակել ՈՆԱ համակարգի գնահատման համապարփակ մեթոդաբանություն և իրականացնել ՈՆԱ համակարգի աուդիտ, մշակել կատարողականի առավել պարզ ցուցիչներ Որակի ապահովման քաղաքականության և ՈՆԱ համակարգի արդյունավետության գնահատման համար,
39. ՄՈՒՀ-ի ՈՆԱ համակարգի և գործընթացների արդիականացման նպատակով վերանայել ՈԱ ձեռնարկը և դրա բովանդակությունը համապատասխանեցնել 2015թ. Որակի ապահովման «Եվրոպական չափորոշիչների և ուղենիշերի» առաջին մասի պահանջներին՝ մասնավորապես հետազոտության և ուսանողակենտրոն ուսուցման տեսակետից,
40. ՄՈՒՀ-ի գործունեության գնահատման և բարելավման նպատակով իրականացնել ՈԱ ուղեցույցում ներառված համալսարանի գործունեության բոլոր կողմերի ներքին գնահատում, ապահովել բոլոր գործողությունների ՊԻԳԲ շրջափուլով դիտարկումը:

Դիտարկումներ

Եվրասիա միջազգային համալսարանը փորձում է ուրվագծել իր պրոֆիլը՝ հիմնվելով եվրոպական և հայկական կրթական համակարգերի փորձառության վրա: Բուհի ձեռնարկած գործողություններն ընդհանուր առմամբ համահունչ են այն ուղենիշներին և միտումներին, որոնք նկատվում են Եվրոպայի բարձրագույն կրթական տարածքում: Համալսարանն իրականացնում է այսպես կոչված Բոլոնիայի համակարգի հիմնական տարրերը: ԵՄՀ-ն իրականացնում է ՈԱՇ-ին համահունչ եռաստիճան կրթություն, որը նաև անուղղակի կերպով համահունչ է ՈԵՇ-ին, կիրառում է ԿԿՓԵՀ, տրամադրում դիպլոմի հավելված, մշակում անգլերենով դասավանդվող դասընթացներ՝ այդ թվում նաև օտարերկրյա գործընկերների մասնակցությամբ, իրականացնում ուսանողակենտրոնության գաղափարներին միտված ուսումնառություն (ըստ համալսարանի պնդման), մասնակցում ԵՄ շարժունության ծրագրերին (TEMPUS, Erasmus and Erasmus+), և ջանքեր ներդնում Եվրոպական հետազոտական տարածքում գործունեություն ծավալող գործընկերների հետ հետազոտական գործակցություն զարգացնելու ուղղությամբ:

Ըստ ԵՄՀ-ի, կրթության որակը համահունչ է որակի եվրոպական չափանիշներին, հիմնված է ստեղծագործականության և նորարարության վրա, բավարարում է աշխատաշուկայի պահանջներին: Նաև մատնանշվում է այն, որ կրթության գործընթացը միտված է ուսանողների կարիքներին. այնուամենայնիվ, ակնկալվում է, որ վերջիններս իրենց ավելի ակտիվ մասնակցությունը պետք է ցուցաբերեն համալսարանի կառավարման գործընթացներում ներգրավման միջոցով: Առաքելությունն ու ռազմավարությունը հատկապես շեշտադրում են որակի մշակույթի զարգացումը և միջազգային գործակցության խորացումը: ԵՄՀ-ն ունի առկա կառուցակարգեր, որոնք ապահովում և խթանում են որակը՝ միևնույն ժամանակ համահունչ մնալով Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների 1-ին մասին:

ԵՄՀ-ն ունի 43 դասախոս[3], որոնք դասավանդում են 6 ՄԿԾ-ներում (նս մեկը կմեկնարկի սեպտեմբերին): Ուստի, համալսարանի մարդկային ռեսուրսները և գիտական ներուժը բավական սահմանափակ են: Համապատասխան արդյունքներով ամրագրված հետազոտական անձնակազմի միջազգային ճանաչումը տպավորիչ չէ: Եթե ԵՄՀ-ի կրթական ծառայություններից օգտվողների թվաքանակը նվազի և իջեցվի աշխատավարձը, համալսարանը կկանգնի լավագույն դասախոսներին կորցնելու վտանգի առջև:

ԵՄՀ-ն խրախուսում է օտարերկրյա գործընկերների մասնակցությամբ հետազոտությունների իրականացումը, գործում է ներհամալսարանական դրամաշնորհային համակարգ, մեծացել է հրատարակությունների թվաքանակը: Բացի այդ, համալսարանը որոշակի քայլեր է ձեռնարկում՝ ուժեղացնելու գիտական տարրը կրթության գործընթացում:

---

[3] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

Միջազգայնացման դիտանկյունից անհնար է հասկանալ որոշ փաստաթղթերի միայն հայերենով հրապարակման սկզբունքը: Օրինակ՝ ՈԱ ուղեցույցն առկա է անգլերենով, մինչդեռ ՈԱ քաղաքականությունը միայն հայերեն է: Ռազմավարական ծրագրերի և ՈԱ քաղաքականության կիրառման վերաբերյալ համալսարանի չափազանց կարևոր հաշվետու զեկույցներն առկա են միայն հայերենով: Բայցեայնպես, «Հարմոնիա» միջազգային նախագծի շրջանակներում իրականացված բոլոր հանդիպումների անգլերեն օրակարգերը և վերլուծությունները կցված էին Ինքնավերլուծական զեկույցում, թեև դրանց մի մասը, օրինակ՝ համագործակից երկրներում բարձրագույն կրթության միջազգայնացման վերլուծությունը, վերաբերելի չէր ԵՄՀ-ին: Մի շարք վերապահումներ կան առ այն, որ ԵՄՀ-ի կայքն անգամ տարրական տեղեկատվություն չի տրամադրում գործընթացների որակի և դրանց արդյունքների վերաբերյալ. ներկայացված չեն ՄԿԾ-ներ և ակնկալվող վերջնարդյունքներ՝ չնայած այն հանգամանքին, որ համալսարանը նպատակ ունի և ներկայումս իրականացնում է օտարազգի ուսանողների հավաքագրում:

ԵՄՀ-ն մեծ ուշադրություն է դարձնում միջազգայնացմանը, որն ամրագրված է 2018-2023 Միջազգայնացման ռազմավարության նախագծում: Առաջին ժամանակահատվածի համար շեշտադրվում է օտարերկրյա գործընկերների թվաքանակի աճը, համատեղ ՄԿԾ-ները, ինչպես նաև ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերի առավել ուժեղացումը: Այնուամենայնիվ, այս ուղղությամբ գործողությունների մեկնարկ կամ նախապատրաստական քայլեր այս պահին դեռևս առկա չեն: Ուսումնական պլանի և կրթական բովանդակության, ինչպես նաև հետազոտության միջազգայնացմանը վերաբերող նպատակներ չեն մատնանշվել: Առկա են ուսանողներին և դասախոսներին օտարերկրյա բուհեր գործուղելու հստակ օրինակներ: Օտարերկրյա ուսանողների թվաքանակը ընդհանուր ուսանողական համակազմում փոքր է՝ ընդամենը 4%: Պլանավորվում է ուսանողներ ներգրավել Ռուսաստանից, Չինաստանից, Իրաքից, Իրանից, Հնդկաստանից և Սիրիայից: ԵՄՀ-ում միջազգայնացումը դեռ սաղմնային փուլում է: ՄՈՒՀ-ը նշում է, որ կարող է տրամադրել անգլերենով դասավանդվող մի շարք դասընթացներ, սակայն դրանց մասին փաստաթղթային տվյալներ չեն ներկայացվել, ինչպես նաև դասընթացներ վարող օտարերկրյա դասախոսներ չեն ներգրավվել: Չնայած այն հանգամանքին, որ համալսարանում իրականացվում է բենչմարքինգ, առկա չեն ուսումնական պլանի միջազգայնացման փաստեր, անգամ միջմշակութային արժեքների/հմտությունների ներմուծմամբ: Միջազգային գործընկերների ընտրությունը միշտ չէ, որ ճիշտ է: Իրականացվում են քայլեր՝ զարգացնելու գործակցությունը խոշոր համալսարանների հետ: Այդուհանդերձ, դժվար կլինի վերջիններիս փորձը տեղայնացնել ԵՄՀ-ում: Բավարար ուշադրություն չի հատկացվում փոքր համալսարանների հետ գործակցության զարգացմանը: Ներկայիս թույլ զարգացած հետազոտական ենթակառուցվածքների/նյութատեխնիկական բազայի պարագայում հետազոտության և զարգացման սահմանված ռազմավարական նպատակների իրականացումը դժվար է:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ զարգացման և միջազգայնացմանը միտված վերոնշյալ բոլոր քայլերը դեռևս ներդրման սաղմնային փուլում են, և դրանց արդյունքները, օրինակ՝ հրատարակություններ վարկանիշ (իմպակտ ֆակտոր) ունեցող գրախոսվող ամսագրերում, գրեթե աննշմարելի են միջազգային հարթակում:

Խորհրդատվություններ

- Միջազգայնացումը դնել կանոնակարգված պլանավորման հիմքերի վրա՝ այն դիտարկելով որպես ԲՈՒՀ-ի երկարաժամկետ զարգացման նախադրյալ,
- Կազմակերպել օտար լեզվով համատեղ կրթական ծրագրեր (մասնավորապես նմանատիպ օտարերկրյա ԲՈՒՀ-երի հետ՝ հրավիրելով նաև օտարերկրյա դասախոսների),
- Ակտիվացնել երկկողմ համաձայնագրերի կամ պայմանագրային հիմունքներով միջազգային կապերը (ոչ «Հարմոնիա» կամ այլ ծրագրերի շրջանակներում կոնսորցիումների ներսում)՝ հանդես բերելով այդպիսի համագործակցության նախաձեռնողականություն,
- Նպաստել ՊԴ կազմի և ուսանողների միջազգային արտագնա գիտաժողովներին մասնակցությանը՝ խթանող քաղաքականության բարելավման միջոցով,
- Նպաստել ուսանողների՝ արտադրական պրակտիկան այլ երկրների հաստատություններում անցնելու հնարավորությունների ակտիվացմանը,
- Մշակել ՄՈՒՀ-ի հետազոտական արդյունքն առևտրայնացնելուն և միջազգային շուկայում ներկայացնելուն միտված քաղաքականություն:

02 հոկտեմբեր 2018

Քրիստինե Սողիկյան
Փորձագիտական խմբի ղեկավար

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Եվրասիա միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

-**Քրիստինե Սողիկյան** - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

- **Մստիսլավ Սոխա** – Վարշավայի համալսարանի պատվավոր պրոֆեսոր, Լեհաստանի բարձրագույն կրթության հավատարմագրման պետական կոմիտեի նախկին փոխնախագահ, տնտեսագիտության դոկտոր,

-**Մարիամ Մոմջյան** – Երևանի պետական համալսարանի և Հայ-ռուսական համալսարանի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,

- **Ջոն Հայրապետյան** - Հայ-ռուսական և Հայաստանում Ֆրանսիական համալսարանների դասախոս, իրավագիտության թեկնածու,

-**Արմինե Խրոյան** – Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետ Գայանե Անանյանը:

Թարգմանությունը կատարել է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի Օտար լեզուների ամբիոնի վարիչ Զարուհի Սողոմոնյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչն ու համակարգողը, ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԵՄՀ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ԵՄՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Համալսարանի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ՄՈՒՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև քարտուղարությունն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է հինգ վերապատրաստում հետևյալ թեմաներով.

1. ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշները և չափորոշիչները,
2. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
3. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները,
4. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
5. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ԵՄՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի «Փորձաքննության իրականացման ձեռնարկով»՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

ԵՄՀ-ի ինքնավերլուծությունը

Հաստատությունն, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, 12.04.2018թ.-ին ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում պարունակում էր ընդհանրական և նկարագրական տեղեկատվություն և ի ցույց չէր դնում իրական դինամիկան նախորդ հավատարմագրումից հետո:

Նախապատրաստական այց

Նախապատրաստական այցը տեղի է ունեցել փորձագիտական այցից երկու շաբաթ առաջ փորձագիտական խմբի ղեկավարի, ՈԱԱԿ տնօրենի և փորձագիտական գնահատման գործընթացի համակարգողի մասնակցությամբ: Նախապատրաստական այցի ընթացքում համալսարանի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային քննարկումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2018թ. հունիսի 20-ից 22-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական խմբի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ՝ այցից մեկ օր առաջ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուսխմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին ներկա են գտնվել փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպումով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցները, ամբիոնի վարիչները, գործատուներն ու շրջանավարտներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, այդ թվում բաց հանդիպումը, որին մասնակցել են հետբուհական կրթություն ստացող հետազոտողները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում և ֆոկուսխմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **անբավարար և բավարար:** Ընդ որում, այդ սանդղակով համալսարանի ինքնավերլուծության գնահատումն իրականացվել է ըստ յուրաքանչյուր չափանիշի համար սահմանված առանձին չափորոշիչների, իսկ փորձագիտական զեկույցն՝ ըստ չափանիշների:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է ԵՄՀ-ի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ:

Միջազգային փորձագետը պատրաստել գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք: Փաստաթղթերն էլ թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ է ներառվել զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է ՄՈՒՀ 13.08.2018-ին:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն Եվրասիա միջազգային համալսարանն ուղարկել է ՈԱԱԿ 31.08.2018թ.: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են տեղացի փորձագետներին: Դիտողությունների ամփոփ տարբերակը թարգմանվել և քննարկվել է միջազգային փորձագետի հետ: Դիտողությունների վերաբերյալ 2018թ. սեպտեմբերի 24-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 01.10.2018թ.:

Գայանե Անանյան
Համակարգողի ստորագրություն
02 հոկտեմբեր 2018

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Եվրասիա միջազգային համալսարանը հիմնադրվել է 1996 թ-ին՝ իբրև Երևանի «Մխիթար Գոշ» միջազգային համալսարան: 2002թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության որոշմամբ ստացել է պետական հավատարմագիր, և համալսարանին տրվել է պետական նմուշի դիպլոմ շնորհելու լիազորություն: 2004թ. համալսարանը վերանվանվել է Եվրասիա միջազգային համալսարանի՝ շարունակելով իր նախկին ռազմավարությունը:

Համալսարանն իր առաքելությունը նախանշում է երեք մակարդակներում՝ ուսուցում, հետազոտություն և «հանրային ծառայություն» (հավանաբար՝ նկատի ունենալով «ծառայություն հասարակությանը»)՝ առաջնային դերակատարություն տալով արդյունավետ ուսուցման կազմակերպմանը:

Հաստատությունն իր առջև նպատակ է սահմանել ապահովել ուսումնառության որակի շարունակական բարելավում, գիտական ներուժի կայուն զարգացում, հետազոտությունների և նորարարությունների կիրառելիության ապահովում, միջազգային համագործակցության ընդլայնում, ուսումնառության համար նպաստավոր ենթակառուցվածքների և ֆինանսական անկախության ապահովում, որակի մշակույթի տարածման նպաստավոր միջավայրի ձևավորում:

Կրթություն. Այսօր ԵՄՀ-ում սովորում է շուրջ 500 ուսանող: Համալսարանում իրականացվում է բակալավրական կրթության կազմակերպում իրավագիտության, կառավարման և անգլերեն լեզու և գրականության, ինչպես նաև 2018-2019 ուսումնական տարվանից սկսած՝ ֆարմացիա մասնագիտություններով:

Բուհն իր 2014-2018 թվականների ռազմավարական ծրագրում ներկայացնում է իր առջև դրված նպատակների իրականացմանն ուղղված խնդիրները. ներդնել իրականացվող կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման, գնահատման, ինչպես նաև բուհի կողմից նոր կրթական ծրագրերի իրականացման մեխանիզմներ, ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին համակարգի ստեղծում, ներդնել որակի մշակույթի տարածմանը նպաստող կառավարման արդյունավետ մեխանիզմներ:

Հաստատությունում ներկա պահին գործում են 4 ամբիոններ, որոնք իրականացնում են 4 բակալավրական, և 3 մագիստրոսական ծրագրեր: Առաջնորդվելով 2013 թվականին «Իրավագիտություն» մասնագիտության պիլոտային ծրագրի օրինակով՝ համալսարանի մյուս բոլոր ամբիոնների համապատասխան ՄԿԾ-ները, այդ թվում՝ ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, գործող բոլոր կրթական ծրագրերը բարելավվել են՝ հիմնվելով ԵՄՀ շահակիցների կարիքների խորքային ուսումնասիրությունների, գործատուների կարծիքների և գնահատականների վրա:

Հետազոտություն. ԵՄՀ-ն իր գիտական ներուժի կայուն զարգացումը, հետազոտությունների և նորարարությունների կիրառելիությունն ապահովելու նպատակով նախատեսում է նպաստել ԵՄՀ հետազոտական աշխատանքների քանակի ավելացմանը և պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների ակտիվ ներգրավվածությանը այդ ծրագրերում, իրականացնել համալսարանի մասնակցությամբ

համատեղ հետազոտական ծրագրեր, ընդլայնել հետազոտական բաղադրիչը միջազգային համագործակցության մեջ:

Համալսարանը հավաստում է, որ իրականացնում է կիրառական հետազոտություն: Հաստատության յուրաքանչյուր բաժին ինքնավար է իր հետազոտական հետագիծը ուրվագծելու հարցում:

Միջազգայնացում. Արտաքին կապերի զարգացմանն ու միջազգայնացմանն ուղղված ՄՈՒՀ-ի ՌԾ-ով նախատեսվում է ընդլայնել Միջազգային համագործացությունը՝ խթանելով ԵՄՀ միջազգային կրթական, գիտական և այլ համագործակցային ծրագրերի ավելացմանը՝ ընդլայնելով ԵՄՀ ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և վարչական աշխատակիցների շարժունակության հնարավորությունները դեպի օտարերկրյա գործընկեր բուհեր և այլ շահակից կազմակերպություններ և հակառակը:

ԵՄՀ գործող Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանով նախատեսվում էր ավելացնել ուսանողների փոխանակման ծրագրերի քանակը՝ ապահովելով տարեկան նվազագույնն 10 փոխանակման հնարավորություն ուսանողների, աշխատակազմի, պրոֆեսորադասախոսական կազմի համար, ավելացնել համալսարանի կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի թվաքանակը, ապահովել օտարերկրյա ուսանողների թվաքանակի կայուն աճ:

Որակի ապահովում. Որակի ներքին համակարգի զարգացման նպատակով համալսարանի Ռազմավարական ծրագրով նախատեսվում է իրականացնել. ուսումնառության որակի շարունակական բարելավում՝ ներդնելով իրականացվող կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման, գնահատման, ինչպես նաև բուհի կողմից նոր կրթական ծրագրերի իրականացման մեխանիզմներ, ուսումնառության որակի շարունակական բարելավման մեխանիզմներ՝ նպաստելով ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնագիտական և մեթոդական որակավորումների բարձրացմանը, ստեղծելով ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին համակարգ, ինչպես նաև ներդնել որակի մշակույթի տարածմանը նպաստող միջավայրի ձևավորում՝ որակի մշակույթի տարածմանը նպաստող կառավարման արդյունավետ մեխանիզմներ ներդնելով, բարձրացնել ԵՄՀ գործունեության թափանցիկությունը՝ ներդնելով բուհի կողմից շնորհվող որակավորումների, գիտահետազոտական աշխատանքների և մշակումների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմներ, նպաստել ԵՄՀ հասարակական պատասխանատվությունն իրացնող մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունը դիտարկել է որպես ՄՈՒՀ-ի հիմնական հավակնություններ և նպատակներ:

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՌԱՇ-ին:

ՄՈՒՀ-ն իր գործունեությունը ծավալում է կանոնադրության և Ռազմավարական ծրագրի հիման վրա: Հաշվի առնելով նախորդ հավատարմագրման շրջանակում փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվությունները և հիմք ընդունելով 2014թ. դեկտեմբերի 4-ին (N06/14 որոշմամբ) նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը՝ ՄՈՒՀ-ը 2014-2018թթ. ՌԾ-ում վերասահմանել է համալսարանի տեսլականը և լրամշակել առաքելությունը: Առաքելությունը ներկայացվում է եռաստիճան բուրգի տեսքով: Մասնավորապես՝ ՄՈՒՀ-ի առաքելությունում նշվում է. «Եվրասիա միջազգային համալսարանն իր առաքելությունը նախանշում է երեք մակարդակներում՝ ուսուցում, հետազոտություն և հանրային ծառայություն՝ առաջնային դերակատարություն տալով արդյունավետ ուսուցման և ուսումնառության կազմակերպմանը»: Ռազմավարական ծրագրի լրամշակման նպատակն է եղել ԵՄՀ-ի գործունեության հիմնական ուղղությունները համապատասխանեցնել ԵՄՀ կանոնադրության հետևյալ դրույթին՝ «համալսարանի գործունեությունը նպատակաուղղված է գիտության և մշակույթի տարբեր ուղղությունների բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը»: Հարկ է նշել, որ հետազոտության մասով ՄՈՒՀ-ը վերասահմանել է իր առաքելությունը և ստանձնել կիրառական, ոչ հիմնարար հետազոտությունների կատարման գործառույթ:

ՄՈՒՀ-ը նախորդ ՌԾ-ի արդյունքների գնահատում և վերլուծություն չի իրականացրել:

ՌԾ-ի իրագործման համար մշակված է գործողությունների ծրագիր, որում ամրագրված են ծրագրի իրականացման քայլերը, ժամանակահատվածը, պատասխանատուները, ակնկալվող վերջնարդյունքները:

Սակայն ՄՈՒՀ-ի առաքելությանում անդրադարձ չկա համալսարանի անվանման մեջ պարունակվող «միջազգային» տարրին: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանը նպատակ ունի ներգրավել ուսանողներ Մերձավոր Արևելքի և Պարսկական ծովածոցի պետություններից, մասնավորապես՝ Իրաքից:

Համալսարանը կրթական ծառայություններ է մատուցում բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի մակարդակներում. ՄՈՒՀ-ի առաքելությունում մատնանշված են ՌԱՇ-ի այն մակարդակները, որոնցում կազմակերպվում է կրթությունը ԵՄՀ-ում:

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ԵՄՀ որակի ապահովման ուղեցույցում սահմանված են արտաքին և ներքին շահակիցները: Արտաքին շահակիցներ են համարվում գործընկերները, գործատուները,

հասարակական կազմակերպությունները, պետական մարմիններն ու այլք: ՄՈՒՀ-ի սահմանմամբ ներքին շահակիցներն են ԵՄՀ ուսանողները, դիմորդները, դասախոսները, շրջանավարտները, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմը:

ՄՈՒՀ-ում առկա են ներքին և արտաքին շահակիցների կարիքների գնահատման մեխանիզմներ, որոնցից են ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումները և ֆոկուս խմբային քննարկումները: ՄՈՒՀ-ն իրականացրել է ներքին միջավայրի ուսումնասիրություն՝ ձգտելով վեր հանել առկա կարիքները և դրանք արտացոլել ՌԾ-ում: Փորձագիտական այցի ընթացքում ներքին շահակիցները հավաստեցին իրենց բավարարվածությունը ՌԾ-ում իրենց կարիքների արտացոլումից: Համաձայն <Որակի կառավարման համակարգի ներդրման և արդյունավետության գնահատում> փաստաթղթի 2-րդ՝ ԿԳ4-Շահակիցների ներգրավում բաժնի, ԵՄՀ-ում իրականացվում են մի շարք քանակական հետազոտություններ և հարցումներ, որոնց միջոցով վեր են հանվում նաև ընթացիկ խնդիրները և բավարարվածությունը տարբեր գործընթացներից, ենթակառուցվածքներից, կրթական բովանդակությունից, արդյունքները ներկայացվում են ԵՄՀ միջին օղակի և ինստիտուցիոնալ ղեկավարներին: Համաձայն նույն փաստաթղթի ներկայացված են տվյալներ, որոնք արտացոլում են շահակիցների բավարարվածությունը այս կամ այն գործընթացներին իրենց մասնակցությունից: Սակայն հարցումների կամ հետազոտությունների արդյունքներով բացահայտված կոնկրետ խնդիրներ կամ առաջարկներ մատնանշված չեն: Փորձագիտական այցի ընթացքում ևս օրինակներ չներկայացվեցին:

Ուսանողների կարիքների վերհանման նպատակով ՄՈՒՀ-ում առկա են ուսանողական խորհրդի և ուսանողների իրավունքի պաշտպանի կառույցները: Վերջիններս պարբերաբար կազմակերպում են քննարկումներ և հանդիպումներ՝ ուսանողներին հուզող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և փոխանցելու նպատակով:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ արտաքին շահակիցների հետ կապը դեռևս թույլ է: ՄՈՒՀ-ն աշխատանքներ է իրականացնում ՌԾ-ի իրագործմանը արտաքին շահակիցների ներգրավվածությունը ակտիվացնելու և նրանց հետ կապն ամրապնդելու ուղղությամբ:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ի առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման միակ մեխանիզմը ստորաբաժանումների և վարչական անձնակազմի հաշվետվությունների համակարգն է: Սակայն հաշվետվություններն ունեն տեղեկատվական բնույթ և արձանագրում են ՌԾ գործողությունների ուղղությամբ կատարված աշխատանքներն ու փաստերը: 2014-2018թթ. ՌԾ-ի գործողությունների ծրագիրը սահմանում է պլանավորված գործողությունների վերջնարդյունքները, ՄՈՒՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքները գնահատելու նպատակով յուրաքանչյուր քայլի կատարման ցուցիչներ: Ռազմավարական նպատակներին հասնելու ՄՈՒՀ-ի առաջընթացը ներքին շահակիցների

կողմից գնահատվում է կատարողականի այդ գնահատման հիման վրա: Հաստատության ստորաբաժանումների գործողությունները և միջոցառումները պլանավորելու նպատակով կազմվում են ամենամյա (ըստ ուստարվա) աշխատանքային և անհատական պլաններ, որոնք բխում են ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրից: Համալսարանի առաքելության ու նպատակների, աշխատանքային պլանների իրականացման արդյունքների կամ դրանք չիրականացնելու պատճառների վերլուծության, հետագա քայլերի վերանայման և բարելավման մեխանիզմները դեռևս մշակված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ն ունի համալսարանի գործունեության առաջնահերթությունները սահմանող առաքելություն: Հաստատության վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունն ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը: ՄՈՒՀ-ի առաքելությունն ընդհանրական տեսքով արտացոլում է հաստատության գործունեության ուղղությունները և ռազմավարական նպատակները:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ԵՄՀ առաքելությունը չի հստակեցնում ՀՀ կրթական համակարգում համալսարանի զբաղեցրած առանձնահատուկ դիրքը: Բացի այդ, ռազմավարական ծրագրով հաստատված առաքելությունը, նպատակներն ու խնդիրները ընդհանրական են և ռեսուրսների սահմանափակության պայմաններում ընդգրկում են գործունեության բազմաթիվ ուղղություններ: Սա խոչընդոտում է ՄՈՒՀ-ի կողմից ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղվող ռեսուրսների հասցեականությանը և արդյունավետ օգտագործմանը: Բացի այդ, վտանգվում է ՌԾ նպատակների և խնդիրների ու դրանց իրագործմանն ուղղված գործողությունների միջև փոխկապակցվածությունը: Թուլանում է գործողությունների թիրախավորումը:

Ողջունելի է, որ ռազմավարական նպատակների իրագործման նպատակով հաստատությունը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների հետ համագործակցությունը: Դրական է նաև, որ ներքին շահակիցները մասնակցել են ՌԾ-ում իրենց կարիքների արտացոլման համար կազմակերպված հարցումներին, քննարկումներին և այլ միջոցառումների: Այնուամենայնիվ, արտաքին շահակիցների ներգրավվածությունը նշված գործընթացներում և նրանց հետ հետադարձ կապը բարելավման կարիք ունեն, քանի որ արտաքին շահակիցների հետ համագործակցության թույլ հիմքերը կնվազեցնեն աշխատաշուկայի պահանջները հաշվի առնելու, դրանց արձագանքելու և կրթական ծրագրերը բարելավելու գործընթացների արդյունավետությունը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում գործում է առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման հաշվետվողականության մեխանիզմը: Այնուամենայնիվ, ստորաբաժանումների և վարչական կառույցների ղեկավարների տարեկան հաշվետվությունները դեռևս գնահատման միակ եղանակն են: Բացի այդ, հաշվետվությունների բնույթը տեղեկատվական է: ՄՈՒՀ-ում սակավ են հաշվետվությունների հիման վրա հետագա վերլուծությունները: ՄՈՒՀ-ի ՌԾ-ում առկա են նաև փաստերն արձանագրող ընդհանրական, հարաբերական կատարողականի ցուցիչներ, որոնք հստակ չափելի չեն (օրինակ՝ առաջարկությունների ներկայացում պետական մարմիններին, վերանայված ուսումնական պլաններ, գնահատման սանդղակ և այլն):

Ստորաբաժանումների գործունեության առաջընթացի գնահատման որակական և քանակական համալիր ցուցիչների մշակումը և միաժամանակյա կիրառումը հնարավորություն կտա գնահատել գործունեության արդյունավետությունը և նպատակային կդարձնի ֆինանսական ռեսուրսների հետագա պլանավորումը:

Այսպիսի գնահատման առկայությունը հնարավոր կդարձներ հիմնավորել նպատակների իրագործմանն ուղղված ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Այս պահին առկա աշխատակարգերն, այնուամենայնիվ, խոչընդոտում են ՄՈՒՀ-ի ՌԾ-ի հետագա բարելավմանը և նվազեցնում երկարաժամկետ զարգացման հնարավորությունները: ՄՈՒՀ-ն իր առջև չի դնում ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների և խնդիրների իրագործման համար ֆինանսական ռեսուրսներով ապահովման և հետագա զարգացման համակարգված պլանավորման խնդիր: Այս հանգամանքը կարող է վտանգել ներքին և արտաքին շահակիցներին մատուցվող ծառայությունների շարունակականությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի վերաձևակերպված առաքելությունը, դրան համահունչ սահմանված նպատակները, ՌԾ-ում և դրանից բխող գործողությունների պլանում գործունեության առաջնահերթությունների սահմանումը, առաքելության՝ ընդհանուր առմամբ ՈԱՇ-ին համապատասխանությունը, ռազմավարական նպատակների իրագործմանը ներքին շահակիցների մասնակցության կարևորումը, հաստատության գործունեության հիմնականում համապատասխանությունն առաքելությանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Եվրասիա միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՄՈՒՀ-ի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և ԵՄՀ կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա և կոլեգիալ սկզբունքների զուգակցմամբ: Կառավարման մարմիններն են՝ համալսարանի հիմնադիրների խորհուրդը, կառավարման խորհուրդը, գիտական խորհուրդը և գործադիր մարմինները: Կառավարման խորհուրդը առավելապես հաստատում է գործադիր մարմինների

ներկայացրած փաստաթղթերը, սեփական նախաձեռնությամբ ներկայացված փաստաթղթեր առկա չեն: ՄՈՒՀ-ը գործունեություն է ծավալում որպես «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի կառուցվածքային միավոր (մյուս միավորների մասնավորապես, վարժարանի և երկու հյուրատան հետ մեկտեղ նույն շենքում): ՍՊԸ-ի վարչական և տնտեսական ռեսուրսների գերակշիռ մասը օգտագործվում են միաժամանակ բոլոր միավորների կողմից (այդ թվում՝ վարչական և տնտեսական անձնակազմը, նյութական ռեսուրսները (այդ թվում՝ լսարանային ֆոնդը, մարզադահլիճը):

Նախորդ հավատարմագրման արդյունքներով ՄՈՒՀ-ին ներկայացված խորհրդատվությունների հիման վրա 2014թ. լրամշակվել է Կանոնադրությունը, ըստ որի տարանջատվել են կառավարման խորհուրդների և հիմնադիրների իրավասությունները, ներմուծվել է ուսանողի պաշտպանի ինստիտուտը: Բացի այդ, մշակվել և ներդրվել են ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված մի շարք հիմնարար փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը և կազմակերպվող գործընթացները: Դրանցից են 05/02/2017թ.-ին հաստատված «Ուսանողական գիտական ընկերության կանոնադրությունը», 12/12/2014թ.-ին հաստատված «Ուսանողների իրավունքների պաշտպանի գործունեության կարգը», «Էթիկայի հանձնաժողովի կանոնակարգը», «Փաստաթղթերի կառավարման ընթացակարգը»:

ՄՈՒՀ-ի ներկայիս կառավարման համակարգի կառուցվածքային սխեմայի ուսումնասիրությունը և փորձագիտական այցի ընթացքում հանդիպումները ցույց տվեցին, որ որոշ մարմինների համար սահմանված պարտականությունների ու լիազորությունների շրջանակները հստակ տարբերակված չեն: Մասնավորապես, ուսանողի իրավունքների պաշտպանի և ուսխորհրդի լիազորությունները հստակ տարանջատված և սահմանված չեն: ԵՄՀ 2014-2018թթ. Ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման ընթացքում կատարվել են կառուցվածքային որոշակի փոփոխություններ: Պրոռեկտորների ենթակայությունից դուրս են բերվել ուսանողական խորհուրդը, ուսանողների իրավունքների պաշտպանը: Ներկայումս դրանք հանդիսանում են ռեկտորի խորհրդատվական մարմիններ, սակայն հաշվետու են ԵՄՀ Կառավարման խորհրդին:

Բացի այդ, գիտական հետազոտությունների իրականացումը ռազմավարական ծրագրով սահմանված է որպես առաջնահերթություն, և կառավարման կառուցվածքային սխեմայում նախատեսված է առանձին ստորաբաժանում: Այն է՝ միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնը: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում գիտության զարգացման համար պատասխանատու է Իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալը, որը միևնույն ժամանակ Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատուն է և կազմակերպում է աշխատանքներն առանց այլ անձանց/ հաստիքների ներգրավման: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ մեթոդական խորհրդի անդամների գերակշիռ մասը՝ պրոռեկտորը, ամբիոնի վարիչները նաև գիտական խորհրդի և ռեկտորատի անդամներ են: ՄՈՒՀ-ի կառավարմանը ներգրավված առանցքային անձինք (ինչպիսիք են օրինակ,

պրոոեկտորը,ամբիոնի վարիչները) միաժամանակ ներկայացված են տարբեր շահեր ներկայացնող կառավարման մարմիններում:

Ըստ ռազմավարական նպատակների բյուջեի համակարգված ֆինանսական պլանավորում ՄՈՒՀ-ի կողմից չի իրականացվում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ ըստ գործունեության ուղղությունների մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների հստակ պլանավորում և արդյունավետության գնահատում իրականացված չէ:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ՄՈՒՀ-ում 12.12.2014թ-ին հաստատվել է Էթիկայի հանձնաժողովի կանոնակարգը: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կարգի անհրաժեշտության վերաբերյալ ՄՈՒՀ-ում կարծիքները միանշանակ չեն: Այցի ընթացքում շեշտվեց ՄՈՒՀ-ի փոքր լինելը և կառավարման բոլոր օղակների միջև սերտ և կառուցողական շփումների առկայությունը, ինչը, շահակիցներից կարծիքով, դյուրացնում է բոլոր որոշումների ընդունումը:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՄՈՒՀ-ում որակի ապահովման համակարգի ներդրման և բարեփոխումների ընթացքում մշակված կառավարմանն ու վարչարարությանը վերաբերող փաստաթղթերի գերակշիռ մասը նպատակ ունի ապահովել արտաքին ու ներքին շահակիցների մասնակցությունը ՄՈՒՀ-ի կառավարչական որոշումների կայացման գործընթացներում: ՄՈՒՀ-ը հնարավորություն է ընձեռում ներքին շահակիցներին մասնակից դառնալ որոշումների կայացման գործընթացին՝ ներգրավելով դասախոսներին և ուսանողներին որպես գիտական խորհրդի (համալսարանի կանոնադրության համաձայն գիտական խորհրդում դասախոսների ներգրավվածությունը կազմում է 20%, ուսանողներինը ևս՝ 20%), կոլեգիալ կառավարման այլ մարմինների անդամներ: Բացի այդ, ՄՈՒՀ-ում ներդրվել է որակի ապահովման գործակալի ինստիտուտը, որի գործունեության ուղղություններից մեկը շահակիցների կառավարման մարմիններում ներգրավվածությունից բավարարվածությունը որոշելն է: Համալսարանի ներքին շահակիցները ներգրավված են կառավարման համակարգում՝ մասնակցելով իրենց կարիքների վերհանմանն ուղղված գործողություններին, այդ թվում՝ ՄՈՒՀ-ի կողմից ստեղծած ներքին էլեկտրոնային հարթակներում (ինչպիսիք են, օրինակ, հարցումների կազմակերպումը): Ներքին շահակիցները մասնակցում են նաև կառավարման այնպիսի օղակների աշխատանքներին, ինչպիսիք են մեթոդական խորհուրդը, ռեկտորատը, ամբիոնները:

Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզ դարձավ, որ չնայած այդ հնարավորությունների առկայությանը, այնուամենայնիվ, դասախոսների և ուսանողների կողմից հարցերի բարձրացման նախաձեռնողականության մակարդակը ցածր է, ինչի պատճառներից մեկը, ըստ շահակիցների, գոյություն ունեցող խնդիրների արագ և ճկուն լուծելու հնարավորությունն է կառավարման ցածր օղակներում: Փորձագիտական այցի ընթացքում ներքին շահակիցները հաստատում էին իրենց բացարձակ բավարարվածությունը կառավարչական որոշումների կայացման գործում իրենց

ներգրավման մակարդակից և հնարավորություններից: Այնուամենայնիվ, կառավարչական որոշումների քննարկմանը դասախոսների և ուսանողների մասնակցության արդյունավետության վերլուծություն ՄՈՒՀ-ում դեռևս չի իրականացվում:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում երկարաժամկետ պլանավորման գործող փաստաթուղթը 2014-2018թթ. հնգամյա ռազմավարական ծրագիրն է՝ դրա իրականացման գործողությունների կից ծրագրով: Ռեկտորի թիվ 345/09-16 հրամանով 2015 թվականից վերափոխվել է ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ներկայացվող անհատական պլանի և հաշվետվության ձևաչափը: Անհատական պլանների և հաշվետվությունների ձևաչափը նախատեսում է փոխկապվածություն ՌԾ-ի խնդիրների հետ: Ներկայացված հաշվետվություններում տարբեր ստորաբաժանումների որոշ գործողություններ երբեմն կրկնվում են, իսկ վերջնարդյունքները հստակ չափելի չեն: Կարճաժամկետ կտրվածքով առանձին ստորաբաժանումների, մասնավորապես ամբիոնների կողմից մշակվում են տարեկան աշխատանքային պլաններ, որոնք իրենց հերթին տրոհված են եռամսյակների: Հաշվետվությունների ամփոփմամբ կազմվում է պրոռեկտորների հաշվետվությունն ըստ ՌԾ ցուցանիշների կատարման, որն էլ հիմք է հանդիսանում ռեկտորի տարեկան հաշվետվության կազմման համար:

ՄՈՒՀ-ը որպես միջնաժամկետ պլան ներկայացնում է նախորդ հավատարմագրման արդյունքներով կազմված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը և ՈՆԱ-ի կողմից ներկայացված բարելավումների պլանը, որոնք, սակայն կոնկրետ նպատակի միտված և թիրախավորված միանգամյա փաստաթղթեր են: Բացի այդ, դրանք ժամկետային առումով չեն համընկնում ՌԾ ժամկետների հետ և չեն նախատեսում միջնաժամկետ պլանների համար նախատեսվող ժամկետայնություն (1-3 տարի): Թերությունների վերացման գործողությունների ծրագրում ներառված գործողությունների կատարման ժամկետները ներառում են 2015-2016թթ.-ը: Բարելավումների պլանը 01/02/2018թ.-ին ներկայացված է կառավարման օղակների հետ հանդիպման մասնակիցներին, և դրանում ներառված գործողությունների կատարման առավելագույն վերջնաժամկետը 10/06/2018թ.-ն է: Կազմակերպվող գործընթացների միջնաժամկետ այլ պլանավորում, ռիսկերի գնահատում և դրա հիման վրա երկարաժամկետ պլանավորման փաստաթղթի՝ ՌԾ-ի միջնաժամկետ ճշգրտում ՄՈՒՀ-ը չի իրականացնում՝ փաստացի միջնաժամկետ պլանի բացակայության պատճառով:

ՄՈՒՀ-ում պլանավորված գործողությունների իրականացման մշտադիտարկման նպատակով կիրառվում է հաշվետվությունների մեխանիզմը: Հաշվետվությունները հիմնականում կրում են տեղեկատվական բնույթ, պատրաստված են ՌԾ գործողությունների կատարման կամ կազմակերպված հարցումների արդյունքներով փաստերն արձանագրելու հիման վրա: Սակայն այդ գործողությունների կատարման արդյունավետության գնահատում հաշվետվություններում ներառված չէ:

ՄՈՒՀ-ում առաքելությանն ու նպատակներին համապատասխան ֆինանսական պլանավորման վերաբերմամբ հարկ է նշել, որ ՄՈՒՀ-ի կողմից բյուջեի պլանավորումն իրականացվում է կարճաժամկետ ժամանակահատվածի՝ 1 տարվա համար նախահաշվի կազմմամբ, որտեղ արտացոլված են ֆինանսական մուտքերը և ծախսերն ըստ առանձին հոդվածների՝ ամբողջ հաստատության համար և ոչ նպատակային՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների կամ գործունեության ուղղությունների: Ֆինանսական ռեսուրսների տարեկան պլանավորման քաղաքականությունն էլ ամբողջովին համահունչ չէ ռազմավարական խնդիրներին և նպատակներին: Մասնավորապես, ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է գիտահետազոտական գործունեության ակտիվացումը և միջազգայնացումը (այդ թվում՝ օտար լեզվով դասընթացների կազմակերպումը), մինչդեռ վերոնշյալ առաջնահերթությունների գծով նպատակային ֆինանսական պլանավորում չի իրականացվում (բյուջեի տարեկան նախահաշվում նախատեսվում է միայն աշխատանքի վարձատրություն հոդվածը ՊԴ անձնակազմի գործունեության առանձին ուղղությունների, այդ թվում հետազոտությունների համար):

ՌԾ նպատակների երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության և զարգացման խնդիր ՄՈՒՀ-ի կողմից դրված չէ: Բյուջեի կատարման մշտադիտարկման և բարելավման հստակ մեխանիզմներ մշակված չեն (իրականացվում է միայն փաստացի կատարողականի ուսումնասիրություն):

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ՄՈՒՀ-ի կողմից համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություններ իրականացվում են, սակայն ուսումնասիրությունների իրականացման մեթոդաբանությունը հստակ կանոնակարգված չէ: ՄՈՒՀ-ում կառավարմանն առնչվող որոշումներ կայացնելու և ՄՈՒՀ-ի կողմից սահմանված առաջնահերթությունների և նպատակների իրագործման նպատակով կազմակերպվում են հիմնականում շահակիցների կարիքների վերհանմանն ուղղված հարցումներ և բանավոր քննարկումներ: Հատվածաբար կիրառվում են նաև բենչմարքինգի մեխանիզմի տարրերը: Արտաքին միջավայրի վերլուծությունները, ներառյալ՝ SWOT վերլուծությունները, աշխատաշուկայի պահանջների և այլ թիրախային ուսումնասիրությունները սակավ են: Բացի այդ, այսպիսի գնահատումներով ստացված տեղեկատվության և կառավարչական որոշումների կայացման միջև կապը ցույց տվող օրինակները քիչ են (օրինակ՝ ՄԿԾ-ի պահանջարկի ուսումնասիրության և դրա համար անհրաժեշտ ՊԴ կազմի նկատմամբ պահանջարկի, օտար լեզուներով կրթական ծրագրերի պլանավորման մասով և այլն):

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ՄՈՒՀ-ում ընթացակարգերի և քաղաքականության վարչարարությունն իրականացվում է ՊԻԳԲ շրջափուլում, որն ամրագրված է Որակի ապահովման քաղաքականության և որակի ապահովման ուղեցույցում: ՄՈՒՀ-ում կառավարման գործընթացները և վարչարարությունը միտված են ուսանողակենտրոն միջավայրի ստեղծմամբ կրթական ծառայությունների և այլ գործընթացների որակի անընդհատ բարելավման

շարունակականությանը: Այնուամենայնիվ, պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում շրջափուլը հիմնական գործընթացների մասով փակված չէ: Կառավարման համակարգի գործընթացները գտնվում են ՊԻԳԲ տարբեր փուլերում: Օրինակ, հիմնարար փաստաթղթերից ՌԾ-ի գործողությունների գնահատում չի իրականացվել, և դրա արդյունքները դեռ գնահատված չեն: Մի շարք այլ հիմնարար փաստաթղթեր (օրինակ՝ ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման, էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգերը) նոր են մշակվել և դեռևս ներդրման փուլում են: Արդյունքում, ՄԿԾ-ների կազմակերպման գնահատում ևս արված չէ: ՄՈՒՀ-ը կատարել է իր կողմից առանձնացված 11 գործընթացների կարգավիճակների գնահատում (ռազմավարական, անհատական պլանավորում, իրականացում, մշտադիտարկում և վերանայում, շահակիցների ներգրավում, հետադարձ կապի ապահովում, տեղեկատվության տարածում և այլն), որտեղ ևս երևում է, որ դրանք գտնվում են ՊԻԳԲ տարբեր փուլերում: ՄՈՒՀ-ում գործընթացների պլանավորումն իրականացվում է տարեկան աշխատանքային պլանների միջոցով: Իրականացումը մշտադիտարկելու և վերահսկելու նպատակով հավաքագրվում է տեղեկատվություն հաշվետվությունների ձևով: Պլանների և հաշվետվությունների առկայության պայմաններում, սակայն, ամբողջությամբ ապահովված չէ գործընթացների գնահատում-բարելավում փոխկապակցվածությունը: Սակավաթիվ են օրինակները, երբ հաշվետվությամբ ստացված տեղեկատվությունն արդեն իսկ օգտագործվել է կառավարման քաղաքականությունների և գործընթացների բարելավման տեսակետից: Հիշատակվել է օրինակ ըստ որի շահակիցների բավարարվածության հարցումների արդյունքներով առաջարկվել է ՄՈՒՀ-ի 2017-2018թ. բյուջեի նախահաշվում նախատեսել միջոցներ՝ ուղղված սպորտային գույքի ձեռքբերմանը, լսարանների կահավորմանը, սննդի ծառայությունների արտապատվիրմանը:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նպատակով ՄՈՒՀ-ում անցկացվում են հարցումներ՝ ըստ նախապես մշակված հարցաթերթերի: Բացի այդ, ՄՈՒՀ-ն ունի արդյունավետության գնահատման տարբեր գործիքներ (կարգերը, հարցումների համար մշակված ձևաթղթերը, ռազմավարական նպատակների վերջնարդյունքները և ցուցիչները)՝ ըստ շահակիցների խմբերի: Այնուամենայնիվ, այդ գործիքների կիրառության ծավալները, հաճախականությունը հստակ կանոնակարգված չեն, և արդյունավետությունը դեռևս գնահատված չէ, քանի որ դրանց մի մասը դեռևս փորձարկման և ներդրման փուլում է: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ իրականացվել են հարցումներ ուսանողների, շրջանավարտների շրջանում (հիմնականում էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով), դրանց արդյունքներով պատրաստվել են հաշվետվություններ (օրինակ՝ «Ուրակի կառավարման համակարգի ներդրման և արդյունավետության գնահատում» ձեռնարկը): 11.07.2014թ. հաստատվել է կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգը, որտեղ սահմանվել են ՄԿԾ-ների վերանայման համար անհրաժեշտ հիմքերը, փուլերը և գործընթացները:

Հավաքագրված տվյալները բովանդակային տեղեկատվություն չեն պարունակում և չեն օգտագործվել ՄԿԾ-ները վերանայելու համար:

ՄՈՒՀ-ում հավաքագրվում է տեղեկատվություն ուսանողների շարժի, առաջադիմության, ռեսուրսներից և ուսումնական միջավայրից ուսանողների և դասախոսների բավարարվածության վերաբերյալ: Այնուամենայնիվ, այսպիսի հարցումներն ու գնահատումները հստակ պլանավորված չեն: Հավաքագրված տեղեկատվության կիրառման մեխանիզմները հստակ ամրագրված չեն: Բացի այդ, մշակված չեն հարցումներով հավաքագրված տեղեկատվության՝ պլանավորման և բարեփոխումների գործընթացներում կիրառումը գնահատող մեխանիզմներ:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում գործող կրթական ծրագրերի մասին տեղեկատվություն շահակիցներին տրամադրվում է պաշտոնական կայքում և ԵՄՀ ֆեյսբուքյան էջում հրապարակվող տեղեկատվության, հաշվետվությունների, ուղեցույցների և ձեռնարկների միջոցով: Շնորհվող որակավորումների որակի մասին որակական և քանակական տեղեկատվություն կամ կարծիքների վերաբերյալ վերլուծություններ առկա չեն: Ավելին, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանության վերլուծության և դրանց որակի վերաբերյալ հրապարակումների օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները դեռ մշակված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ 2014թ.-ից սկսած, հաշվի առնելով նաև հավատարմագրման նախորդ գործընթացի արդյունքներով ստացված խորհրդատվությունները, կատարվել են աշխատանքներ կառավարման համակարգի բարեփոխման ուղղությամբ (կանոնադրության լրամշակում, կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության իրավական փաստաթղթավորում, ռազմավարական ծրագրի լրամշակում, կառուցվածքային փոփոխություններ): Այնուամենայնիվ, կառավարման համակարգը հետագա բարելավման և կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակեցման կարիք ունի: Մասնավորապես, կա ՄՈՒՀ-ի՝ «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի այլ կառուցվածքային միավորներից (վարժարան, երկու հյուրատուն) տարանջատման կարիք (հատկապես տրամադրվող կառավարչական և նյութական ռեսուրսների թիրախավորված հատկացումների իմաստով): ՄՈՒՀ-ի կառավարման գործող մոդելը, որում հստակ տարանջատված չեն առանձին կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները (օրինակ՝ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի և ամբիոնների՝ վերապատրաստումների մասով, ուսանողական խորհրդի և ուսանողների իրավունքների պաշտպանի, ՊԴ կազմի տարակարգերի), և հստակ պլանավորված չեն ռազմավարական նպատակների իրագործման համար ռեսուրսները, վտանգում է ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին շահակիցներին մատուցվող ծառայությունների շարունակականությունը, ռեսուրսների օպտիմալ պլանավորումը և ՄՈՒՀ-ի շահակիցների կարիքների բավարարման համար այդ ռեսուրսների հավասարաչափ բաշխումը:

Թեև Եվրասիա միջազգային համալսարանի կառավարման համակարգը հնարավորություն ընձեռում է կառավարչական որոշումների կայացմանը մասնակից դարձնել ներքին և արտաքին շահակիցներին, այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի կառավարման գործընթացներին և ՌԾ իրագործմանը ներգրավված են սակավաթիվ արտաքին շահակիցներ, ինչը վտանգում է բոլոր շահակիցների կողմից ընդունելի որոշումների կայացումը: Բացի այդ, արտաքին շահակիցների, մասնավորապես՝ հավանական գործատուների և շրջանավարտների թույլ մասնակցությունը և ներգրավումը կարող է հանգեցնել աշխատաշուկայի արդի պահանջների մասին տեղեկատվության պակասի. սա ռիսկային է աշխատաշուկայի համար գործնական կարողություններով օժտված կադրերի պատրաստման ՄՈՒՀ-ի առաքելության իրագործման համար:

Ռազմավարական նպատակների իրագործման արդյունավետության տեսանկյունից ՄՈՒՀ-ում բյուջե-ռազմավարական ծրագիր փոխկապակցվածությունը թույլ է: ՄՈՒՀ-ում ՌԾ խնդիրների լուծման համար միջնաժամկետ պլանավորում, ՌԾ իրականացման նպատակային մոնիտորինգ և ռիսկերի գնահատում չի իրականացվում, ինչը սահմանափակում է բուհի կառավարիչների՝ ռազմավարական ծրագիրը ճշգրտելու և արտաքին միջավայրի փոփոխություններին ճկուն արձագանքելու հնարավորությունները: Բացի այդ, ֆինանսական պլանավորման գործընթացն իրականացվում է բացառապես կարճաժամկետ՝ 1 տարվա կտրվածքով: Ֆինանսական պլանավորումը կատարվում է «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի (որի կազմում ընդգրկված են ոչ համալսարանական միավորներ) և ոչ թե բուն ՄՈՒՀ-ի մասշտաբով: Առավել ևս, ֆինանսական մուտքերն ու ծախսերը պլանավորված են ոչ ըստ ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների կամ կառուցվածքային ստորաբաժանումների: Սա ռիսկային գործոն է ռազմավարական նպատակների իրագործման համար անհրաժեշտ նյութական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներով ապահովման և այդ ռեսուրսների բաշխման արդյունավետության տեսանկյունից (հատկապես՝ հետազոտությունների իրականացման, օտար լեզվով դասընթացների կազմակերպման մասով, որոնք պահանջում են ռեսուրսների հստակ պլանավորում և՛ երկարաժամկետ, և՛ միջնաժամկետ ու կարճաժամկետ կտրվածքով):

Թեև ՄՈՒՀ-ն ունի (հիմնականում ներքին) շահակիցների կարիքների վերհանման և կառավարչական որոշումների կայացման գործընթացներում շահակիցներին ներգրավելու մեխանիզմներ, բարելավումների նպատակով հավաքագրված տեղեկատվության հետագա օգտագործման մեխանիզմները հստակ չեն: ՄՈՒՀ-ի գործունեության վրա անմիջականորեն ազդող արտաքին գործոնների ուսումնասիրությունները սակավ են, իսկ դրանց կապը ռեսուրսների պլանավորման գործընթացների հետ՝ թույլ: Այսպիսի ուսումնասիրությունների և պլանավորման հետ կապի բացակայությունը նվազեցնում է հարցումներով ստացված տվյալների հավաստիության աստիճանը: Բացի այդ, սահմանափակվում են կրթական ծառայությունների շուկայի և աշխատաշուկայի փոփոխություններին արագ և ճկուն արձագանքելու ՄՈՒՀ-ի հնարավորությունները:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգի, կառավարման օղակների գործունեության պլանավորման և արդյունքների գնահատման նպատակով մշակվել են բազմաթիվ ընթացակարգեր և կանոնակարգեր, ինչը դրական է անդրադառնում շահակիցներին

կառավարչական գործընթացներում ներգրավելու վրա: Սակայն, կրթական (այդ թվում՝ ՄԿԾ-ների) և այլ ծառայությունների մատուցման հետ կապված գործընթացների գնահատումը ամբողջական չէ: Ինչպես նաև կառավարման համակարգի մի շարք գործընթացների համար ՊԻԳԲ շրջափուլը դեռ փակված չէ: Կառավարչական գործընթացների վերաբերյալ տարբեր մեխանիզմներով հավաքագրված տեղեկատվության հազվադեպ օգտագործումը կամ գործողությունների կատարման փաստերի մեխանիկական արձանագրումը խոչընդոտում է որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի, կառավարման համակարգի բաղադրիչների արդյունավետությունը և դրա համակողմանի գնահատումը:

ԵՄՀ-ի ֆեյսբուքյան էջի և պաշտոնական կայքի (երբեմն առանց թեմատիկ դասակարգման) միջոցով ՄՈՒՀ-ի կողմից ընդունելության և այլ գործընթացների վերաբերյալ շահակիցներին տեղեկատվություն տրամադրելն առաջանցիկ քայլ է: Առաջադիմական է նաև կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատելու համար կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգի մշակումը: Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի մատուցած կրթական ծառայությունների և այլ գործընթացների արդյունավետության մասին տեղեկատվությունը հավաքագրելու և վերլուծելու մեխանիզմների բացակայությունը կարող է լրջորեն վտանգել կրթական ծառայությունների որակի և դրա բարելավմանն ուղղված գործողությունները: ԵՄՀ վերլուծությունների արդյունքների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների ստացման կանոնակարգված և միասնական մեխանիզմների բացակայությունը նույնպես նվազեցնում է գործընթացների վերաբերյալ կարծիքների օբյեկտիվության մակարդակը, ինչն էլ կարող է խոչընդոտել ՄՈՒՀ-ի նկատմամբ հանրային վստահության բարձրացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ընդհանուր հիմնադիր ընկերության մասշտաբով գործող կառավարման մոդելը, դրանով պայմանավորված ՄՈՒՀ-ի ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման խնդիրը, նույն անձանց կողմից տարբեր հաստիքներով նախատեսված գործառույթների իրականացումը, տարբեր կառուցվածքային միավորների գործառույթների կրկնելիությունը, վարչական կառույցների գործունեության և ՄՈՒՀ-ում գործող պլանավորման համակարգի միայն մասնակի համապատասխանությունը ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակներին, կանոնակարգված միջնաժամկետ պլանավորման բացակայությունը, ինչպես նաև ռիսկերի գնահատման և ՌԾ ճշգրտման մեխանիզմների, **կառավարման համակարգի արդյունավետության վերլուծությունների բացակայությունը, արտաքին միջավայրի գործոնային վերլուծությունների սակավությունը,** վարչարարության գործընթացների որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի տարբեր փուլերում գտնվելը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Եվրասիա միջազգային համալսարանը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Եվրասիա միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Փորձագիտական վերլուծությամբ պարզ դարձավ, որ ԵՄՀ առաքելությունը և ներկայացվող ՄԿԾ-ները համահունչ են այն իմաստով, որ ՄՈՒՀ-ի կողմից առաջարկվող ՄԿԾ-ները նպատակ ունեն պատրաստել մասնագետներ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Ներկայումս համալսարանն իրականացնում է բակալավրիատի 4 («Իրավագիտություն», «Կառավարում», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆարմացիա») և մագիստրոսական 3 («Կառավարում», «Իրավագիտություն», «Անգլերեն լեզու և գրականություն») մասնագիտության կրթական ծրագրեր: Նշված ՄԿԾ-ների համար ՄՈՒՀ-ը պատրաստել է ծրագրային փաթեթներ՝ նկարագրեր, որոնցում մասնավորեցվում են ուսուցման ձևը՝ առկա կամ հեռակա, մասնագիտացումները («Իրավագիտություն» և «Կառավարման դեպքում»), կրթական վերջնարդյունքները, ՄԿԾ-ի նպատակներն ու խնդիրները: ՄԿԾ-ների նկարագրերում զետեղված են նաև ուսումնական պլանները, թվարկված են դասավանդման և գնահատման մեթոդները, նշված են դասավանդող ՊԴ կազմի համար սահմանվող որակավորումներն ու նկարագրիչները: ՄՈՒՀ-ը ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանությունը ՈԱՇ-ի նկարագրիչներին ապահովում է քարտեզագրման փորձով: ՄԿԾ-ների փաթեթներում առկա է ՄԿԾ-ների ընդհանրական վերջնարդյունքների և ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչների քարտեզագրում, այնուամենայնիվ սույն փորձի հիմքում ընկած մեթոդաբանությունը նկարագրված չէ:

ՄԿԾ փաթեթների ստեղծումը ՄՈՒՀ-ի «Կառավարում» և «Անգլերեն լեզու և գրականություն» ՄԿԾ-ների համար նախատեսվել է ՄՈՒՀ-ի նախորդ հավատարմագրման արդյունքում տրված խորհրդատվությունների հիման վրա համալսարանի կողմից մշակված բարելավումների պլանում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ն աշխատանքներ է իրականացնում ՄԿԾ-ները, մասնավորապես՝ առարկայական նկարագրերը բարելավելու ուղղությամբ, որոնք դեռևս ընթացքի մեջ են:

Առկա ՄԿԾ-ների փաթեթները պարունակում են ՄԿԾ-ի վերաբերյալ բազմապիսի տեղեկություններ, այս տեղեկությունները հաճախ ընդհանրական են, ներկայացված են զուտ թվարկմամբ՝ առանց վերջնարդյունքների և միմյանց հետ փոխառնչությունների (օրինակ՝ վերջնարդյունք - դասավանդման և ուսումնառության մեթոդ - գնահատման մեթոդ): Բակալավրական և մագիստրոսական ՄԿԾ-ների վերջարդյունքները կրկնվում են (օրինակ՝ «Կառավարում» ՄԿԾ-ի փաթեթներում «Գիտելիք» բաժինն ամբողջությամբ, իսկ «Հմտություններ» և «Կարողություններ»

բաժինները՝ հիմնականում): Չեն տարբերվում նաև մագիստրատուրայում առաջարկվող մասնագիտացումների վերջնարդյունքները:

Ուսումնական պլաններում տեսական ժամաքանակը մի քանի անգամ գերազանցում է գործնական ժամերի քանակը՝ սահմանված վերջնարդյունքների ձևավորման համար: Բացի այդ, թեև ուսումնական պլաններում նախատեսված է կամընտրական առարկաների երկար մի ցանկ, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողների փոքրաթվության պատճառով հաճախ ընտրությունն անհնար է, և այդ առարկաների մեծ մասը երբևէ չի դասավանդվել (Իրավագիտություն, Անգլերեն լեզու և գրականություն):

ՄԿԾ-ը փաթեթներում նկարագրված չեն պրակտիկայի և ավարտական աշխատանքի/թեզի չափանիշները և պահանջները:

Փորձագիտական վերլուծությամբ պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների նկարագրերը ուղղված չեն ուսանողների հետ հաղորդակցման կարիքներին, չեն տեղեկացնում նրանց ակնկալվող բեռնվածության և մասնակցային ներդրման մասին:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները ընդհանրական կերպով ներկայացված են ՄԿԾ-ների նկարագրերում, հիմնականում՝ պարզ թվարկման եղանակով: ՄԿԾ-ներում թվարկված մեթոդները բազմազան չեն: Ուսումնառության վերջարդյունք - ուսուցման մեթոդ - գնահատման մեթոդ փոխակապակցվածություն առկա չէ: Դասընթացի մակարդակում մեթոդների ընտրությունը կատարում է դասախոսը՝ ըստ դասընթացի նպատակի: Երբեմն դրանք նույնն են բակալավրական և մագիստրոսական ՄԿԾ-ներում (օրինակ՝ «Կառավարում» ՄԿԾ-ների դեպքում): Առարկայական ծրագրերում հստակեցված չեն կոնկրետ վերջնարդյունքների ձևավորմանը նպաստող ուսուցման մեթոդները, անհատական և թիմային աշխատանքի առաջադրանքներն ու ձևերը: ՄԿԾ-ների նկարագրերում նշված անհատական և ինքնուրույն աշխատանքի ձևերը, դրանց հետ կապված առաջադրանքները, ինչպես նաև աշխատածավալը ներկայացված չեն :

ՄԿԾ-ների շրջանակում ուսուցման կազմակերպման քաղաքականությունը հստակ չէ, քանի որ առանձին առարկաների պարագայում նկատվում են խնդիրներ՝ կապված անհատական մոտեցում պահանջող դասաժամերը մեծ խմբերով կամ տարբեր մասնագիտությունների տարբեր կուրսերի ուսանողների համար դասավանդման գործընթացը միաժամանակ կազմակերպելու (մասնավորապես, ընդհանուր հումանիտար և սոցիալական դասընթացների կառուցամասի) հետ կապված:

ՄՈՒՀ-ը որոշակի աշխատանք է տարել ուսուցման մեթոդների արդիականացման ուղղությամբ, մասնավորապես՝ բոլոր դասընթացների համար մշակվում են անհատական աշխատանքը և ինտերակտիվ մեթոդները խթանող գործիքներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հաշվի է առնվել ուսանողների կարծիքը դասախոսությունների վարման վերաբերյալ, և ՊԴ կազմին առաջադրվել է դասախոսությունն ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ անցկացնելու պահանջ:

ՄՈՒՀ-ը դասավանդման մեթոդները բարելավելու նպատակով կիրառում է ուսանողների շրջանում հարցումների մեխանիզմը՝ ուսումնասիրելով ուսանողների

կարծիքները կիրառվող դասավանդման մեթոդների վերաբերյալ: Բացի այդ, կիրառվում է առարկայական ծրագրի, այդ թվում և դասընթացում նախատեսվող ուսուցման մեթոդների գնահատման գործիք, որով Որակի գործակալ ուսանողներն ու դասախոսներն արձագանքում են ուսուցման մեթոդների ընտրությանը: Այնուամենայնիվ, այս հարցումների և գնահատումների արդյունքների վերլուծության կամ դրանց հետ կապակցված բարելավումների օրինակներ առկա չեն:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների և բովանդակության հետ դրանց կապակցելիության տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ ՄՈՒՀ-ի դասացուցակում, մասնավորապես՝ «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի բակալավրիատի ուսանողների դասացուցակի համաձայն միաժամանակ նույն դասախոսը դաս ուներ երեք տարբեր կուրսերում՝ դասավանդելով երեք տարբեր մասնագիտական առարկաներ: Նույնը նկատվել է և՛ «Իրավագիտություն», և՛ «Կառավարում» ՄԿԾ-ների դասացուցակներում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանում կիրառվում են դասավանդման նաև ինտերակտիվ, սիմուլյացիոն, դերախաղային մեթոդներ (օրինակ՝ դատախաղեր): Ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են դասավանդման մեթոդներից:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՄՈՒՀ-ում ուսանողների ստուգման և գնահատման քաղաքականությունը կանոնակարգվում է «Ուսանողի գիտելիքի, կարողությունների և հմտությունների գնահատման կանոնակարգով», որը սահմանում է ԵՄՀ-ի ուսանողների գիտելիքների և կարողությունների ընթացիկ, միջանկյալ ու վերջնական ստուգման կանոնները:

ՄՈՒՀ-ում բակալավրի և մագիստրոսի մակարդակներում առկա և հեռակա ուսուցման ձևերում ուսանողների գնահատման համար կիրառվում է 100 միավորանոց ռեյտինգային համակարգ, որտեղ անցումային շեմը 40-նն է: Սահմանված են կուրսային աշխատանքի, պրակտիկաների, ամփոփիչ ատեստավորման, ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի բաղադրիչները:

ՄՈՒՀ-ը բոլոր դասընթացներում նախատեսել է հետազոտական կարողությունների գնահատում: Գնահատման համակարգում ողջ գնահատականից (100%)՝ հետազոտական կարողությունները գնահատող 5%-ն առանձնացվել է որպես արտալսարանային աշխատանքի բաղադրիչը գնահատելու համար: Նախատեսվում է այն ներառել ինքնուրույն անհատական աշխատանքների գնահատման բաղադրիչում, որի արդյունքում ընթացիկ գնահատման բաղադրիչը կկազմի ընդհանուր գնահատականի 25%-ը:

ՄԿԾ-ների նկարագրերում և առարկայական ծրագրերի փաթեթներում ներկայացված են գնահատման սկզբունքները և մեթոդները, սակայն վերջնարդյունքների հետ դրանց քարտեզագրումը արված չէ: Բացի այդ, առանձին դասընթացներում առկա չեն գնահատման չափանիշներ և նկարագրված չեն անհատական և ինքնուրույն աշխատանքի ստուգման և գնահատման ձևերն ու մեթոդները:

Պրակտիկայի ողջ ընթացքի հաշվետվությունն արձանագրվում է հատուկ օրագրերում, իսկ վերջում ուսանողները ներկայացնում են պրակտիկայի թղթապանակ՝

լրացված նախապես ներկայացված պահանջների համաձայն: Պրակտիկայի ընդհանուր գնահատականի մեջ արտացոլվում է նաև գործատուի գնահատականը:

ՄՈՒՀ-ում առկա է «Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգ», սակայն փորձագիտական վերլուծությունը ցույց տվեց, որ այն ընդհանրական է և տեղայնացված չէ: Ուսանողներին առանձին՝ հետազոտությունների ներածություն առարկայի շրջանակում ներկայացվում են հետազոտական գործունեության հմտությունները, այդ թվում՝ ակադեմիական ազնվության սկզբունքները: Սակայն, փորձագիտական այցի ընթացքում ամբիոններում պատահականության սկզբունքով ընտրված ավարտական աշխատանքների տեսական մասում (որոնք կազմում էին աշխատանքի գրեթե 40 տոկոսը) հղումները կամ բացակայում էին, կամ ձևակերպված էին ոչ ճշգրիտ: Մի շարք դեպքերում պատահականության սկզբունքով ընտրված բակալավրական ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում ինքնուրույն աշխատանքը խիստ սակավ էր (50 էջանոց մագիստրոսական թեզում մինչև 5 էջ): Քննությունները բակալավրի և մագիստրոսի մակարդակներում, ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսման ձևերում, հիմնականում անցկացվում են բանավոր կերպով: Սակայն, հեռակա և առկա կրթաձևերում ուսանողների գնահատման ձևերի համամասնությունները տարանջատված չեն:

Մագիստրոսական թեզերի գնահատման բաղադրիչները սահմանված են, սակայն դրանց ներկայացվող բովանդակային և տեխնիկական պահանջները սահմանված չեն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողներն ունեն իրենց գնահատականը բանավոր բողոքարկելու հնարավորություն:

ՄՈՒՀ-ում ուսանողների գնահատման համակարգը գտնվում է ՊԻԳԲ ցիկլի բարելավման փուլում: ՄՈՒՀ-ը մշակել է ձևավորվող գնահատման ուսումնամեթոդական ուղեցույցի նախագիծ:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկել մասնագիտությունների կրթական ծրագրերը ՀՀ և արտերկրյա (Իսպանիա, ՄԹ, Իտալիա, Գերմանիա) ԲՈՒՀ-երի նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համահունչ դարձնելու ուղղությամբ: ՄՈՒՀ-ն իրականացրել է մասնագիտությունների բակալավրական ծրագրի բենչմարքինգ, որը սակայն սահմանափակվել է արտաքին գործոնների (օրինակ՝ աշխատաշուկայի պահանջ), կոպետենցիաների, ուսուցման մեթոդների և առարկաների ցանկի համեմատմամբ:

ՄԿԾ-ների նկարագրերի ձևակերպման նպատակով ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումներն իրականացրել են բենչմարքինգ, սակայն կենտրոնացումը եղել է որակավորումների վրա, տարբեր շուկաներում աշխատուժի պահանջարկի ձևակերպումների վրա: Բուն ՄԿԾ-ների բովանդակության մասով արված բենչմարքինգը սահմանափակվում է կարողությունների՝ կոմպետենցիաների և մասամբ դասավանդման և ուսումնառության մեթոդների քննարկմամբ: Բենչմարքինգը չի արտացոլում այլ ՄՈՒՀ-երում գնահատման, ուսումնական պլանի կազմակերպման, տարբեր կրթական բաղադրիչների (այդ թվում՝ պրակտիկայի) բովանդակության

առանձնահատկությունները: Իրականացված բենչմարքինգը չունի եզրակացություն և չի հիմնավորում/փոխակապակցվում ՄՈՒՀ-ի սեփական կողմնորոշման հետ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բենչմարքինգի արդյունքում որոշ դեպքերում (օրինակ՝ «Կառավարում» ՄԿԾ) վերանայվել են ՄԿԾ-ի վերջնարդյունքները և ուսումնական պլանը:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՄՈՒՀ-ը մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման նպատակով մշակել է «Կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգ»-ը (2014թ.), որը գործածության մեջ է դրվել բոլոր ՄԿԾ-ների համար: Կարգը սահմանում է ՄԿԾ-ների մշտադիտարկման տարբեր փուլերով՝ ընթացիկ, տարեկան և երկարաժամկետ ուսումնասիրություններ:

ՄՈՒՀ-ը շահակիցների կարիքների վերհանման կարևոր մեխանիզմ է դիտարկում տարբեր շահակիցների շրջանում արվող հարցումները: Այս հարցումներն ու դասախոսի՝ ուսանողի կողմից գնահատման մեխանիզմն ուղղված են ծրագրերի իրականացման որակի վերաբերյալ բավարարվածության գնահատմանը:

ՄԿԾ-ների մշտադիտարկման նպատակին են ծառայում նաև գործատուների հետ կլոր-սեղան քննարկումներն ու հանդիպումները: ՄԿԾ-ների մշտադիտարկման և բարելավման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության մեխանիզմներից է նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների, արտադրական պրակտիկաներից ստացված արձագանքները, թեև ատեստավորման հանձնաժողովների ներկայացված կարծիքները կամ հաշվետվությունները սակավ են:

Ըստ ՄՈՒՀ-ի՝ ինքնավերլուծության, մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործողությունների արդյունքում վերանայվել են ՄԿԾ-ների իրականացման ուսումնական պլանները և հետազոտական թեմաների ընտրության և ձևակերպման մոտեցումները, սակայն այսպիսի գնահատումները և բարելավումները պարբերական չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՄՈՒՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ համապատասխանում են ՄՈՒՀ-ի առաքելությանը, ՈԱՇ-ին և աշխատաշուկայի պահանջներին: Այնուամենայնիվ, ՄԿԾ-ների վերջնարդյունքների ընդհանրական լինելը (առավել ևս բակալավրի և մագիստրատուրայի մակարդակներում դրանց գրեթե կրկնելիությունը) խոչընդոտում է դրանց չափելիությունը: Բացի այդ, ընդհանրական և մասնագիտական վերջնարդյունքների մեծ քանակությունը թե՛ ՄԿԾ, թե՛ դասընթացի մակարդակում կարող է հանգեցնել ներքին և արտաքին շահակիցների միջև հաղորդակցության դժվարությունների: ՄԿԾ-ի ձևաչափի կառուցվածքը, որտեղ վերջնարդյունքները ներկայացված են վերջում, նույնպես նպաստավոր չէ բովանդակային հաղորդակցության համար:

Բուհը, հավանաբար հետևելով ՈԱՇ-ի ձևաչափին, ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձևակերպան մեջ բաժանում է գիտելիքը, հմտությունները և կարողությունները, սակայն բաժանումը մեխանիկական է և խոչընդոտում է մասնագետի ամբողջական և համակողմանի, գործառնական բնութագրի ձևակերպումը:

Ուսումնական պլաններում առարկաների գործնական ժամերի սակավությունը ևս խոչընդոտ է ուսանողների կարողությունների ձեռքբերման և պրակտիկ հմտություններով շրջանավարտների պատրաստման տեսանկյունից: Ուսումնական պլանով սահմանված առարկաների համապատասխանությունը ՄԿԾ-ների վերջնարդյունքներին ապացուցված չէ, քարտեզագրումը մոտավոր է:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում ջանքեր են գործադրվում դասավանդման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ անմիջական շահակիցների կարծիքները ստանալու ուղղությամբ: Այդուհանդերձ, դասավանդման մեթոդների և կրթական ծրագրերի վերջնարդյունքների միջև կապը հստակ չէ: Առանձին ՄԿԾ-ներում ուսումնառության տարբեր մակարդակների ուսանողների համատեղ և միաժամանակյա դասավանդումը ռիսկային է դարձնում դասընթացի և ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձեռքբերումը և ուսանողների մոտ համապատասխան հմտությունների ձևավորումը:

ԵՄՀ-ում ուսանողների գնահատումը կանոնակարգված է, առկա է միավորային գնահատման քաղաքականություն, որը, սակայն, բարելավման կարիք ունի՝ հատկապես ոչ լսարանային ակտիվության գնահատման բաղադրիչի մասով: Հատկապես նպատակահարմար չէ հետազոտության համար տրվող միավորը համարել մասնակցության գնահատման բաղադրիչ, քանզի այս դեպքում խոսքը գնում է անհատական կամ ինքնուրույն աշխատանքի մասին, ինչը պարտադիր չէ, որ արտացոլվի լսարանային մասնակցությամբ կամ ակտիվությամբ: Քննությունների գնահատման ձևերը և մեթոդները պետք է համապատասխանեն գնահատվող վերջնարդյունքին, իսկ ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված քաղաքականության ոչ հստակ կիրառությունը, հատկապես՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ժամանակ, ռիսկային է օբյեկտիվ, արդար և թափանցիկ գնահատման տեսանկյունից:

ՄՈՒՀ-ը կատարել է բենչմարքինգ, սակայն ՄՈՒՀ-ի կողմից իրականացված բենչմարքինգը ներառում է արտաքին գործոնների լայն շրջանակ և այնպիսի արտասահմանյան ՄՈՒՀ-եր, որոնք համադրելի չեն ԵՄՀ-ի գործունեության և կարողությունների շրջանակին (օրինակ՝ Օքսֆորդի համալսարան, Վալենսիայի համալսարան և այլն): Այսպիսի բենչմարքինգը խոչընդոտում է ԵՄՀ ուսանողների և ՊԴ կազմի շարժունությունը:

Դրական է, որ ԵՄՀ-ում գործում է Կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգ: Այնուամենայնիվ, մշտադիտարկման արդյունքների համակողմանի վերլուծությունը և դրա փոխկապակցման բացակայությունը բարելավման գործողությունների հետ կարող է վտանգել ՄԿԾ-ների շարունակական և հիմնավորված բարելավումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների՝ հաստատության առաքելությանը, ՈԱՇ-ին, աշխատաշուկայի պահանջներին հիմնականում համահունչ լինելը, ուսուցման մեթոդների ընտրության և ուսանողների գնահատման քաղաքականության մասնակի կիրարկումը, բենչմարքինգի մեթոդաբանության և դրա կիրառման որոշակի փորձի առկայությունը, ՄԿԾ-ների վերանայման մեխանիզմների առկայությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն ջանքեր է գործադրում՝ բարելավելու և արդիականացնելու գործող ՄԿԾ-ները:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում առկա ուսուցման բակալավրիատի ընդունելությունն իրականացվում է «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի» համաձայն, իսկ հեռակա համակարգի և մագիստրատուրայի ընդունելությունները՝ ՄՈՒՀ-ում մշակված կարգի համաձայն՝ հատուկ կազմված ընդունող և առարկայական հանձնաժողովների կողմից:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների մոտավորապես 20-30%-ը ՄՈՒՀ է ընդունվում հեռակա հիմունքներով, այնուհետև հաջորդ ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվում առկա համակարգ: ՄՈՒՀ-ն այս փորձը դրական է գնահատում և հեռակա համակարգում սովորող ուսանողներին հնարավորություն է տալիս մասնակցել առկա համակարգի դասընթացներին՝ չավելացնելով ուսման վարձը:

ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում արտասահմանցի դիմորդների թվաքանակի ընդլայնման ուղղությամբ՝ ապահովելու իր ֆինանսական կայունությունը:

Ուսանողների հավաքագրման նպատակով ՄՈՒՀ-ը տեղեկություններ է տարածում սոցիալական ցանցերում, տպագրում է բուկլետներ, տեղադրում է տեղեկություններ Հայաստանի բուհերի տեղեկատուի մեջ, պատրաստում գովազդային վահանակներ և այլն:

ՄՈՒՀ-ը նաև Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնությամբ՝համագործակցությամբ իրականացնում է միջոցառումներ, որոնք նպաստում են բուհի ճանաչելիության բարձրացմանը: Նմանատիպ միջոցառումներից է ԿԳՆ երաշխավորությամբ համագործակից դպրոցներում իրականացվող «Քայլ առաջ» դասընթացների ծրագրը, որը ենթադրում է ավագ դպրոցներին առաջարկվող փոխադրելի հմտությունների զարգացման դասընթացներ:

Համալսարանը համագործակցում է նաև միջին մասնագիտական հաստատությունների հետ՝ «Քոլեջների աջակցման» ծրագրի շրջանակներում՝ իրականացնելով մասնագիտական դասընթացներ: Դասընթացներն իրականացվում են ԵՄՀ դասախոսների կողմից:

Մագիստրատուրայում ընդունելությունը տեղի է ունենում հետևյալ սկզբունքով՝ բուհի կամ մասնագիտության փոփոխության պարագայում ուսանողն անցնում է տվյալ մասնագիտության բովանդակությամբ հարցազրույց, իսկ նույն մասնագիտությամբ շարունակելու դեպքում մասնակցում է ընդունելության մրցույթին դիպլոմի վերջնական գնահատականների հիման վրա:

Դիմորդների շարժն արտահայտող քանակական վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջին տարիներին բուհի դիմորդների հիմնական մասը համալսարանին

կից գործող Օհանյան վարժարանի շրջանավարտներն են. համալսարանի կողմից կազմակերպվում են նախամասնագիտական դասընթացներ՝ ավելի ակտիվացնելով համալսարանի մասնագիտական ամբիոնների հետ կապը: Ուսանողների հոսքի հիմնական աղբյուրը՝ ուսանողների և ներքին այլ շահակիցների շրջանում ձևավորված դրական վերաբերմունքի հիման վրա կատարվող երաշխավորություններն ու խորհրդատվություններն են:

Ուսանողների հավաքագրման գործընթացն ավելի կանոնակարգելու և թիրախավորելու նպատակով ՄՈՒՀ-ը իրականացրել է վերոնշյալ հետազոտությունը՝ վերլուծելով ուսանողների հոսքը և մշակել «Ուսանողների հավաքագրման ռազմավարական ծրագիր» նախագիծ: Նախագծի համատեքստում ՄՈՒՀ-ն առանձնացնում է 2 հիմնական նպատակ՝ Ընդունելության համակազմի ավելացում և Համալսարանի տեսանելիության բարձրացում: Հետևյալ նպատակների համար բուհը սահմանում է թիրախային ցուցանիշներ (թիրախային համապատասխան խմբեր և դրանց քանակի տոկոսային նախատեսվող ցանկալի աճի ցուցանիշը): ՄՈՒՀ-ը համարում է, որ տվյալ նպատակների իրականացումը կհանգեցին ուսանողների դիմելիության մակարդակի բարձրացմանը, և հետևաբար՝ բուհում ուսանողների թվաքանակի աճին:

Ներկայացված նախագծի համաձայն՝ ՄՈՒՀ-ն առանձնացնում վերոնշյալ նպատակների իրականացման 8 հիմնական ոլորտներ (Ծառայություն, Արժեք, Վայր, Առաջխաղացում, Գործընթացներ, Ֆիզիկական միջավայր, Մարդիկ, Արդյունավետություն և որակ) և դրանց վերաբերյալ հատկորոշված խնդիրներ, որոնք հիմք կհանդիսանան տարբեր ստորաբաժանումների աշխատանքի պլանավորման համար:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Եվրասիա միջազգային համալսարանում գործում են ուսանողների կրթական կարիքների վերհանման որոշակի մեխանիզմներ՝ներգրավվածություն գիտական խորհրդում, ամբիոնային որակի ուսանող գործակալների ներգրավվածություն, ամենամյա հարցումներին մասնակցություն:

Ուսանողների կարիքների բացահայտումը իրականացվում է մի քանի ուղղություններով՝ ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատում (խորհրդատվություն, ուսումնական գործընթացների գնահատում, ԵՄՀ ներքին կառույցների գործունեության գնահատում, կրթական միջավայրի գնահատում և այլն), դասախոսների գնահատում, միջոցառումների (նախագծեր, սեմինարներ, վարպետության դասեր և այլն) արդյունավետության միանգամյա գնահատումներ, առարկայական ծրագրերի գնահատում Որակի ուսանող գործակալների կողմից, որը ենթադրում է ուսանողների կողմից ծրագրի բովանդակության, մեթոդների արդյունավետության, ուսանողների ծանրաբեռնվածության, ժամաքանակի և թեմաների, դասավանդող նյութի ներկայացման որակի վերաբերյալ գնահատում:

Բուհի որակի ապահովման կենտրոնը նման կարիքների բացահայտումն ու գնահատումն իրականացնում է հատուկ մշակված հարցաշարերի միջոցով՝ ապահովելով հարցման մասնակիցների անանունությունը: Իրականացված հարցումների արդյունքների վերլուծությունը կատարվում է բուհի ՈԱ կենտրոնի կողմից ու հիմնականում արտացոլում է ստացված տվյալների տոկոսային բաշխումը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողական տարբեր կառույցների ներկայացուցիչներ մասնակցել են ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպված հարցումների կրթական միջավայրի և բովանդակության մասին, ինչպես նաև ամբիոնների պատասխանատուների սույն թվականի եռօրյա վերապատրաստումներին, բարձրաձայնել են իրենց մտահոգությունները գնահատման համակարգի բաղադրիչների վերաբերյալ: Ուսանողները նշեցին, որ հետևողական են լինելու իրենց ներկայացրած պահանջների նկատմամբ, և համապատասխան օղակներից ստացել են արձագանք՝ նոր ուսումնական տարում գնահատման համակարգում սպասվելիք փոփոխությունների մասին:

Առկա է նաև շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման, բողոքների, առաջարկների ներկայացման էլեկտրոնային առանձնացված փոստի հասցե (qbox@eiu.am): Այնուամենայնիվ, դրա ակտիվ գործարկման փաստ հանդիպումների ժամանակ չհիշատակվեց այն հիմնավորմամբ, որ լինելով փոքր հաստատություն՝ ՄՈՒՀ-ը հնարավորություն է ընձեռում ուսանողներին իրենց մտահոգությունները բարձրաձայնել ամենաբարձր մակարդակներում անմիջական շփման միջոցով:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ՄՈՒՀ-ում ուսանողները խորհրդատվություններ են ստանում դասախոսներից, ամբիոնների աշխատակիցներից և խնդրի բնույթով պայմանավորված՝ համապատասխան ստորաբաժանումներից: Ուսանողներին հիմնականում խորհրդատվություններ տրամադրում են դասախոսները, ում հետ հանդիպումները բացի նախապես մշակված գրաֆիկի, կարող են կրել նաև ազատ բնույթ՝ հիմնված ներքին պայմանավորվածության վրա:

Դասախոսների հետ խորհրդատվություններ ազատ և նախապես կանոնակարգված բնույթով իրականացվում են նաև քննություններից առաջ և համատեղ հետազոտական աշխատանքների կատարման ընթացքում:

ՄՈՒՀ-ը կազմակերպում է նաև օտար լեզվի (մասնավորապես՝ անգլերենի) անվճար լրացուցիչ պարապմունքներ: Որպես նման պարապմունքների իրականացման հիմնական պատճառ՝ նշվում է ուսանողների շարժունության ընդլայնման ձգտումը դեպի արտերկրյա համագործակից բուհեր: Բուհում կազմակերպվում են նաև սեմինարներ, արտերկրից ժամանած մասնագետների մասնակցությամբ դասախոսություններ և վարպետաց դասեր: Իրականացված հարցումների արդյունքներից պարզ է դառնում, որ ուսանողներն ունեն բարձր բավարարվածություն բուհում կազմակերպվող խորհրդատվություններից (խորհրդատվական ծառայություններից բավարարված է ուսանողների 89%-ը, ընդ որում՝ միանշանակորեն այո՝ 61%, հիմնականում այո՝ 28%-ը):

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Նախորդ հավատարմագրման արդյունքում ԵՄՀ-ն մշակել է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, որը փակցված է շահակիցների համար

տեսանելի վայրում: Չնայած կանոնակարգի և ժամանակացույցի առկայությանը՝ ՄՈՒՀ-ի ներքին շահակիցների հավաստմամբ ցանկացած ուսանող հնարավորություն ունի առանց որոշակի միջնորդության դիմել ՄՈՒՀ-ի տարբեր ստորաբաժանումներ (ամբիոններ, որակի ապահովման կենտրոն, միջազգային կապերի կենտրոն և այլն) և ստանալ իրեն հուզող խնդիրների լուծումը: Ֆակուլտետների և համապատասխանաբար դեկանատների բացակայության պարագայում ուսանողներին վերաբերող վարչական հարցերը կարգավորվում են ամբիոններում՝ ամբիոնային հատուկ աշխատակիցների կողմից, օրինակ՝ ուսանողներին իրենց առաջադիմության տվյալների տրամադրում, տեղեկանքների, դիմումների կազմում, համապատասխան տեղեկատվության տրամադրում կրթաթոշակների, ուսումնական վարձերի զեղչումների և այլնի մասին:

ՈԱ կենտրոնի կողմից կատարված հարցումների արդյունքների համաձայն՝ ուսանողների 90%-ը (միանշանակորեն այո՝ 49%, հիմնականում այո՝ 41% համամասնությամբ) բավարարված է բուհի վարչական ծառայություններից:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

2014-2018 թթ. Ռազմավարական ծրագրի մշակման ընթացքում վերանայված ԵՄՀ Կազմակերպական կառուցվածքի համաձայն, ԵՄՀ նախագծերի կենտրոնը միացել է Կարիերայի կենտրոնին, որն էլ իր հերթին վերանվանվել է «Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի»: Դրան համապատասխան վերանայվել են նաև կենտրոնի գործառույթները:

Ուսանողների կարիերային նպաստելու նպատակով ՄՈՒՀ-ը պարբերաբար կազմակերպում է Կարիերայի օրեր, խորհրդատվություններ, դասընթացներ և սեմինարներ, որոնց մասնակցում են ՀՀ Գործատուների միությունը, այլ բուհերի ներկայացուցիչներ, հասարակական կառույցներ, առանձին գործատուներ, աշխատուժի տեղավորման գործակալությունների ներկայացուցիչներ և այլն, ինչպես նաև ներքին շահակիցներ՝ ուսանողներ, վարչական աշխատողներ, պրոֆեսորադասախոսական կազմ և այլն:

Կարիերայի կենտրոնի առանցքային գործառույթներից է նաև շրջանավարտների աջակցումը աշխատանքի տեղավորման հարցում:

Ըստ բուհի ներկայացվրած տվյալների՝ ավարտելուց 2-5 տարի անց աշխատանքի տեղավորված ուսանողների թիվը կազմում է79%-ը[4], ընդ որում՝ այդ ցուցանիշը վերջին տարում նվազել է՝ հասնելով 66%-ի: Նվազման պատճառներն ուսումնասիրված չեն: Բացի Կարիերայի կենտրոնից, համալսարանի ամբիոնները ևս աջակցում են ուսանողներին աշխատանքի ուղղորդման հարցերում:

Ուսանողների՝ կարիերային նպաստող գործընթացներ են նաև պրակտիկաները, որոնք կրում են պասիվ և ակտիվ բնույթ:

Փորձագիտական այցի ընթացքում գործատուների, կարիերայի կենտրոնի և ամբիոնային համապատասխան ներկայացուցիչների կողմից նշվեց, որ պրակտիկային առնչվող քննարկումներ իրականացնելու համար գործատուների հետ պարբերաբար կազմակերպվում են կլոր սեղան հանդիպումներ (Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Վիվասել ՍՏՍ ՓԲԸ , Լինգվա լեզվի կենտրոն, Արմհոթելզ ընկերություն և այլն):

---

[4] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

Նմանօրինակ հանդիպումների ընթացքում քննարկված խնդիրներից են պրակտիկայի վայրի և ուսանողների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների (հիմնականում՝ ավարտական աշխատանք, մագիստրոսական ատենախոսություն) ոլորտային համապատասխանության ապահովումը, գործատուի կողմից իրականացվող գնահատման հստակեցումը և այլն:

Հարցումների արդյունքներից պարզ է դառնում, որ ուսանողների 91%-ը բավարարված է «Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի» աշխատանքներից:

Կարևորելով բուհ-շրջանավարտ համագործակցության ապահովումը՝ համալսարանը մշակել է տվյալ օղակների կապի ապահովման մեխանիզմ՝ Շրջանավարտների միություն: Շրջանավարտների միությունը ձևավորվել է դեռևս 2014թ-ի ապրիլին, 2015թ. հոկտեմբերին ԵՄՀ գիտական խորհրդի կողմից նշանակվել է Շրջանավարտների միության նախագահի պաշտոնակատար, որը ձևավորել է նախաձեռնող խումբ միության կանոնադրության մշակման համար:

Շրջանավարտների միության կանոնադրությամբ ամրագրված են կառույցի հիմնական գործառույթները. գործատու-շրջանավարտ փոխադարձ պահանջների բացահայտումը, ուսանողների հետ հանդիպումների կազմակերպումն ու համագործակցության համակարգումը, շրջանավարտներին աջակցության տրամադրումը աշխատանք գտնելու գործընթացում և այլն: Չնայած միությունն ունի մշակված կանոնադրություն և սահմանված գործառույթներ, տվյալ նպատակների իրականացման ուղղությամբ կոնկրետ աշխատանքների պլանավորումներ և դրանց հաշվետվություններ առկա չեն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տվյալ կառույցը դեռևս չի ունեցել շոշափելի ներդրում սահմանված նպատակների իրականացման ուղղությամբ:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՄՈՒՀ-ն իր ռազմավարական առաջնահերթություններից է համարում ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում և նորարարական նախաձեռնություններում: Այդ նպատակով ՄՈՒՀ-ը սահմանել է ուսանողների հետազոտական գործունեության խրախուսման որոշ կառուցակարգեր: Այդ կառուցակարգերից են մասնավորապես դասախոս-ուսանող համատեղ հետազոտությունների խրախուսման նպատակով ստեղծված ներքին դրամաշնորհները:

Փորձագիտական այցի ընթացքում դասախոսներն ու ուսանողները նշեցին, որ ներքին դրամաշնորհների շրջանակներում իրականացնում են համատեղ հետազոտական աշխատանքներ: Սակայն երկու կողմն էլ հստակ չներկայացրեց այդ գործընթացում դասախոսների և ուսանողների գործառույթների սահմանը, ինչպես նաև դրամաշնորհների ֆինանսական միջոցների բաշխման համամասնությունն ուսանողի և դասախոսի միջև:

Փորձագիտական այցի ընթացքում նշվեց նաև, որ ուսանողների հետազոտական աշխատանքների (այդ թվում՝ ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր) վերահսկումը գիտական չափանիշներին համապատասխանության տեսակետից իրականացվում է միայն ղեկավար դասախոսների կողմից:

Որպես ուսանողների հետազոտական գործունեության խրախուսման մեխանիզմ՝ ՄՈՒՀ-ը սահմանել է նաև «Հետազոտական կրթաթոշակը», որը շնորհվում է Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի կողմից:

Կրթաթոշակը տրամադրվում է ուսանողին՝ հետազոտական ծրագրի ժամանակահատվածում ուսման վարձի 5%-ի չափով՝ հիմք ընդունելով համալսարանի գիտահետազոտական աշխատանքներում ուսանողի ունեցած ակտիվ մասնակցությունը: Տվյալ կրթաթոշակի տրամադրման այլ կոնկրետ չափանիշներ սահմանված չեն:

ԵՄՀ-ն տարին երկու անգամ հրապարակում է ներբուհական գիտաժողովների նյութերի «Բանբեր» պարբերականը, որը հիմնվել է 2016 թվականին և հասանելի է նաև բուհի կայքէջում: Այս տպագիր հարթակում հրատարկվում են նաև ուսանողների հետազոտությունները: Առկա է «Բանբեր»-ի չորս համար՝ հրապարակված 2016 թվականից, որի միայն վերջին համարում առկա են հոդվածներ երեք ուսանողների համահեղինակությամբ:

Տարբեր աշխատություններում ուսումնառողների հեղինակությանք և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը 2013-2017 թթ.-ին աճ է գրանցել (հոդվածների թիվը 0-ից դարձել է 15, իսկ զեկույցների թիվը 10-ից աճել է 51-ի):

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց նաև, որ դեռևս 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից ուսանողներն ուսումնասիրում են «Հետազոտական հմտությունների ներածություն» դասընթացը, ծանոթանում հետազոտական աշխատանքների կատարման առանձնահատկություններին: Պարզվեց նաև, որ ուսանողները տեղյակ են ՄՈՒՀ-ում «Ակադեմիական ազնվության կարգ»-ի առկայության մասին, սակայն չեն տիրապետում դրա բովանդակությանը և չեն մասնակցել մշակման գործընթացին:

Որպես ուսանողների հետազոտական աշխատանքների համակարգման օղակ 2016 թվականին ՄՈՒՀ-ը ստեղծել է ՈՒԳԸ-ը, որն ունի մշակված կանոնադրություն: Չնայած կառույցի առկայությանը՝ փորձագիտական այցի ընթացքում արձանագրվեց, որ ՈՒԳԸ-ն դեռևս ակտիվորեն չի իրականացնում իր գործառույթները (այն է՝ գիտագործնական սեմինարների կազմակերպում, ներբուհական և միջբուհական գիտաժողովներ և այլն):

ԵՄՀ ՈԱ կենտրոնի կողմից իրականացված հարցումների արդյունքների համաձայն՝ ուսանողների 85%-ը բավարարված է բուհում հետազոտական աշխատանքներով զբաղվելու առկա հնարավորություններով և այդ աշխատանքներում իր ընդգրկվածությամբ:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ԵՄՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների քննարկման և շահերի ներկայացման համար պատասխանատու մարմիններ են՝ Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈՒԽ) և Ուսանողների իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ ՈՒԻՊ): ՈՒԽ-ը գործում է բուհի հիմնադրման օրվանից սկսած (1997թ.) և առաջնորդվում է ԵՄՀ ՈՒԽ կանոնադրությամբ, որը վերանայվել է 2013 թվականին: ՈՒԻՊ-ի ինստիտուտը հիմնադրվել է 2013 թվականին և ունի մշակված գործունեության կարգ. այն, ինչպես ՈՒԽ-ն, անկախ մարմին է: ՈՒԽ-ի և ՈՒԻՊ-ի գործունեության գերակա նպատակը ուսումնառողների իրավունքների և օրինական շահերի իրականացումն է և պաշտպանությունը:

ՈւԽ և ՈւԻՊ ֆակուլտետային կամ բուհական կառույցների նախագահների պաշտոնում կարող են ընտրվել բավարար և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները (100 միավորանոց գնահատման համակարգով՝ 63 և ավելի):

ԵՄՀ ուսանողական խորհրդը կազմված է 2 բաժիններից՝ ուսանողական ընդհանուր խորհուրդ և ԵՄՀ ՈւԳԸ:

ԵՄՀ ՈւԽ ընդհանուր խորհուրդի կազմը ձևավորվում է ամբիոնների ավագներից, ուսուցման բոլոր ձևերի համապատասխան կուրսերի ավագներից և ՈւԽ նախագահից: ՈւԽ-ի ներկայացուցիչը կառույցի հիմնական գործառույթների մեջ առանձնացրեց սպորտային, գիտական և մշակութային միջոցառումների կազմակերպումը, բուհում կազմակերպչական աշխատանքների կանոնակարգումը:

ՈւԻՊ գործունեության կարգում մանրամասն նկարագրված է նրա ընտրության ընթացակարգը: ՈւԻՊ ընտրության ընթացքում ներկայացվող պարտադիր պահանջներից է իրավագիտության ամբիոնի ուսանող լինելը և ուսանողների 15%-ից ավելի ձայնի առկայությունը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՈւԻՊ ընտրությունները կրում են ամենամյա բնույթ և որպես հիմնական նպատակ, ենթադրում են իրավաբանական ֆակուլտետի ուսանողների գործնական հմտությունների զարգացում կոնկրետ օրինակների և դեպքերի վերլուծմամբ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ գործնականում հստակ տարանջատված չեն ՈւԽ-ի և ՈւԻՊ-ի գործառույթները: Արդյունքում՝ ՈւԻՊ-ի գործառույթները լիովին կրկնում են ՈՒԽ գործառույթները:

ՈւԽ նախագահը և ՈւԻՊ ներկայացուցիչը ՄՈՒՀ-ի Գիտական խորհրդի անդամներ են: Գիտական խորհրդի նիստում, ըստ իրենց հավաստման, ներկայացրել են գնահատման ընթացակարգի, բողոքարկման կարգի վերաբերյալ խնդիրներ:

ՄՈՒՀ-ում առկա ուսանողների դիմում-բողոքները սակավ են: Որպես հիմնական պատճառ համալսարանն առանձնացնում է գործունեության բաց և թափանցիկ բնույթը. ցանկացած խնդիր արձանագրվում և կարգավորում է ամբիոնային մակարդակով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ առկա չեն ուսանողների դիմում-բողոքների վիճակագրական և որակական վերլուծություններ:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման հիմնական մեխանիզմը ամենամյա հարցումներն են, որոնք կազմակերպվում են ինչպես որակի ապահովման կենտրոնի կողմից՝ հարցաթերթային ձևաչափով, այնպես էլ ամբիոնների կողմից՝ հրավիրվող քննարկումների տեսքով: Փորձագիտական այցի ընթացքում ուսանողները նշեցին, որ բուհի Ինքնավերլուծության մշակմանը մասնակցել են՝ նմանատիպ հարցումներին մասնակցություն ունենալով: Բացի այդ, ՄՈՒՀ-ն ունի ՈԱ ուսանող գործակալներ, որոնց անմիջական մասնակցությամբ իրականացվում է նաև առարկայական ծրագրերի գնահատում: Առարկայական ծրագրերի գնահատման ընթացքում ուսանողները ներկայացնում են իրենց կարծիքը ծրագրի բովանդակության, մեթոդների արդյունավետության, ուսանողների ծանրաբեռնվածության, թեմաների, դասավանվող նյութի ներկայացման որակի վերաբերյալ:

ԵՄՀ ուսանողներն իրականացնում են նաև դասախոսների ամենամյա գնահատում՝ անդրադառնալով ներկայացված նյութերի որակին, ընտրված դասավանդման մեթոդների արդյունավետությանը, մատչելիությունը և այլն: Ուսանողները տեղյակ էին իրենց գնահատականի ունեցած ազդեցության մասին. արդյունքներն օգտագործվում են դասախոսների ընդհանուր գնահատման ժամանակ, որտեղ ուսանողի կողմից դասախոսի գնահատականը կազմում է ընդհանուր ուսումնամեթոդական աշխատանքների գնահատականի 25%-ը:

Չնայած բուհում ուսանողների կրթական և այլ բնույթի կարիքների վերհանման նպատակով կազմակերպվում են պարբերական հարցումներ, այնուամենայնիվ, տվյալ հարցումների վերլուծությունները կրում են զուտ նկարագրական բնույթ: Բացակայում են տվյալ հարցումների արդյունքների պատճառների վերլուծությունը, դրանց հետ կապված բարելավման գործողությունների պլանները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՄՈՒՀ-ն ուսանողների հավաքագրման և ընտրության գործընթացն առավել կանոնակարգելու նպատակով մշակել է «Ուսանողների հավաքագրման և ընտրության ռազմավարական ծրագրի» նախագիծ: Դրանում առանձնացված 8 հիմնական ոլորտները և հստակեցված խնդիրների լուծումը, ՄՈՒՀ-ի հավաստմամբ կհանգեցնի բուհում ուսանողների թվաքանակի աճին:

Փորձագիտական խումբը հեռակա ուսուցման ձևից ուսումնառության երկրորդ տարում առկա ձևի համատարած տեղափոխման մոտեցումը համարում է խնդրահարույց, քանի որ այդ դեպքում ուսանողը փաստացի չի հանձնում տվյալ մասնագիտության համար պարտադիր միասնական ընդունելության քննությունները: Բուհը հնարավորություն է տալիս նաև հեռակա ուսանողների մասնակցություն առկա համակարգի դասընթացներին այն դեպքում, երբ բացակայում են նման ձևաչափով սովորող ուսանողների քննությունների հանձնման հստակ և թափանցիկ կարգեր: Այս կերպ խաթարվում է մուտքի պահանջի և ըստ ուսուցման ձևերի բեռնվածության և ստուգման ձևերի տարանջատման տրամաբանությունը, ինչը վտանգում է կրթության որակը: Բացի այդ, այսպիսի տեղափոխման ժամանակ լրացուցիչ ֆինանսական պարտավորությունների չկիրառումն անհավասար պայմաններ է ստեղծում կրթական նույն պայմաններում սովորող առկա ուսուցման ձևի ուսանողների նկատմամբ:

Փորձագիտական խումբը դրական է համարում միջազգային ուսանողների ներգրավման ուղղությամբ բուհի ջանքերը, քանի որ նման մոտեցումը կարող է ապահովել ֆինանսական կայունություն՝ ֆինանսական նոր մուտքերի հաշվին:

Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման ընդունված քաղաքականություն, ընթացակարգեր և դրանց իրականացման համար մշակված գործիքներ: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ հարցումների մեթոդաբանությունն ունի կատարելագործման կարիք՝ արդյունքների վերլուծական մոտեցման և դրանց հիման վրա բարելավման գործընթացների մշակման տեսանկյունից:

Հարցումների քանակական տվյալներից պարզ է դառնում, որ ուսանողներն ունեն բարձր բավարարվածություն ՄՈՒՀ-ի տրամադրած կրթությունից և այլ օժանդակ ծառայություններից:

Համալսարանի ցածր առաջադիմությամբ ուսանողների ցուցանիշի հիմքում ընկած պատճառների վերլուծության բացակայությունը մտահոգիչ է: Այսպիսի ուսանողների հայտորոշման մեխանիզմների և ուսանողների աջակցության ավելի կուռ և արդյունավետ համակարգի բացակայությունը վտանգում է ուսանողների շարունակական առաջընթացը և դրա հետ անմիջականորեն կապված համալսարանական այլ գործառույթները:

Ողջունելի է ՄՈՒՀ-ի կողմից ուսանողների՝ համապատասխան գրաֆիկով և ըստ նախնական պայմանավորվածության խորհրդատվությունների կազմակերպումը, ՄՈՒՀ-ի անմիջական գործելակերպը և ուսանողների շրջանում առկա վստահության մակարդակը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև օտար լեզվի անվճար պարապմունքների կազմակերպումը ՄՈՒՀ-ում, ինչը կարող է նպաստել ուսանողների շարժունության ընդլայնմանը:

Թեև «Շրջանավարտների ասոցիացիայի» ստեղծումը առաջանցիկ զարգացում է, տվյալ կառույցի արդյունավետ գործունեության բացակայությունը խոչընդոտում է շրջանավարտների և ՄՈՒՀ-ի միջև կապին և շրջանավարտների ներգրավմանը ՄՈՒՀ-ի համապատասխան գործառույթներում:

Դրական է, որ ՄՈՒՀ-ը մշակել է ուսանողների՝ հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկվելու խրախուսման մեխանիզմներ: Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի ներքին դրամաշնորհների շրջանակներում ուսանողի գործառույթների սահմանման և ֆինանսական բաշխման համամասնության անհստակությունը կարող է խոչընդոտել հետազոտական գործողություններում ուսանողների պատշաճ ներգրավվածությունը: Ռիսկային է այն, որ ցանկացած բնույթի և ծավալի ուսանողական հետազոտությունների ողջ ընթացքը, կատարված աշխատանքի համապատասխանությունը գիտական աշխատանքի սահմանված չափանիշներին և ակադեմիական ազնվության պահանջներին վերահսկվում է միայն տվյալ աշխատանքի գիտական ղեկավարի կողմից: Բացակայում են վերահսկման այլ՝ հիմնականում տեխնիկական-ծրագրային մեխանիզմները, այսինքն՝ համակարգչային հատուկ ծրագրերի օգնությամբ ուսանողների կողմից կատարված հետազոտական աշխատանքի ստուգումը՝ օգտագործված աղբյուրների հավաստիության, աղբյուրի օգտագործման ծավալի և գիտական չափանիշներին համապատասխանության տեսանկյունից:

Սա կարող է հանգեցնել ոչ որակյալ գիտական արդյունքի ստեղծմանն ու տարածմանը: Այս համատեքստում վերանայման կարիք ունի ՈՒԳԸ-ի՝ որպես առանձին կառույցի ստեղծման նպատակահարմարությունը, հստակեցման և կանոնակարգման կարիք ունեն նաև դրա հետագա գործառույթները:

ՈՒԽ-ի և ՈՒԻՊ-ի առկայությունը և սահմանված կանոնադրությունները փաստում են, որ ուսանողների համար առկա են բավարար պայմաններ սեփական իրավունքների պաշտպանության, խնդիրների բարձրաձայնման տեսանկյունից: Սակայն թերի են այդ կառույցների գործարկման մեխանիզմները: Կառույցները չեն իրականացնում իրենց կողմից ուսանողների շահերի պաշտպանության դեպքերի քանակական և որակական վերլուծություններ, դիմելիության վիճակագրության կազմում (ուսանողների կողմից ավելի շատ բարձրաձայնված խնդիրների առանձնացում, պատճառների բացահայտում), տվյալների վերլուծություններ և դրանցից բխող եզրահանգումներ: Ե՛վ ՈՒԽ-ը, և՛ ՈՒԻՊ-ը

որպես ուսանողների կողմից բարձրացված խնդրի օրինակ, ներկայացրին միայն ուսանողների անբավարարվածությունը գնահատումից և բողոքարկման մեխանիզմներից: Ըստ էության՝ տվյալ կառույցների գործառույթները հատվում են, ինչը կասկածի տակ է դնում նման փոքր բուհի պայմաններում ՈՒԻՊ ինստիտուտի առկայության անհրաժեշտությունը: Չեն հստակեցված նաև հեռակա ուսուցման ձևի ուսանողների ներգրավման մեխանիզմները, որը անհավասար իրավական պայմաններ է ստեղծում հեռակա և առկա ուսանողների միջև:

Ողջունելի է այն, որ բուհն իրականացնում է կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատում՝ ամենամյա հարցումների միջոցով: Այնուամենայնիվ, տվյալ հարցումների հիման վրա կատարվող բարելավման գործընթացները դեռևս կանոնակարգման կամ նախագծման փուլում են: Ըստ որում, բարելավման գործընթացների համար հիմք ծառայող փաստաթղթերը կամ հայեցակարգերը բացահայտ կերպով հղում չեն անում հարցումների արդյունքներին՝ այս կերպ խաթարելով պատճառահետևանքային կապերը և ՊԻԳԲ շրջափուլի շարունակականությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ուսանողների հավաքագրման 2019-2023թթ.-ի ռազմավարական ծրագրի նախագծի, ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության կառուցակարգերի, աշխատակազմին դիմելու և ուսանողների օժանդակության ժամանակացույցի և կանոնակարգի, լրացուցիչ պարապմունքների և կարիերային նպաստող ծառայությունների, ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկելու մեխանիզմների և ուսանողների իրավունքների պաշտպանության համապատասխան մարմինների առկայությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԵՄՀ-ն համապատասխանում է Չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Բարձրագույն ուսումնական հաստատությունն իր առջև դրված խնդիրները լուծելու համար համալսարանական իրավական ակտերով ստեղծել է ՄՈՒՀ-ում պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: Մասնավորապես՝ սահմանված են «ԵՄՀ

Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը» և, «ԵՄՀ Վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության կանոնակարգը»:

ՄՈՒՀ-ում սահմանված է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատակիցների՝ աշխատանքի ընդունման մրցութային կարգ, թեև 0.50 և 0.25 դրույքով աշխատողներ կարող են ընդունվել առանց մրցույթի՝ ԲՈՒՀ-ի ռեկտորի հրամանով: Հարկ է ընդգծել, որ ՄՈՒՀ-ի աշխատակիցների մեծ մասն ունի 0.50 և 0.25 դրույքին համապատասխան ծանրաբեռնվածություն, հետևաբար, ընդունվել է առանց մրցույթի:

Ուսումնաօժանդակ կազմի համար տարբերակված են նաև փակ (ներքին) և բաց (արտաքին) մրցույթներ իրականացնելու կարգերը: Նշված հայտարարությունները հրապարակվում են համալսարանի ներքին ցանցում և ինտերնետային կայքում:

Նման պայմաններում, ըստ ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության, ԵՄՀ-ի բոլոր մասնագիտությունների գծով բակալավրիատում դասավանդող գիտական աստիճան ունեցող դասախոսների թիվը 2017-2018 ուսումնական տարում ավելացել է 5-ով՝ ի համեմատ 2014-2015 ուսումնական տարվա տվյալների: Նույն ժամանակաշրջանի համար աճի միտում է գրանցվել նաև մագիստրատուրայում՝ 67%-ից (7 դասախոս) հասնելով 74%-ի (12 դասախոս):

Բուհում պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ աշխատակիցների աշխատանքի ընդունումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի մրցութային կարգով ընտրությունը:

ՊԴ կազմի նկատմամբ ՄԿԾ-ներում առաջադրված պահանջները և որակավորման նկարագրիչներն ընդհանրական են ըստ տարակարգերի կամ պաշտոնների, սակայն ոչ ըստ ոլորտների կամ մասնագիտացումների: Բացի այդ, չկան նաև ըստ ՄԿԾ-ների նպատակների և խնդիրների ՊԴ կազմի ընտրության առանձնացված չափանիշներ: «ԵՄՀ ՊԴ կազմի ձևավորման կանոնակարգի» կիրարկման արդյունավետության գնահատում իրականացված չէ:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Ըստ ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության՝ ՈԱԱԿ արտաքին փորձագետների խորհրդատվության հիման վրա պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական նվազագույն պահանջները հստակեցվել են. ԵՄՀ ՄԿԾ ձևաչափի վերանայման ընթացքում առանձնացվել է «Դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները» բաժինը: Այնուամենայնիվ, ՄԿԾ-ների նկարագրերում ՊԴ կազմին ներկայացվող պահանջներն ըստ պաշտոնի և տարակարգի են, ուստի և ընդհանուր են բոլորի համար և տարանջատված չեն ըստ դասավանդվող ծրագրի: Պահանջները հիմնականում հանգում են հետևյալին՝

ա. գիտական կոչում, աստիճան, կրթական ցենզ՝ ըստ պաշտոնի,

բ. դասախոսական/մասնագիտական աշխատանքի ստաժ,

գ. հմտություններ և կարողություններ (մանկավարժական աշխատանքի հմտություններ և այլն),

դ. անձնական հատկանիշներ (ժամանակի կառավարման հմտություններ),

ե. հատուկ գիտելիքներ (անգլերենի և/կամ ռուսերենի լավ իմացություն, համակարգչային հմտություններ):

Նեղ մասնագիտական առարկաների մասով ոլորտին վերաբերող հետազոտությունների առկայության կամ համապատասխան բնագավառում աշխատանքային փորձի պահանջ չի ներկայացված:

ՄՈՒՀ-ն ունի պաշտոնի անձնագրեր, որոնց ձևակերպումներն ընդհանրական են, առանց մասնագիտական տարբերակվածության:

Տարբեր բնագավառների գիտական աստիճան ունեցող դասախոսներ են ներգրավված Իրավագիտության, Կառավարման և Օտար լեզուների և գրականության ամբիոնում: Նման հնարավորություն ընձեռված է պաշտոնի անձնագրերի ընդհանրական բնույթով, օրինակ՝ Իրավագիտության ամբիոնի դասախոս կարող է լինել նաև փիլիսոփայության և բարոյագիտության, քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների և այլ ոլորտի մասնագետը:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ՄՈՒՀ-ը, դասախոսական կազմի պարբերաբար գնահատում իրականացնելու նպատակով, սահմանել է գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր: Բացի այդ, մշակվել է գործիքակազմ, որի նպատակն է նպաստել աշխատակազմի հավաքագրում-ընտրություն-գնահատում-վերապատրաստում շրջափուլի արդյունավետ իրականացմանը:

ՄՈՒՀ-ում գործում է դասախոսների բազմաբաղադրիչ գնահատման մեխանիզմը՝ ուսումնամեթոդական (ինքնագնահատում, ամբիոնի վարիչի կողմից գնահատում և ուսանողների կողմից գնահատում), գիտական գործունեություն (ինքնագնահատում և ճշգրտում ՀԿ կողմից) և հասարակական աշխատանքներ (ճշգրտում ամբիոնի վարիչի կողմից): Այս ամենի միջին կշռված գնահատականը ձևավորվում է դասախոսի վարկանիշը:

Ուսանողների կողմից դասախոսի գնահատման կարգը ենթադրում է անանուն հարցաթերթիկի լրացում տվյալ դասընթացին մասնակցած ուսանողի կողմից: Ուսանողների կողմից դասախոսներին գնահատելու արդյունքները հիմնականում բարձր են:

ՊԴ կազմի բազմաբաղադրիչ գնահատման արդյունքները ՄՈՒՀ-ի համապատասխան ստորաբաժանման կողմից ամփոփվում են, և դրա հիման վրա բարձր գնահատված դասախոսների համար կարող են սահմանվել պարգևավճարներ: Սակայն, ըստ փորձագիտական խմբին ներկայացված պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման արդյունքների, Կառավարման ամբիոնի գնահատված 18 դասախոսներից 4-ը, Իրավագիտության ամբիոնում գնահատված 13 դասախոսներից՝ 3-ը և Օտար լեզուների ամբիոնում՝ 1 դասախոս չի ստացել սահմանված ընդամենը 100 տոկոսից 20 տոկոս: Այս ցածր վարկանիշը պայմանավորված է միայն ուսանողի կողմից գնահատականի առկայությամբ, այնինչ գործունեության մյուս ձևերի համար՝ ինքնագնահոտում, ճշգրտված գնահատում և ամբիոնի վարիչի կողմից գնահատում իրականացված չէ:

Շատ են միջին ցուցանիշ ունեցող՝ 50-60 տոկոսի միջակայքում գնահատված դասախոսները:

Նվազագույն շեմը չհաղթահարած դասախոսների հարցով համապատասխան ամբիոններում իրականացվում են քննարկումներ, և անհրաժեշտության դեպքում այդ դասախոսների համար իրականացվում է վերապատրաստում: Սահմանված է նաև «Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգ»: Կարգի կիրառման մասին վկայում են Ռեկտորի համապատասխան հրամանները («ՊԴ կազմին գնահատման արդյունքներով խրախուսական պարգևներ տրամադրելու մասին 2016 - 2017 հրաման»):

Փորձագիտական խմբի հետ հանդիպման ժամանակ ներքին շահակիցները փաստեցին, որ գրանցվել են դեպքեր, երբ դասախոսները ցածր են գնահատվել և հեռացվել են աշխատանքից:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ԵՄՀ-ում վերապատրաստումն իրականացվում է տարբեր ձևաչափերով, մասնավորապես՝ անհատական խորհրդատվության, փորձի փոխանակման, կլոր-սեղան քննարկումների, աշխատաժողովների, սեմինարների, թրեյնինգների և այլ նախաձեռնությունների միջոցով: Դասախոսների մասնագիտական վերապատրաստման համար հիմնական պատասխանատվությունը դրված է ամբիոնների վարիչների վրա, այնուամենայնիվ, ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնը նույնպես ակտիվ դերակատարություն ունի դասախոսների վերապատրաստմանն ուղղված գործողություններում:

ՄՈՒՀ-ում ներդրված է ներքին դրամաշնորհների համակարգ՝ դասախոսների մասնագիտական և հետազոտական կարողությունների զարգացման համար:

2016-2017 և 2017-2018 ուսումնական տարիների ընթացքում 14 դասախոս առնվազն մեկ անգամ մասնակցել է վերապատրաստման և եվրոպական համագործակից բուհերում փորձի փոխանակման: Ցուցանիշը կրկնապատկվել է 2014-2015 և 2015-2016 թ. համեմատությամբ: Վերապատրաստումները հիմնականում կազմակերպվել են Փաստաբանական պալատի կողմից, որոնց մասնակցել են Իրավագիտության ամբիոնի ՊԴ կազմի անդամները: Օտար լեզվի ամբիոնի ՊԴ կազմի վերապատրաստումների ճնշող մեծամասնությունը ԺԼԵԿ-ի կողմից լեզուների դասավանդման և լեզվաքաղաքականությանն ուղղված թեմաներին էր նվիրված: Կառավարման ամբիոնի ՊԴ կազմի վերապատրաստումների մասնակիցները երեքն են (ընդամենը 18-ից), ընդ որում՝ մեկի վերապատաստումը Ծրագրավորման և SS ոլորտի թեմաներով է, իսկ մյուսի դեպքում թվարկված են՝ առցանց-էլեկտրոնային հարթակի անգլալեզու դասընթաց-թեմաներ: Մասնակցության և ավարտման հավաստման տվյալներ կամ վերապատրաստումից բխող արդյունքների վկայություններ չկան: Բացի այդ, չկան փոխառնչություններ վերապատրաստումների համար կարիքների վերհանման, դրանց նպատակների, թեմաների միջև՝ ապահովելու «բացահայտված կարիք-վերապատրաստում-ակնկալվող արդյունք» շրջափուլը:

Արտագնա վերապատրաստումներին մասնակցությունը սահմանափակվում է նույն անձանցով: Արտագնա վերապատրաստումների արդյունքների համահամալսարանական ներկայացման մեխանիզմները բացակայում են:

Ամբիոններում կազմակերպվում են գիտագործնական սեմինարներ, որոնց թեմատիկան հաճախ արտացոլում է ամբիոնի անդամների նեղ հետազոտական հետաքրքրությունները: Հատկապես թույլ է կենտրոնացումը դասավանդման որակի բարձրացման նպատակով մեթոդական հետազոտությունների և դասախոսի կողմից դասավանդման արդյունավետության հետազոտությանն ուղղված վերապատրաստման մասով:

Ոչ ներքին, ոչ արտաքին վերապատրաստումների արդյունքում ՊԴ կազմի մասնագիտական և մեթոդական կարողությունների բարելավման գնահատման մեխանիզմներ առկա չեն:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված է ԲՈՒՀ-ի համար հիմնական դասախոսների նվազագույն շեմ՝ 50 տոկոս: Ըստ ԵՄՀ-ի ՊԴ կազմի մասին տեղեկանքի, ԵՄՀ-ի բակալավրիատում աշխատող ՊԴ կազմի 54, իսկ մագիստրատուրայում ներգրավված ՊԴ կազմի անդամների 74 տոկոսը հիմնական աշխատակիցներ են: Բացի այդ, ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության մեջ նշվում է, որ ՊԴ կազմի շուրջ 70 տոկոսը ԵՄՀ-ում աշխատում է ավելի քան 3 տարի, իսկ 50 տոկոսը՝ ավելի քան 5 տարի: Նշված ցուցանիշները, սակայն, առանձնացված չեն ըստ ՄԿԾ-ների:

Որպես այս ցուցանիշներն ամրապնդելու և բարձրացնելու մեխանիզմ՝ ՄՈՒՀ-ն օգտագործում է խրախուսման տարբեր, հիմնականում ոչ նյութական միջոցառումներ և շարունակական մեթոդական և մասնագիտական կատարելագործմանն ուղղված ազգային և միջազգային վերապատրաստումներ: ՊԴ կազմի ժամանակավոր անաշխատունակության պարագայում փոխարինումների հստակ մեխանիզմ առկա չէ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2018 տարվա ընդունելության ցուցանիշները ցածր են լինելու, և դիմորդների պակասը բացասաբար կարող է ազդել ՊԴ կազմի աշխատավարձերի կայունության վրա: Դասախոսներից շատերը գերծանրաբեռնված են, մի մասը դասավանդում է 5-ից ավելի առարկա: Այցի ժամանակ ՄՈՒՀ-ի շահակիցները նշեցին, որ որակյալ նոր դասախոսների ներգրավումը տևական ժամանակ է պահանջում:

Թեև ՊԴ կազմում հիմնականում ընդգրկված են երիտասարդ կադրեր, ՄՈՒՀ-ը ՊԴ կազմի երիտասարդացման կամ կայունության ապահովման հստակ քաղաքականություն չունի:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՄՀ-ն պարբերաբար իրականացնում է դասախոսների մեթոդական, մասնագիտական, հետազոտական կարողությունները խթանելուն ուղղված վերապատրաստումներ:

Վերապատրաստումները ՄՈՒՀ-ում իրականացվում են երկու եղանակով՝ ներքին և միջազգային: Փորձագիտական խմբի հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում աշխատող դասախոսները, առանց որևէ սահմանափակման,

հնարավորություն ունեն օգտվելու առաջարկվող ներքին և արտագնա, այդ թվում և միջազգային վերապատրաստման դասընթացներից: Նշվեց նաև, որ ՄՈՒՀ-ն իր հաշվին կազմակերպում է լեզվի անվճար դասընթացներ այն դասախոսների համար, ովքեր լեզվի չիմացության պատճառով հնարավորություն չունեն մասնակցել միջազգային վերապատրաստման ծրագրերին:

Որպես ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման գործիքներ ՄՈՒՀ-ը կիրառում է նաև տարբեր խթանիչ միջոցներ: Օրինակ՝ դասախոսների գիտական հոդվածներն անվճար տպագրվում են ԵՄՀ-ի «Բանբեր» ամսագրում: Ընդ որում, ընդհանուր առմամբ ԵՄՀ-ի դասախոսների կողմից գիտական ամսագրերում տպագրությունների քանակն աճել է նաև հենց այս հանգամանքի շնորհիվ: ՄՈՒՀ-ը նշում է գիտահետազոտական գործունեության, օտար լեզուներով դասավանդման հավելավճարների և խրախուսման, մասնագիտական և մեթոդական վերապատրաստումների համար տրամադրվող ֆինանսական միջոցների աճի մասին:

Գործարկվել է նաև «Հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման» կարգը, ըստ որի արդեն երկու տարի իրականացվել է դրամաշնորհների տրամադրում ուսանող-դասախոս համագործակցությամբ հետազոտությունների իրականացման նպատակով:

ՄՈՒՀ-ն իրականացնում է ազգային և միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցում են նաև ԵՄՀ դասախոսները: Արդյունքները հրապարակվում են ժողովածուների տեսքով, տեղադրվում պաշտոնական կայքէջում, տարածվում տարբեր գրադարաններում:

ՄՈՒՀ-ը որդեգրել է սեփական ՊԴ կազմին հետբուհական անվճար կրթության տրամադրման քաղաքականություն՝ ապահովելու գիտական աստիճաններ և կոչումներ ունեցող դասախոսներով համալրումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, նաև որ երիտասարդ դասախոսների հետ մենթորություն չի իրականացվում:

ԵՄՀ-ն պարբերաբար իրականացնում է դասախոսների մեթոդական, մասնագիտական, հետազոտական կարողությունները խթանելուն ուղղված վերապատրաստումներ:

Վերապատրաստումները ՄՈՒՀ-ում իրականացվում են երկու եղանակով՝ ներքին և միջազգային: Փորձագիտական խմբի հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում աշխատող դասախոսները, առանց որևէ սահմանափակման, հնարավորություն ունեն օգտվելու առաջարկվող ներքին և արտագնա, այդ թվում և միջազգային վերապատրաստման դասընթացներից: Նշվեց նաև, որ ՄՈՒՀ-ն իր հաշվին կազմակերպում է լեզվի անվճար դասընթացներ այն դասախոսների համար, ովքեր լեզվի չիմացության պատճառով հնարավորություն չունեն մասնակցել միջազգային վերապատրաստման ծրագրերին:

Որպես ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման գործիքներ ՄՈՒՀ-ը կիրառում է նաև տարբեր խթանիչ միջոցներ: Օրինակ՝ դասախոսների գիտական հոդվածներն անվճար տպագրվում են ԵՄՀ-ի «Բանբեր» ամսագրում: Ընդ որում, ընդհանուր առմամբ ԵՄՀ-ի դասախոսների կողմից գիտական ամսագրերում տպագրությունների քանակն աճել է, նաև հենց այս հանգամանքի շնորհիվ: ՄՈՒՀ-ը նշում

է գիտահետազոտական գործունեության, օտար լեզուներով դասավանդման հավելավճարների և խրախուսման, մասնագիտական և մեթոդական վերապատրաստումների համար տրամադրվող ֆինանսական միջոցների աճի մասին:

Գործարկվել է նաև «Հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման» կարգը, ըստ որի արդեն երկու տարի իրականացվել է դրամաշնորհների տրամադրում ուսանող-դասախոս համագործակցությամբ հետազոտությունների իրականացման նպատակով:

ՄՈՒՀ-ն իրականացնում է ազգային և միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցում են նաև ԵՄՀ դասախոսները: Արդյունքները հրապարակվում են ժողովածուների տեսքով, տեղադրվում պաշտոնական կայքէջում, տարածվում տարբեր գրադարաններում:

ՄՈՒՀ-ը որդեգրել է սեփական ՊԴ կազմին հետբուհական անվճար կրթության տրամադրման քաղաքականություն՝ ապահովելու գիտական աստիճաններ և կոչումներ ունեցող դասախոսներով համալրումը:

Փորձագիտականայցից պարզ դարձավ, նաև որ երիտասարդ դասախոսների հետ մենթորություն չի իրականացվում:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ԵՄՀ-ի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար առկա են առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումներ: Ստորաբաժանումները տարանջատված են ըստ հետևյալ գործառույթների՝ կրթական ծառայությունների մատուցում, հասարակայնության հետ կապերի ապահովում և գովազդ, միջազգային կապեր և հետազոտություններ և կարիերայի զարգացում: Ֆինանսների կառավարումը, մարդկային ռեսուրսների կառավարումը և ենթակառուցվածքների կառավարումը համարվում են աջակից ծառայություններ:

ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի իրագործումը, ՌԾ նպատակների ձեռքբերման համար գործուն քայլեր կատարելը, այդ թվում և որակյալ կրթական ծառայություններ մատուցման գործընթացին աջակցելը վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության հիմնական նպատակներն են: ՄՈՒՀ-ում ՊԴ կազմի ներկայացուցիչները նաև ներգրավված են վարչական պաշտոններում կամ, վարչական պաշտոններ զբաղեցնելով, միաժամանակ դասավանդում են: Որոշ կադրեր զբաղեցնում են մի քանի պաշտոններ, օրինակ՝ Իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալը, որը միևնույն ժամանակ Իրավագիտության ամբիոնի հիմնական դասախոս է, համատեղում է Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի ղեկավարի պաշտոնը: Փաստորեն առկա է դասավանդումից բացի երկու այլ գործառույթի համադրում, ընդ որում ամբիոնի վարիչի օգնականը ԵՄՀ-ում իրականացնում է այլ ՄՈՒՀ-երի վարչական աշխատակիցների գործառույթներին համանման գործառույթներ, քանի որ ՄՈՒՀ-ի կառուցվածքում ֆակուլտետների և դեկանատների բացակայության պարագայում ուսանողներին ուղղված ծառայությունների վարչական կողմը (տեղեկությունների և տեղեկանքի տրամադրում, ՄՈԳ-ի հաշվարկ և այլն) կատարում է հենց ամբիոնի վարիչի տեղակալը: Այսպիսի համատեղություններ կան նաև Կարիերայի կենտրոնի ղեկավարի և այլ ստորաբաժանումների ղեկավարների դեպքում: Հարկ է նշել նաև, որ ՄՈՒՀ-ի

վարչական անձնակազմը զբաղվում է նաև «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի կազմում գործող վարժարանի տարբեր ծառայությունների սպասարկմամբ:

Այնուամենայնիվ, փորձագիտական այցի հանդիպումների ժամանակ շահակիցները փաստեցին, որ ընդհանուր առմամբ գոհ են վարչական և ուսումնաօժանդակ կառույցների գործունեությունից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՌԻՀ-ի կողմից մասնագիտական բարձր կարողություններով ՊԴ կազմի ներգրավմանն ուղղված ջանքերը: Այնուամենայնիվ, փորձագիտական վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ ՄԿԾ-ների մակարդակով դասավանդողներին ներկայացվող պահանջները հստակ չեն, առանձնահատկություններն ըստ ամբիոնների ուղղվածության ձևակերպված չեն: Ավելին, եթե պահանջները սահմանվում են կրթական ցենզի և աստիճանի առկայության պահանջով, առանց դրանց հիմքում ընկած վերաբերելի՝ մասնագիտական և մանկավարժա-մեթոդական հմտությունների որակի հավաստման, ՄՌԻՀ-ը կարող է բախվել նվազագույն շեմն ապահոված, սակայն ոչ առաջանցիկ կարողություններով կազմ ունենալու խնդրին:

Դրական է այն հանգամանքը, որ ՄՌԻՀ-ը փորձ է կատարել՝ վերանայելու կրթական ծրագրերն իրականացնելու համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականությունն ու ընթացակարգերը, սակայն այս վերանայման արդյունքում չի ներդրվել կուռ և թափանցիկ մեխանիզմ, որը կապահովեր ՊԴ կազմի ընտրությունն ըստ ՄԿԾ-ների նպատակների: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կառուցակարգը չի ծառայում ՄԿԾ-ներով առաջադրված խնդիրների լուծման նպատակին: ՄԿԾ-ներով առաջադրված խնդիրների և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կառուցակարգի միջև հարաբերակցությունը խաթարված է, մասնավորապես՝ ՊԴ կազմի նկատմամբ ՄԿԾ-ներում առաջադրված պահանջները և որակավորման նկարագրիչները տարբերակված չեն ըստ ոլորտների կամ մասնագիտացումների: ՊԴ կազմի ընտրության քաղաքականությունը չի բխում ՄՌԻՀ-ում գործող կրթական ծրագրերի իրականացման խնդիրներից և վտանգում է դրանց իրագործման արդյունավետությունը: Նման իրավիճակը խոցելի է դարձնում ՄՌԻՀ-ի կրթական ծրագրերի արդյունավետ իրագործումը, քանի որ ՊԴ կազմի ընտրությունը չի մասնավորեցվում կոնկրետ կրթական ծրագրերի իրագործման տեսանկյունից, ինչը և վտանգում է կրթության որակը:

Տարբեր բնագավառների գիտական աստիճան ունեցող դասախոսների ներգրավումը երեք գործող ամբիոններում չի ձևավորում ամբիոնների ոլորտային ճանաչելիություն, առավելապես՝ ֆակուլտետների բացակայության պայմաններում:

ՄՌԻՀ-ում հաջողվել է ստեղծել քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերական գնահատման համար: Այնուամենայնիվ, հստակ չէ ինքնագնահատման մեթոդաբանությունը: Ներդրված չէ նաև ուսանողների կողմից գնահատման արդյունքների վերլուծության մեխանիզմ, որը վեր կհանի գոյություն ունեցող ընդհանուր և համակարգային խնդիրները: Որակի ապահովման տեսանկյունից ուսանողի կողմից դասախոսին բացասական գնահատելու հետևանքները, դրանց կարգավորման սկզբունքները մասնավորեցված չեն: Մտահոգիչ է ուսանողների

գնահատման հիման վրա դասախոսի՝ աշխատանքից ազատելու հանգամանքը առանց իրավիճակի շտկմանն ուղղված այլ միջոցառումների կամ առնվազն գնահատման տրիանգուլյացիայի: Իրավիճակի շտկման կամ գնահատման արդյունքի ստուգման մեխանիզմների բացակայությունն ունի ՊԴ կազմի մասին որոշումների հիմնավորվածությունը, արդարությունը և թափանցիկությունը նվազեցնելու ներուժ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ԵՄՀ-ում առկա է դասախոսների գնահատման բազմագործոն համակարգը, որն էլ ձևավորում է դասախոսի վարկանիշը: Այնուամենայնիվ, այսպիսի վարկանշավորումն ունի համահարթեցնող բնույթ և խոչընդոտում է դասախոսի իրական կարողությունների բացահայտումը:

Դրական է այն, որ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ և խրախուսում է այսպիսի միջոցառումներին ՊԴ կազմի մասնակցությունը: Այնուամենայնիվ, միշտ չէ, որ վերապատրաստումները բխում են ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներից և նրանց նպատակային վերլուծություններից և միտված են բացահայտված խնդիրների հաղթահարմանը: Հստակ չէ կարիք-վերապատրաստում-ակնկալվող արդյունք կապը: Այսպիսի պատճառահետևանքային կապի խաթարումը վտանգում է ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական կիրարկումը և բացասաբար է ազդում ՄՈՒՀ-ում կրթական ծառայությունների որակի վրա:

ՄՈՒՀ-ի՝ պրոֆեսորադասախոսական կազմով կրթական ծրագրերի ապահովվածության կայունությունը խնդրահարույց է: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի հիմնական ֆինանսավորման աղբյուրն ուսումնառության վարձավճարներն են, ստեղծվում է իրական վտանգ դասախոսներին ՄՈՒՀ-ում պահելու տեսակետից: Որոշ դասախոսների կողմից դասավանդվող առարկաների մեծ քանակի (ընդհուպ մինչև 8) պայմաններում, նրանց աշխատանքից ազատվելու կամ ժամանակավոր անաշխատունակության դեպքում, մեծ է տնական ժամանակով անվերականգնելի ճեղքվածքի առաջացման վտանգը համապատասխան կրթական ծրագրերում:

ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր: Դրական է ՄՈՒՀ-ի ղեկավարության քաղաքականությունն առ այն, որ աշխատող բոլոր դասավանդողները, ովքեր տիրապետում են օտար լեզվի, պետք է վերապատրաստվեն արտասահմանյան ԲՈՒՀ-երում: Նշվածը էական խթան է հանդիսանում կրթական որակի բարձրացման համար:

ԵՄՀ-ն ունի ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ կառուցվածքային ստորաբաժանումներ՝ համապատասխան աշխատակազմով: Վարչական և ուսումնաօժանդակ կառույցների աշխատակիցները նպաստում են ՌԾ-ի իրագործմանը: Սակայն, ՄՈՒՀ-ի վարչական անձնակազմի՝ «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի տարբեր միավորների ծառայությունների սպասարկման մեջ ներգրավված լինելը, ինչպես նաև նույն կադրերի կողմից բազմակի, այդ թվում և վարչական և ուսումնաօժանդակ գործառույթների համատեղումը նվազեցնում է այդ աշխատողների կողմից հենց ՄՈՒՀ-ի համար կատարվող աշխատանքների արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՄՈՒՀ-ում գործող կրթական ծրագրերի իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և

ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականության և ընթացակարգերի անարդյունավետությունը, պրոֆեսորադասախոսական կազմի համար մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների անհստակությունը, ՊԴ կազմի գնահատման մեխանիզմների անկատարությունը, վերապատրաստումների «կարիք-վերապատրաստում-ակնկալվող արդյունք–բարեփոխում» շրջափուլի բացակայությունը, պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության անկայունությունը, երիտասարդ կազմի խրախուսմանն ուղղված հստակ քաղաքականության բացակայությունը, նույն անձանց կողմից բազմակի գործառույթների համատեղումը, փոխարինումների ապահովման մեխանիզմների բացակայությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՄՈՒՀ-ի առաքելությամբ սահմանվում է նրա հետազոտական գործունեության ուղղությունը՝ «կրթության բովանդականության արդիականացմանը, միջազգայանացմանը, համալսարանի անընդհատ զարգացմանը, ՀՀ սոցիալ-տնտեսական առաջընթացին և միջազգայնացմանը միտված կիրառական հետազոտություններ»: Բացի այդ, ռազմավարական ծրագրով ՄՈՒՀ-ը նպատակ ունի կայուն զարգացնել գիտական ներուժը և ապահովել հետազոտությունների և նորարարությունների կիրառելիություն: ՄՈՒՀ-ի նախատեսած գործողությունները միտված են հետազոտական արդյունքի ծավալի մեծացմանը, ՊԴ կազմի և ուսանողության հետազոտական գործունեությունում, համատեղ հետազոտական նախաձեռնություններում ավելի ակտիվ ներգրավմանը և միջազգային բաղադրիչի ընդլայնմանը: ՌԾ-ում ներկայացված չեն տվյալ ոլորտի առաջընթացի գնահատման քանակական ցուցիչներ:

ՄՈՒՀ-ը ձգտում է ներկայանալ որպես կիրառական հետազոտություն իրականացնող հաստատություն և տեսանելի դարձնել իր հետազոտական արդյունքը: Այս նպատակներով ՄՈՒՀ-ը ձեռնարկել է մի շարք քայլեր, այդ թվում՝ սեփական պարբերականի հիմնումը: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից իրականացված կիրառական հետազոտությունները չեն համապատասխանում ՄՈՒՀ-ում գործող ՄԿԾ-ներին (օրինակ՝ ավագ դպրոցի զարգացման հայեցակարգ, բնապահպանական հետազոտություններ և այլն):

ՄՈՒՀ-ի շահակիցների հետ քննարկումների ժամանակ ՄՈՒՀ-ի տեսլականին արված անդրադարձներում հետազոտական բաղադրիչը չի հիշատակվել որպես

առաջնային գործոն: Ընդգծվել է ՄՈՒՀ-ի՝ ներկայիս հետազոտության կիրառական, ոչ հիմնարար բնույթը:

ԵՄՀ-ն փորձել է հստակեցնել իր հետազոտական ուղղությունները, սակայն դրանք ձևակերպված են կա՛մ որպես հետազոտական թեմաներ (օրինակ՝ Իրավագիտության ամբիոնի համար՝ «Իրավունքի բացերը և դրանց հաղթահարման միջոցները ՀՀ-ում», «Սահմանադրական իրավունքի հիմնահարցերը»), կա՛մ որպես առաձին գիտակարգերի անվանումներ (օրինակ՝ Օտար լեզուների ամբիոնի դեպքում՝ «Ընդհանուր լեզվաբանություն», «Նշանագիտություն», «Կիրառական լեզվաբանություն» և այլն):

ՄՈՒՀ-ը նաև սահմանել է ներքին դրամաշնորհ՝ ուսանող-դասախոս համագործակցությամբ: ՄՈՒՀ-ն ունի միջազգային ուսանողական համաժողովի փորձ:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՄՈՒՀ-ի ՌԾ-ի երկրորդ նպատակը հետազոտության երկարաժամկետ պլանավորման արտացոլումն է, որը հետագա բաղդատմամբ ներկայանում է չորս առնչակից խնդիրներով և տասնհինգ միջոցառումներով: Սահմանված են կատարողները, ակնկալվող արդյունքները, ցուցիչները, թիրախային ցուցանիշները, ժամկետները և ռիսկային գործոնները: Այնուամենայնիվ, թիրախային ցուցանիշները քանակական չեն, երբեմն ներկայացված են տոկոսային հարաբերությամբ՝ առանց համեմատության բազան նշելու:

ՄՈՒՀ-ը, որպես միջնաժամկետ պլանավորման գործիք, վկայակոչում է ԵՄՀ Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության վերաբերյալ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, որը ինստիտուցիոնալացված միջնաժամկետ պլանավորաման գործիք չէ:

Կարճաժամկետ պլանավորումը կատարվում է ամբիոններում՝ ամենամյա կտրվածքով, եռամսյակային տրոհմամբ: Ամբիոնային պլաններում հետազոտական բաղադրիչը ներկայացված է գիտագործնական սեմինարներով, մագիստրոսական թեմաների հաստատմամբ և ներբուհական դրամաշնորհի դրույթով: Ամբիոնային տարեկան պլաններում անդրադարձ չկա ՌԾ խնդիրներին:

Որպես պլանավորման գործիք ՄՈՒՀ-ն առաջ է քաշում ՈՒԳԸ-ի տարեկան պլանը, ինչպես նաև միջազգայնացման պլանի նախագիծը, որտեղ ռազմավարական չորրորդ նպատակը հետազոտության միջազգայնացումն է համատեղ միջազգային հետազոտական ծրագրերի (Ժան Մոնե, Հորիզոն 2020) և նախագծերի մասնակցության, ինչպես նաև հետազոտական արդյունքի միջազգային տեսանելիության և ճանաչելիության խթանմամբ: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ընթացքում ՈՒԳԸ-ի բուն հետազոտական գործունեության մասին վկայություններ չարձանագրվեցին:

Ամբիոնային մակարդակում, օրինակ՝ Օտար լեզուների և գրականության ամբիոնի 2017 - 2018թթ. եռամսյակային հաշվետվություններում նշվում են 2016թ.-ով թվագրվող, հետազոտության հետ կապված գործողություններ: 2017թ. սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների հաշվետվությունը ներառում է 01.10.2016 - 15.10.2016 ժամանակահատվածի գործողությունների կատարման փաստ: Այս հանգամանքն ի ցույց է դնում նախկին պլանների պատճենումը կամ կրկնօրինակումը՝ հաճախ առանց ամսաթվերի փոփոխության:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՄՈՒՀ-ում առկա են հետազոտական գործունեության խրախուսման քայլեր ՊԴ կազմի և ուսանողների համար: ՄՈՒՀ-ում հետազոտականության ակտիվացման համար ստեղծվել է ներքին դրամաշնորհների կառուցակարգը:

ՄՈՒՀ-ը հետազոտությունների թեմատիկ ընտրությունը վերապահել է ամբիոններին: Պրոֆեսորադասախոսական կազմի մեթոդական և մասնագիտական վերապատրաստումների իրականացման կարիքի գնահատումը նաև անդրադարձել է հետազոտական հմտություններին և կարողություններին:

ՄՈՒՀ-ը նշում է, որ ունի հետազոտության համար հատկացված բյուջե, սակայն այդ բյուջեն ներկայացված է որպես հետազոտություններով զբաղվող դասախոսների դրամական խրախուսման ծախս: Կոնկրետ հետազոտության համար ՄՈՒՀ-ը ծախսեր չի նախատեսել:

Հետազոտությունը խրախուսելու համար ՄՈՒՀ-ը նաև սահմանել է «Հետազոտող» դրամաշնորհը՝ կրթավճարի 10–50% զեղչման տեսքով, միևնույն ժամանակ հնարավորություն տալով զեղչից օգտվող ուսանողներին շաբաթական 2–20 ժամ դասավանդել ՄՈՒՀ-ում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ երեք ներքուհական դրամաշնորհներից մեկն ուղղված է ՄՈՒՀ-ում իրավագիտության ուսանողներին ռուսաց լեզվի դասավանդման որակի բարելավմանը, մյուսը կարող է ծառայեցվել հետազոտական, հիմնականում՝ աղբյուրների հետ աշխատանքի հմտությունների ձևավորմանը, իսկ երրորդը կարող է նպաստել միջազգային լսարաններում օտարալեզու դասավանդմանը:

Ներքուհական դրամաշնորհների կառուցվածքը ենթադրում է ուսանողների ակտիվ մասնակցությունը հետազոտական աշխատանքներին, սակայն գործողությունների համակարգման, հետազոտող դասախոս-հետազոտող ուսանող հարաբերությունների կանոնակարգման, գործառույթների տարանջատման, ֆինանսական բաշխման սկզբունքների ինտիտուցիոնալացման պակաս կա: Շահակիցների շրջանում կա իրազեկության պակաս՝ դրամաշնորհի հետ կապված գործառույթների և դրամական միջոցների բաշխման կառուցակարգերի հետ: Կոնկրետ դրամաշնորհներով նախասահմանված գործողությունների մասին հարցադրումներից **պարզ դարձավ, որ դրամաշնորհի կատարման ուղղությամբ արդյունքներ չկան, և դրամաշնորհի շրջանակներում նախատեսված գործողությունները չեն կատարվում ըստ** հայտում ներկայացված ժամանակացույցի: Դրամաշնորհի կատարման նկատմամբ մոնիթորինգի և վերհսկողության մեխանիզմներ սահմանված չեն:

ՄՈՒՀ-ն ունի «Հետազոտական արդյունքների հրատարակման և հետազոտությամբ վերհանված տվյալների հրապարակայնացման կանոնակարգ», որով ձգտում է ապահովել հետազոտությունների որակը՝ ըստ նախասահմանված չափանիշների: Այնուամենայնիվ, այս կարգի կիրարկման վկայություններ չկան:

ՄՈՒՀ-ը հիմնել է սեփական գիտական նյութերի ժողովածու՝ «Բանբեր» պարբերականը (տարեկան երկու անգամ), սահմանել է «Բանբերի» նյութերին ներկայացվող տեխնիկական պահանջները: «Բանբերում» նյութերի ներառման համար խմբագրակազմի հավանությանն արժանանալու կամ վերոնշյալ կարգով գնահատման

պահանջ չկա: Պարբերականի խմբագրակազմում վերջերս ներառվել են երեք միջազգային գիտնականներ, որոնցից մեկը տեխնիկական գիտությունների թեկնածու է, մյուս երկուսը՝ մանկավարժական գիտությունների թեկնածու: Հոդվածները տպագրվում են հայերեն կամ ռուսերեն լեզուներով և ուղեկցվում մինչև տասը տող անգլերեն համառոտագրերով: Այս պարբերականը ներառված չէ ՀՀ ԲՈԿ-ի ցանկում կամ այլ գիտական շտեմարանում:

Ուսանողական հետազոտությունները հիմնականում ներկայանում են ավարտական աշխատանքներով և մագիստրոսական թեզերով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ցանկացած բնույթի և ծավալի ուսանողական հետազոտությունների ողջ ընթացքը, կատարված աշխատանքի համապատասխանությունը գիտական աշխատանքի սահմանված չափանիշներին և ակադեմիական ազնվության պահանջներին վերահսկվում է միայն տվյալ աշխատանքի գիտական ղեկավարի կողմից. վերահսկման այլ մեխանիզմներ բացակայում են:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՄՈՒՀ-ը հավակնում է ակտիվացնել միջազգայնացման գործընթացները մի քանի ուղղություններով: Այս համատեքստում մշակվել է ՄՈՒՀ-ի միջազգայնացման ռազմավարության նախագիծը, որում մի առանձին բաժին նվիրված է ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացմանը: Այդ բաժնում նշված գործողություններն ուղղված են միջազգային գիտաժողովների կազմակերպմանը, միջազգային հետազոտական ծրագրերում ներգրավմանը, ՊԴ կազմի և ուսանողական համակազմի հետազոտությունների միջազգայնացմանը: Սահմանված թիրախները հարաբերական-տոկոսային արժեքով են ներկայացված՝ առանց ելակետային ուղենիշի: Սահմանված է Սկոպուս շտեմարանում ներառված պարբերականներում տպագրության պահանջ, ինչպես նաև Ժան Մոնե և Հորիզոն 2020 ծրագրերին մասնակցության դրույթ:

ՄՈՒՀ-ը ներբեռնել է «Միջազգայնացման ինքնավերլուծության հարցաշար և չափանիշներ» անգլալեզու ռեսուրսը, որի վերջին՝ ութերորդ կետը վերաբերում է հետազոտության միջազգայնացման մակարդակի գնահատմանը, սակայն դրա ադապտացման կամ կիրառման վկայություններ չկան:

ՄՈՒՀ-ը կազմել է «ՀՀ-ում, Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը» 2014–2017թթ.-ի համար, սակայն այդ ցանկում չկան վարկանշով ամսագրեր: Բացի այդ, 2017թ.-ին նկատվում է նվազման միտում. ի տարբերություն 2016թ.ի՝ 6 դեպքի, ՄՈՒՀ-ն արձանագրում է միջազգային հրատարակության միայն մեկ դեպք:

ՄՈՒՀ-ը վկայակոչում է HARMONY ծրագրով բենչմարքինգը, որով Եվրասիա միջազգային համալսարանի հետազոտության և կրթական ծրագրերի միջազգայնացման մակարդակը գնահատվել է տասը միավոր ունեցող սանդղակով, ըստ երեք բաղադրիչների՝ ծրագրային հայտերի մշակում, իրագործում և գնահատում: Եթե առաջին երկու բաղադրիչներով ՄՈՒՀ-ն ունի յոթ միավոր կամ դրան ձգտող կարգավիճակ, ապա գնահատման մասով գնահատվել է միայն հինգ միավոր:

ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության մեջ նշվում է, որ «ԵՄ հովանավորմամբ փոխանակման ծրագրերի մասնակցած ԵՄՀ ասպիրանտները և պրոֆեսորադասախոսական կազմի անդամներն իրականացրել են համատեղ հետազոտություններ, որոնց արդյունքներն իրենց արտացոլումն են ստացել միջազգային ամսագրերում և կոնֆերանսներում» (էջ 90), այնուամենայնիվ, սրա վկայությունը՝ ըստ

հետազոտողների, համատեղ հետազոտությունների վերնագրերի, ամսագրերի մանրամասների, էջերի առկա չէ:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ը մի շարք ուղղություններով ստանձնել է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործողություններ: Մասնավորապես՝ մագիստրոսական ուսումնական ծրագրերում ներառվել է «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ» առարկան: Մագիստրոսական մակարդակում նոր պահանջ է սահմանվել. «նվազագույնը 1 զեկույցի ներկայացում ամբիոնին կամ հավաստագիր այլ գիտաժողովի մասնակցության, կամ հոդված՝ ԲՈՀ-ի կողմից հաստատված պարբերականներում»:

ՄՈՒՀ-ում փորձ է արվում գործատուների և աշխատաշուկայի հետ համատեղ իրականացնել հետազոտություններ մագիստրոսական մակարդակում՝ տարբեր կառուցակարգերով: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ նման փորձ կա և որ գործատուները խրախուսել են համապատասխան ամբիոններին կենտրոնանալ բուն մասնագիտական ուղղությամբ հետազոտական թեմաների վրա, որոնք կիրառական կլինեն կոնկրետ գործատուների համար: Սակայն այսպիսի հետազոտություններ ՄՈՒՀ-ում դեռևս չեն կատարվել:

Հաշվի առնելով այն, որ կապակցվածությունը պրակտիկայի և ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի թեմաների միջև թույլ է, ՄՈՒՀ-ը նախաձեռնել է արտադրական պրակտիկաների կապակցում հետազոտությանը. ուսանողների շրջանում անցկացված հարցումները փաստում են, որ կա պրակտիկայի բովանդակությունից և արդյունավետությունից բավարարվածության մակարդակի աճ: Սակայն փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումներում արտաքին և ներքին շահակիցները պրատիկայի և հետազոտական գործողությունների միջև կապը չեն մատնանշել:

Գնահատման «մասնակցություն» բաղադրիչում 5% մասնաբաժինը հատկացվել է ուսանողների հետազոտական կարողությունների գնահատմանը: ՄՈՒՀ-ի ձևավորող գնահատման ուղեցույցում ներառված է հետազոտական կարողությունների գնահատման ռուբրիկ, որտեղ կարողությունների սանդղակի աստիճանները բնորոշվում են «գերազանց», «թերի», «հաճախակի», «հազվադեպ» հարաբերական իմաստ արտահայտող ածականներով և մակբայներով: Ուսանողական հետազոտական աշխատանքի ըստ այսպիսի սանդղակի գնահատման օրինակներ առկա չեն:

Դասախոսների գիտահետազոտական գործունեության՝ դասավանդման որակի բարելավմանն ուղղված մեխանիզմներ ՄՈՒՀ-ի կողմից չեն հատկորոշվում: Ամբիոնների կողմից իրականացվող գիտագործնական սեմինարների թեմաները սեմինարավար-դասախոսի սեփական նեղ հետազոտական հետաքրքրություններն են ներկայացնում: Կիրառական հետազոտություններին և սեփական դասավանդման արդյունավետությանն ուղղված հետազոտական գործողություններին անդրադարձը գրեթե բացակայում է:

Փորձագիտական այցի ընթացքում պատահականության սկզբունքով դիտարկված ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում չէին պահպանվել ակադեմիական ազնվության հիմնարար սկզբունքները (օրինակ՝ "*Idioms and Their*

Translation Difficulties in English", «Գովազդի արտահայտման բառային և իմաստաբանական վերլուծություն», "Armenian and English Surnames: Origin and Meaning"):

Դատողություններ: Դրական է ԵՄՀ-ի կողմից առաքելության վերանայման և շուկայում իրեն որպես դասավանդող համալսարան դիրքավորելու ձգտումը: ՄՈՒՀ-ի՝ ՀՀ սոցիալ-տնտեսական առաջընթացին միտված կիրառական հետազոտականությունների հռչակումը որպես հավակնություն իրատեսական է:

ՄՈՒՀ-ի կողմից հետազոտության՝ ՌԾ-ում ներգրավելու, դրա համար նպատակներ, խնդիրներ և գործողություններ սահմանելու որոշումը նույնպես նպաստավոր է ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության համակարգման համար: Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի հետազոտական ուղղությունների հատկորոշումը՝ ամբիոններում առկա ներուժի հաշվառմամբ խաթարել է կիրառական հետազոտությունների հռչակված նպատակի իրագործումը, քանի որ ՊԴ կազմը շարունակում է առաջնորդվել սեփական հետազոտական հետաքրքրություններով: Արդյունքում, ԵՄՀ-ում կատարվող հետազոտությունը չի կարող որակվել որպես կիրառական:

ՌԾ-ում ներառված հետազոտական նպատակը փաստում է ՄՈՒՀ-ի կողմից այս ուղղությամբ որոշ մտադրությունների հեռահար պլանավորման մասին, սակայն ՄՈՒՀ-ը չի իրականացնում հետազոտությունների միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում, որով կապահովվեր կապակցվածությունը երկարաժամկետ նպատակի հետ և կապացուցվեր կատարողականը (հստակ թիրախներ սահմանված չեն, նպատակների ուղղությամբ առկա չէ պատշաճ ռեսուրսների հատկացում): Այսպիսի պլանավորման բացակայությունը վտանգում է ՄՈՒՀ-ի՝ հետազոտության ոլորտում նախասահմանված նպատակների իրագործումը կոնկրետ գործողությունների և չափելի արդյունքների միջոցով:

Թեև ՄՈՒՀ-ը ջանքեր է գործադրում միջազգային համաժողովների կազմակերպման ուղղությամբ (Սթոնհիլ քոլեջի հետ համատեղ), ակտիվ մասնակցում է միջազգային փոխանակման ծրագրերին, ՄՈՒՀ-ի ՊԴ կազմի գնահատման ռուբրիկն անդրադառնում է հետազոտական արդյունքի միջազգային գնահատմանը: Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգային ճանաչման կամ տեսանելիության ցուցանիշները սակավ են:

ՄՈՒՀ-ը մշակել է հետազոտության կանոնակարգմանը և խթանմանը միտված մի շարք մեխանիզմներ և գործողություններ, այնուամենայնիվ, կա դրանց լիարժեք գործարկման, փորձարկման, գնահատման և լրամշակման (օրինակ՝ «Հետազոտական արդյունքների հրատարակման և հետազոտությամբ վերհանված տվյալների հրապարակայնացման կանոնակարգ»-ի գործարկման ապացույց, այդ կարգով սահմանված ձևաթղթով գրախոսության օրինակ), ինչպես նաև անարդյունավետ կամ կրկնական մեխանիզմներից ազատվելու խնդիր: Ներբուհական դրամաշնորհների և «Հետազոտություն» կրթաթոշակի հատկացումներն ունեն ընթացակարգային շտկման կարիք. առաջին դեպքում ուսանողի դերակատարությունը, դրամական միջոցներից նրան տրվող մասնաբաժինը կանոնակարգված չէ: Կրթաթոշակի պարագայում միևնույն ժամանակ շաբաթական մինչև քսան ժամ դասավանդման հնարավորությունը կարող է մեկնաբանվել որպես տրված զեղչ-կրթաթոշակի փոխահատուցման մեխանիզմ: Այս

մեխանիզմներում առկա ներկայիս անհստակությունները խոչընդոտում են մեխանիզմների արդյունավետ և թափանցիկ կիրարկումը՝ խթանելու ներբուհական հետազոտությունը:

ՄՈՒՀ-ում ստեղծված ՈՒԳԸ-ն դեռևս ակտիվ գործունեություն չի ծավալում: Այսպիսի կառույցի հետագա նպատակահարմարությունը հարկ է քննարկել և գնահատել ՄՈՒՀ-ի չափսերի, գիտական կամ կիրառական հետազոտությունների, ուսանողների կրթական և հետազոտական կարողությունների, հետազոտական գործունեության մեջ ներգրավված լինելու մոտիվացիայի ավելի լայն համատեքստում: ՈՒԽ-ից դուրս առանձին այսպիսի կառույցի ստեղծումը կարող է ծանրաբեռնել ՄՈՒՀ-ի կառուցվածքը:

ՄՈՒՀ-ի կողմից «Բանբեր» պարբերականի հիմնումը և ՊԴ կազմին հետբուհական կրթական ծրագրերում անվճար ներգրավման հնարավորությունը երկակի մեկնաբանության տեղիք կարող են տալ: Այսպիսի գործողությունները ակնհայտ շահերի բախում են պարունակում, քանի որ այս կերպ հետազոտության ուղղությամբ սեփական արդյունքի տեսանելիության բարձրացումը և ՊԴ կազմին գիտական աստիճաններով ապահովելու հարցը տեղում լուծելը դուրս չեն բերում գիտական արդյունքը ՄՈՒՀ-ից՝ վտանգելով արտաքին ճանաչումը և որակյալ հետազոտության պահանջներին բավարարումը:

Դրական են ՄՈՒՀ-ի կողմից գործատուների հետ համագործակցության նախաձեռնությունները՝ համատեղ ընտրված ուսանողական հետազոտական նախագծերի համատեքստում, սակայն դրանք դեռևս սաղմնային փուլում են և եզակի են: Այս կերպ դեռևս խոչընդոտված է շուկայի կողմից պահանջարկված կիրառական հետազոտությունների նպատակի իրագործումը:

Մտահոգիչ է ամբիոնների եռամսյակային պլաններում բուն հետազոտական գործունեության արտացոլման բացակայությունը, ՊԴ կազմի կողմից սեփական դասավանդման գնահատման և ազդեցության ուղղությամբ հետազոտությունների բացակայությունը, ներբուհական դրամաշնորհների ընթացքի մշտադիտարկման, դրա շահակիցների միջև հարաբերությունների կարգավորման մեխանիզմների, նպատակի և արդյունքի հստակ ձևակերպումների բացակայությունը: Այսպիսի հետազոտության բացակայությամբ վտանգվում է ուսումնական գործընթացի կազմակերպման և բովանդակության բարելավումը:

ՄՈՒՀ-ում կա ակադեմիական ազնվության խաթարման լուրջ խնդիր. գործող ակադեմիական ազնվության պահպանման կարգը տեղայնացված չէ: Ակադեմիական ազնվության բացահայտ խախտման դեպքերը, որոնք արձանագրվել են փորձագիտական խմբի կատարած այցի ընթացքում, վտանգում են հետազոտության որակը և դրա հիման վրա ՄՈՒՀ-ի հետազոտության արտաքին ճանաչման և արժևորման հնարավորությունները:

Միջազգայնացման առումով, չնայած ՄՈՒՀ-ի՝ գիտական արդյունքի՝ 350% հարաբերական աճին, նվազել է միջազգային գիտական ամսագրերում տպագրության ցուցանիշը: Ակնհայտ է, որ այս ցուցանիշի աճն ապահովվել է ներքին, անգամ համահամալսարանական շուկայի սպառման համար: Այսպիսի ներփակ աշխատակարգը, որի շնորհիվ կա հետազոտական արդյունքի թվացյալ աճ, իրականում չի վկայում կայուն, հետևողական և շարունակական, միջազգային արժևորում վայելող որակյալ հետազոտության մասին: Թեև ՄՈՒՀ-ն ունի համագործակցություն մի շարք

միջազգային ուսումնական հաստատությունների հետ, հետազոտության ուղղությամբ համանման ՄՈՒՀ-երի հետ կայուն և շարունակական հետազոտական համագործակցության բացակայությունը վտանգում է միջազգային որակի և ճանաչման նոր գիտելիքի ստեղծումը ՄՈՒՀ-ի կողմից:

Մտահոգիչ է ՄՈՒՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների մակարդակը: Այն հանգամանքը, որ այստեղ ուսումնական գործընթացի ժամանակ և արդյունքում չի ստեղծվում նոր գիտելիք, վտանգում է ՄՈՒՀ-ի հավանական հետազոտական և ուսուցման արդիականացման հեռանկարը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՄՈՒՀ-ում կատարվող հետազոտությունների ոչ կիրառական բնույթը, դրամաշնորհների և հետազոտության կանոնակարգման բացերը, հետազոտության համար ՄՈՒՀ-ի բյուջեում նախատեսված միջոցների սակավությունը, ուսանողական հետազոտության ցածր՝ գրագողության հետ սահմանակցող, իսկ երբեմն էլ նույնացող որակը, դասավանդման գործընթացում հետազոտության արդյունքում ստացված նորագույն հասանելի գիտելիքի ներգրավման բացակայությունը, հետազոտության ոլորտում արդյունքի՝ որպես նոր գիտելիքի ստեղծման գնահատման մեխանիզմների բացակայությունը, հետազոտության միջազգայնացման ցածր մակարդակը, գոյություն ունեցող մարդկային և ֆինանսական ներուժի պայմաններում հավակնությունների անիրատեսականությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում Չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ամբիոնները հիմնականում ունեն կահավորված լսարաններ, որոշ լսարաններում ուսանողների և դասախոսների կողմից ցուցադրությունների կազմակերպման համար առկա են ֆիքսված պրոյեկտորներ: Համալսարանում առկա է երկու համակարգչային լսարան, քննարկումների դահլիճ, գրադարան, որոնք, բացի համակարգիչներից, ներառում են պրոյեկտոր, ինտերակտիվ գրատախտակ, ինտերնետային կապ (նաև Wi-Fi), որոնք նույնպես օգտագործվում են դասապրոցեսի կազմակերպման համար:

ՄՈՒՀ-ի կողմից իրականացված հարցումները ցույց են տալիս, որ ներքին շահակիցները ունեն կրթական և աշխատանքային միջավայրից բավարարվածության բարձր մակարդակ: Շահակիցների բավարարվածության վերաբերյալ զեկույցները ներկայացվել են կառավարման օղակներին, որոնց հիման վրա որոշում է կայացվել 2017-2018 բյուջեի

մուտքերի և ելքերի նախահաշվում հատկացնել գումար ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավման հետևյալ ուղղություններով.

- լսարանային կահավորման բարելավում,
- սպորտային գույքի ձեռքբերում,
- սննդի ծառայությունների բարելավման համար անհրաժեշտ գույքի և տեխնիկայի ձեռքբերում կամ ծառայության արտապատվիրում:

Կառավարման օղակների հանդիպման ընթացքում որոշվել է նաև պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային պայմանների բարելավման նպատակով առանձնացնել աշխատանքային լսարան (դասախոսների և ասպիրանտների համար), տրամադրել տեխնիկա (առկա բազայից):

ՄՈՒՀ-ն ունի գրադարան՝ գործող ՄԿԾ-ների համար նախատեսված որոշ մասնագիտական գրականությամբ և ուսումնական ձեռնարկներով, ինչպես նաև գեղարվեստական գրականությամբ: Այնուամենայնիվ, գրադարանը համալրված չէ ժամանակակից մասնագիտական գրականությամբ:

Գրադարանը տրամադրում է մուտք Հայաստանում հասանելի էլեկտրոնային շտեմարաններին:

Փորձագիտական խմբի այցի ժամանակ փաստվեց նաև, որ ՄՈՒՀ-ում առկա է սպորտդահլիճ, և կատարվում են վերանորոգման աշխատանքներ սպորտային ենթակառուցվածքների բարելավման համար:

ԵՄՀ 2016-2017 ուս. տարվա ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման արդյունքներով ուսումնական միջավայրի տարբեր բաղադրիչներից ուսանողների շրջանում գրանցվել է բավարարվածության բարձր մակարդակ՝ 78-98% միջակայքում: Աշխատակազմի՝ ուսումնական և աշխատանքային պայմաններից բավարարվածության ցուցանիշները նույնպես բարձր են՝ 81-97%:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ԵՄՀ-ում իրականացվում է ֆինանսների պլանավորում, և նախահաշիվը քննարկվում և հաստատվում է կառավարման խորհրդի կողմից: ԵՄՀ-ում ֆինանսական պլանավորման հիմքում ընկած են ստորաբաժանումների տարեկան պլանները, մասնագիտության կրթական ծրագրերի փաթեթների ռեսուրսների նկարագրերը և կրթական ծրագրերի պատասխանատուների կողմից ներկայացված պահանջագրերը:

Ինչպես փաստվել է ԵՄՀ առաջին ինքնավերլուծության և հավատարմագրման ժամանակ, բյուջեի կապակցումը Ռազմավարական խնդիրներին թերի է, ինչի ուղղությամբ ներկայացվել էր արտաքին փորձագետների կողմից խորհրդատվություն: Ուստի դրանից հետո բյուջեի և Ռազմավարական ծրագրի կապակցումն ապահովելու նպատակով վերանայվել է եկամուտների և ծախսերի նախահաշվի ձևաչափը:

ՄՈՒՀ-ը 2017-2018թթ. դրությամբ ֆինանսական միջոցներ է պլանավորել նաև հետևյալ ուղղություններով՝ ապահովելու ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մեթոդական պատրաստվածության շարունակական բարելավումը, խրախուսելու գիտահետազոտական աշխատանքը և միջազգայնացումը:

Մասնավորապես առանձնացվել են հետևյալ ուղղությունները՝ վարձատրություն պրոֆեսորադասախոսական կազմին հետազոտական և գիտակրթական գործունեության

նպատակով, օտար լեզուներով դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձի բարձրացման ծախսեր, հավելավճարների և խրախուսման ծախսեր պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցներին, մասնագիտական և մեթոդական վերապատրաստման, որակավորումների բարձրացման ծախսեր:

Ներքին շահակիցները հանդիպումների ժամանակ նշեցին, որ ՄՈՒՀ-ի ֆինանսական պլանավորումը մեծամասամբ կախված է ընդունելության ցուցանիշներից:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ըստ ՄԿԾ-ների ֆինանսական պլանավորում կամ բաշխում չի իրականացվում: ՄՈՒՀ-ի ֆինանսական նախահաշվում մուտքային հոդվածներում հյուրատան, վարժարանի գործունեությունից մուտքերը երևում են առանձնացված տողով (և չեն կազմում այդ մուտքերի հիմնական մասը), մինչդեռ ծախսային հոդվածներում առանձնացված հաշվառում չի տարվում, և գրեթե բոլոր ծախսային հոդվածներում ներառված են վարժարանի ու հյուրատան պահպանմանն ուղղված ծախսերը: ՄՈՒՀ-ի առաքելության իրականացումը ֆինանսական փաստաթղթերում չի դիտարկվում որպես առաջնահերթություն, և առկա է ֆինանսական խաչաձև սուբսիդավորում ՍՊԸ-ի կազմում գործող ընկերությունների միջև:

Միջնաժամկետ կամ երկարաժամկետ այլ ֆինանսական կայուն մուտքեր (պետբյուջեից ֆինանսավորում, պետական ծրագրերում մասնակցությունից մուտքեր, ամբիոններին հատկացված արտաքին դրամաշնորհներ, ըստ ՄԿԾ-ների մուտքերի տարբերակում) ՄՈՒՀ-ի բյուջեում նախատեսված չեն:

ԲՈՒՀ-ը չունի պետական բյուջեից տրամադրվող ֆինանսավորում, և ֆինանսական ներհոսքերի մեծ մասը՝ շուրջ 60 տոկոսը, ապահովվում է ուսման վարձավճարներից: Ֆինանսական մուտքերի կայունության և դիվերսիֆիկացիայի միջոցով ֆինանսական անկախության ռազմավարական խնդրի լուծումը ՄՈՒՀ-ն ապահովում է հենակետային վարժարանի, հյուրատան և դրամաշնորհային ծրագրերի մուտքերի ապահովման միջոցով. նշյալ ուղղություններն ապահովում են մուտքերի 30-40 տոկոսը:

ՄՈՒՀ-ն իր հետագա ֆինանսական կայունության և հոսքերի ավելացման լավատեսությունը հիմնում է նաև օտարերկրյա ուսանողներին ներգրավվելու հնարավորության վրա, որոնք, ըստ ինքնավերլուծության, պետք է ապահովեն ֆինանսական մուտքերի 35 տոկոսը:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է ԲՈՒՀ-ում հաստատված «Գնումների կազմակերպման ընթացակարգ»-ին համապատասխան:

Հարկ է փաստել, որ թե՛ ուսանողների և աշխատակազմի շրջանում անցկացված հարցումների, և թե՛ փորձագիտական խմբի՝ ներքին շահակիցների հետ ունեցած հանդիպումների արդյունքներով հաստատվում է, որ վերջիններս, որոշ

վերապահումներով, բարձր են գնահատում ԵՄՀ-ի ենթակառուցվածքների և օժանդակ ծառայությունների որակը:

Բացի այդ, Քրոու Հորվաթ Ինթերնեյշնլ Բիզնես Ալյանս միջազգային աուդիտորական ցանցի ասոցացված անդամ՝ «UOU Աուդիտ» ընկերության կողմից 2016թ.-ին իրականացվել է ԵՄՀ ֆինանսական կառավարման/ներքին վերահսկողության համակարգի գնահատում: Ըստ աուդիտի արդյունքների, բուհում չեն բացահայտվել թերացումներ գրանցումների ամբողջականության, առկայության, փաստաթղթերի հիմնավորվածության կամ ճշգրտության գծով: Ուսման, աշխատավարձի հաշվառման համակարգում չեն բացահայտվել նշանակալի ռիսկեր, դրամական գործառույթների, ակտիվների պահպանման, փաստաթղթերի ֆայլավորման գծով նույնպես չեն բացահայտվել ռիսկեր, բուհը պատրաստել և ներկայացրել է հաշվետվություններ ըստ հաստատված ձևաչափերի և ունի համապատասխան կարողություններ:

Այնուամենայնիվ, առկա չեն մեխանիզմներ, որոնք ի ցույց կդնեն, թե ինչպես և ինչ եղանակով է ՄՈՒՀ-ն առկա ռեսուրսներով փորձում ապահովել որակի շարունակական բարելավումը: Այսինքն՝ չկա հստակ պլանավորում ըստ առկա ռեսուրսների, պարզ չէ ըստ կարիքների հատկացման, հատկացումների նպատակային օգտագործման և ստացված շարունակական բարելավման միջև կապակցվածությունը: Բացի այդ, ՄՈՒՀ-ի՝ ռեսուրսների բազայի ՌԾ-ի իրականացման համար պլանավորումը տարանջատված չէ «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի բազայից:

Փորձագիտական խումբն արձանագրում է նաև, որ ռեսուրսների բազան տարաջատված չէ նաև ըստ կոնկրետ ՄԿԾ-ների: Բացի այդ, տարանջատված չեն ռեսուրսներն ըստ ՄԿԾ-ների ապահովված մուտքերի՝ հաշվի առնելով ուսանողների վարձավճարները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՈՒՀ-ը նոր ներդրումներ է կատարել ֆարմացիա նորաստեղծ ՄԿԾ-ի համար համապատասխան լսարանների և լաբորատորիայի ստեղծման և համահամալսարանական մարզադահլիճի կառուցման ուղղությամբ: Մարզադահլիճ այցելության ժամանակ պարզ դարձավ, որ այն չունի համապատասխան կահավորում՝ հատակ և այլն, սակայն տրամադրված է շահագործման: Լաբորատորիաները դեռևս ամբողջովին պատրաստ չէին և հանձնված չէին շահագործման:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

ԵՄՀ-ն իրականացրել է գործուն քայլեր՝ կազմակերպելու ՄՈՒՀ-ի՝ ՌԾ-ով սահմանված հնարավոր բոլոր գործընթացները ավտոմատացնելու, տարբեր շահակիցների օգտագործման հնարավորությամբ տեղեկատվական բազա ստեղծելու, որոշում կայացնողների վերլուծությունների ստացման մատչելի մեխանիզմներ ապահովելու, ՄՈՒՀ-ում փաստաթղթաշրջանառությունը պակասեցնելու, աշխատանքների իրականացման վիրտուալ համակարգեր ստեղծելու ուղղությամբ:

Մասնավորապես ներդրվել են հետևյալ համակարգերը՝ Student M Ուսումնական գործընթացի կառավարման ներքին տեղեկատվական համակարգ, Էլեկտրոնային հաղորդակցություն և պլանավորում, MOODLE վիրտուալ լսարան՝ էլեկտրոնային թեստերով (iTest), Ներքին ցանց, Էլեկտրոնային հարցումներ և տվյալների բազա:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ներքին շահակիցներն ամենաշատն օգտվում են MOODLE համակարգից, քանի որ այն հնարավորություն է ընձեռում հեշտությամբ ստանալ դասախոսության նյութերը: Այնուամենայնիվ, այս հարթակի այլ գործառույթները, որոնք հնարավորություն են ընձեռում ակտիվացնել շփումները դասախոսների և ուսանողների միջև, չհիշատակվեցին:

Էլեկտրոնային թեստերի համակարգը նույնպես տարածում ունի ՄՈՒՀ-ում, և դրա միջոցով հիմնականում իրականացվում է ուսանողների կողմից դասախոսների գնահատումը:

Ներքին ցանցը ծառայողական նշանակություն ունեցող կապի միջոց է, որը հիմնականում ծառայում է ՊԴ և ուսումնաօժանդակ կազմերին՝ փաստաթղթեր փոխանցելու համար:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Փորձագիտական խումբը փաստում է, որ համալսարանում անվտանգության համակարգը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ պահակային ծառայություն, հակահրդեհային ազդանշանային համակարգի առկայություն, մասնաշենքի տեսահսկում: Առկա են պայմաններ ուսանողների և աշակերտների արտակարգ իրավիճակներում արագ և անվնաս տարհանելու համար:

Ըստ ներկայացված նյութերի՝ ՄՈՒՀ-ը համագործակցում է Արաբկիր վարչական շրջանի հրշեջ ծառայության հետ, պարբերաբար հայտարարվում է արտակարգ դրություն վարժանքի նպատակներով, երբ աշխատակիցները և ուսանողները տարհանվում են:

Առողջության պահպանման համար համալսարանը չունի սեփական բուժկետ՝ (հետևաբար նաև ուսանողների առողջության վերաբերյալ համապատասխան փաստաթղթային հիմնավորումներ), պայմանագրային հիմունքներով համագործակցում է մասնաշենքում տեղակայված «Վալիդուս» բժշկական կենտրոնի հետ, որն անհրաժեշտության դեպքում տրամադրում է հիվանդասենյակ, ապահովում է առաջին բուժօգնության դեղերով, տրամադրում է առաջին բուժօգնություն և բժշկական այլ ծառայություններ, անվճար խորհրդատվություն ներքին շահակիցներին (սակայն կանոնակարգված հաշվառում ուսանողների դիմելիության կամ խնդիրների չի կատարում): Այցի ժամանակ փաստվեց, որ «Վալիդուս» բժշկական կենտրոնի երկու սենյակներից մեկը զբաղված էր, քանի որ այն շահագործվում է որպես առանձին բուժկենտրոն՝ սպասարկելով դրսի պացիենտների:

Համալսարանը միջազգային համագործակցության շրջանակներում ներգրավվել է «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» (ASPIRE) TEMPUS IV ծրագրում: Համալսարանը վերապատրաստել է աշխատակիցներին հատուկ կարիքներով անձանց հետ աշխատելու ուղղությամբ, ինչպես նաև ապահովել վերջիններիս համար սովորելու և աշխատելու հարմարավետ պայմաններ: Միևնույն ժամանակ արձանագրվեց, որ այս պահին ՄՈՒՀ-ը չունի հատուկ կարիքներ ունեցող ուսանող:

Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ մասնաշենքի տեսահսկող սարքերը միացված չեն անվտանգության ծառայության աշխատակցի սենյակում

տեղադրված համակարգչին, և վերջինս, ըստ էության, զրկված է մասնաշենքի տարբեր հատվածներում կատարվող իրադարձությունները առցանց հսկելու հնարավորությունից: Բացի այդ, համալսարանում չկա քարտային կամ համարժեք այլ անցագրային համակարգ: Անվտանգության համակարգը ՄՈՒՀ-ի համար առանձին չէ (2-րդ հարկում տեղակայված է պահակակետ, սակայն 3-րդ հարկում հյուրատուն է, որտեղ բնակվում են ոչ ՄՈՒՀ-ի ուսանողները, ապա 4-րդ հարկում համալսարանն է, որն իր առանձին պահակակետը կամ անվտանգության այլ համակարգը չունի):

ՄՈՒՀ-ի մասնաշենքում առկա է նաև վերելակ, որը սակայն այցի օրերին չէր գործում:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ը, որպես ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության և արդյունավետության գնահատման հիմնական միջոց, դիտարկում է հարցումները: Հարցաթերթիկներն ընդգրկում են մի շարք հարցեր տարատեսակ ռեսուրսներով ապահովվածության վերաբերյալ, իսկ հարցաթերթերի արդյունքների ամփոփումները համալսարանի ղեկավարությանը ներկայացվում են պարբերաբար:

Ներկայացված փաստաթղթերից և ներքին շահակիցների հետ հանդիպման արդյունքներից հետևում է, որ ՄՈՒՀ-ի ՈՆԱ կենտրոնը պարբերաբար իրականացնում է հարցումներ: Հարցումների արդյունքները զետեղված են ԵՄՀ Որակի կառավարման համակարգի ներդրման և արդյունավետության գնահատման փաստաթղթում, սակայն արդյունքների վրա հիմնված բարելավումների արդյունավետության գնահատում իրականացված չէ:

Դատողություններ: Դրական է, որ ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր: Մասնավորապես՝ ԵՄՀ-ի լսարանները բավարար չափով կահավորված են և զինված են համապատասխան տեխնիկական միջոցներով, որոնք հնարավորություն են ստեղծում իրագործել կրթական ծրագրերի խնդիրները: ՄՈՒՀ-ի գրադարանն ապահովում է ներքին շահակիցներին ՄԿԾ-ների ուսումնառության համար անհրաժեշտ գրականությամբ, իսկ համակարգչային լսարանները խթանում են ուսանողների համար ուսումը առավել արդիական եղանակներով կազմակերպելը: Այնուամենայնիվ, գրադարանային ռեսուրսները բավարար չեն նոր գիտական գիտելիքի ստեղծման համար, հատկապես հասարակագիտական և հումանիտար ոլորտներում, որոնցով ներկայանում է ՄՈՒՀ-ը, քանի որ չկա որևէ հասանելիություն առաջնային աղբյուրների: Նշվածը կարող է հանգեցնել ՄՈՒՀ-ի ՌԾ-ով առաջ քաշված հետազոտական բաղադրիչի ոչ լիարժեք իրագործմանը:

ՄՈՒՀ-ի առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար աշխատավարձերի ուղղությամբ համապատասխան ֆինանսական ռեսուրսների հատկացումները, ֆինանսական բաշխման պլանավորման տեսանկյունից, խնդրահարույց են: Մասնավորապես՝ ՊԴ կազմի աշխատավարձի երկարաժամկետ պլանավորումը, այդ թվում՝ աշխատավարձի կայուն բարձրացմանն ուղղված գործողություններն իրատեսական չեն, քանի որ մեծամասամբ կախված են ՄՈՒՀ

ընդունվող դիմորդների քանակից, ինչը նվազման միտումներ է դրսևորում: Այդ առումով իրական վտանգ է ստեղծվում ֆինանսական ռեսուրսների հատկացումների կայուն քաղաքականության համար, ինչն անխուսափելիորեն բացասաբար կազդի ՄՈՒՀ-ի առաքելության ու նպատակների իրագործման վրա:

ԵՄՀ կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունն իրատեսական չէ, չի կարող ապահովել ՄՈՒՀ-ի անցնցում զարգացումը և առաջընթացը: Մասնավորապես՝ կրթական ծրագրերի նպատակների իրականացման շարունակականությունը խոցելի է: Դա հիմնավորվում է այն իրողությամբ, որ ՄՈՒՀ-ի բյուջեի շուրջ 60 տոկոս մուտքերը ապահովում են ուսանողների վարձավճարները, իսկ ԵՄՀ ընդունվող անձանց քանակը նվազել է: Բացի այդ, մուտքերի մի մասը ծրագրային են և ժամանակավոր: Այս առումով ՄՈՒՀ-ը բյուջետային մուտքերի նվազման ռիսկերի պայմաններում հետագա քաղաքականության համապարփակ վերլուծություն չի կատարել: Կշռադատված չեն սպասվող ռիսկերը, սահմանված չէ նման պայմաններում հստակ գործողությունների պլան: Ավելին՝ վարժարանի և հյուրատան եկամուտների օգտագործումը ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի նպատակների իրականացման ու շարունակականության ապահովման համար ցանկալի չէ և անուղղակիորեն ի ցույց է դնում ՄԿԾ-ների և ՄՈՒՀ-ի ինքնաբավության պակասը: Ինչ վերաբերում է հենակետային վարժարանի, հյուրատան գործունեությամբ ապահովվող մուտքերին, ապա դրանք չեն կարող դիտվել ՄՈՒՀ-ի ՌԾ-ն իրագործելու գործուն երաշխիքներ, քանի որ խնդրահարույց են կայունության տեսանկյունից: Այլ կլիներ իրավիճակը, երբ օրինակ՝ հյուրատունը լիներ առանձին կազմակերպություն և ներդրումային պայմանագրի համաձայն կատարեր կայուն ներդրումներ ՄՈՒՀ-ում:

ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան ըստ էության հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, թեև լաբորատորիան և մարզադահլիճն արդեն մասամբ կահավորված էին, փորձագիտական խումբը գտնում է, որ լաբորատրիայի, մարզադահլիճի և դրան առընթեր հիգիենայի ապահովման սենյակների կահավորանքը և պայմանները դեռևս բավարար չեն: Հատկապես մարզադահլիճի պարագայում հաշվի չեն առնված անվտանգության նկատառումները, հատակը կոշտ է, օդափոխությունն ապահովված չէ, իսկ լողարանը՝(արական և իգական) նախատեսված է ընդամենը մեկ հոգու համար: Լաբորատորիայի մասնագիտական կահավորանքը նույնպես խնդրահարույց է՝ բոլոր ուսանողներին փորձերի կատարման իրական հնարավորություններ տրամադրելու իմաստով: Այս տեսանկյունից վտանգվում է ինչպես ուսանողների անվտանգությունը, այնպես և ուսանողակենտրոն ուսուցումը՝ գործնական հմտությունների ձեռքբերման ուղղությամբ:

Փորձագիտական խումբն առանձնակի կարևոր է համարում անդրադառնալ Իրավագիտության ՄԿԾ-ներում հանրային ծառայության վերաբերմամբ հիշատակվող իրավաբանական կլինիկային, քանի որ կարծում է՝ նպատակահարմար կլիներ խոսել տարբեր տեսակի ոչ առևտրային, հասարակական, իրավապաշտպան կազմակերպությունների հետ համագործակցության մասին ևս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄՈՒՀ-ում գործող իրավաբանական կլինիկան, ըստ էության, լիարժեքորեն չի ծառայում նախասահմանված նպատակներին, քանի որ տրամադրում է

նաև վճարովի ծառայություններ: Այսպիսի վճարովի ծառայությունների տրամադրումը չի բխում ուսանողների կողմից իրավագիտության ոլորտում գործնական հմտությունների ձեռքբերման նպատակից և վտանգում է ՄՈՒՀ-ի կողմից հռչակված ուսանողակենտրոն ուսուցման նպատակի իրագործումը:

ԵՄՀ-ում տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարվում են թափանցիկ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Ներդրված համակարգերը, ինչպիսիք են՝ Student M, MOODLE, iTest հնարավորություն են ընձեռում լուծել ՄՈՒՀ-ի առջև դրված այն խնդիրները, որոնք կապված են փաստաթղթավորման գործընթացների կառավարման հետ: Արձանագրված փաստերը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու բավականին հստակ քաղաքականություն և ընթացակարգեր:

Անվտանգության ապահովման տեսանկյունից ԵՄՀ-ն որոշ առումով խոցելի վիճակում է, քանի որ մասնաշենք ելումուտը կանոնակարգված չէ: Չկա բարտային կամ համարժեք այլ, մասնաշենք մտնող անձանց նույնականացման համակարգ, տեսախցիկներով հսկվող տարածքներն առցանց դիտելու կայուն համակարգ: Մեկ անվտանգության աշխատակիցն այս համակարգերի բացակայության պայմաններում օբյեկտիվորեն ի զորու չէ ապահովել պատշաճ մակարդակով անվտանգության ծառայության իրականացումը: Մասնաշենքում, բացի ուսումնական հաստատություններից, տեղակայված է նաև հյուրատունը, ինչը խոցելի է դարձնում անվտանգության ապահովումը շենքում: Հստակ չէ նաև բուժծառայությունների տրամադրման ձևաչափը, քանի որ մասնաշենքում տեղակայված բուժկենտրոնը նեղ մասնագիտացված, առևտրային հաստատություն է, որի պրոֆիլը չի համընկնում ՄՈՒՀ-ի ուսանողների առողջության համակողմանի ապահովման գործառույթին: Այսպիսով, խաթարվում է ՄՈՒՀ-ի ուսանողների առողջության և անվտանգության նկատմամբ ստանձնված հանձնառության իրագործումը:

ԵՄՀ-ն գործուն քայլեր է ձեռնարկել կրթական հաստատությունում հատուկ կարիքներով մարդկանց հասանելիության ապահովման ուղղությամբ, սակայն վերելակի ոչ կայուն գործարկումը կարող է խոչընդոտել տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց հաճախումներն ու կրթական ծառայություններին հավասար հասանելիությունը:

Դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներում փորձագիտական խումբը նույնպես խնդիրներ է տեսնում, քանի որ դրանք հիմնված են ոչ ամբողջական տեղեկությունների վրա. կարիք-հարցում-հետևանք շրջափուլը կանոնակարգված չէ:

Եզրահանգում: Հաշվի առնելով ԵՄՀ-ում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի, բուհի առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար ֆինանսական ռեսուրսների հատկացման որոշ մեխանիզմների, համապատասխան ռեսուրսային բազայի, տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու քաղաքականության և ընթացակարգի առկայությունը, ինչպես նաև առողջապահական և անվտանգության

միջավայրի ապահովմանն ուղղված քայլերը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է Չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Հաշվետվողականության և թափանցիկ գործունեության սկզբունքները ամրագրված են ՄՈՒՀ-ի 2014-2018թթ. ՌԾ-ում. «բարձրացնել ԵՄՀ գործունեության թափանցիկությունը՝ ներդնելով բուհի կողմից շնորհվող որակավորումների, գիտահետազոտական աշխատանքների և մշակումների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմներ»: Ներդրված կառուցակարգերը ենթադրում են բազմամակարդակ հաշվետվողականություն՝ ստորաբաժանումների եռամսյակային պլանների կատարողականի հաշվետվություններից մինչև ՄՈՒՀ-ի ռեկտորի ամենամյա հաշվետվություններ, որոնց ձևաչափը փոխվել է և համապատասխանեցվել է ՌԾ-ի նպատակներին և խնդիրներին: ՄՈՒՀ-ն ունի «Ռազմավարական ցուցանիշ. Հաշվետվություն» կառուցակարգ, որի նպատակն է ցույց տալ ռազմավարական ծրագրում ամրագրված ցուցանիշների կատարումը:

ՄՈՒՀ-ն ունի հասարակության հետ աշխատանքի բազմամյա և բազմակողմանի փորձ. Կենտրոնացումը դպրոցահասակ և քոլեջի ուսումնառողներն («Քայլ առաջ», «Աշակերտական գիտաժողով») ու աշխատաշուկան են:

8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Արտաքին շահառուների հետ ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունն ապահովվում է ԵՄՀ կայքի, համալսարանի ֆեյսբուքյան էջի, այլ սոցիալական կայքերի, հրապարակումների, ԶԼՄ-երի միջոցով: ՄՈՒՀ-ն ունի Հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժին: Այնուամենայնիվ, ՄՈՒՀ-ի հասարակության հետ կապերի ընթացակարգերի և գործընթացների արդյունավետության գնահատում իրականացված չէ:

Հանրության հետ կապերի և հաշվետվողականության հիմնական գործիքը ՄՈՒՀ-ի կայքն է, որտեղ կան գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող բաժիններ՝ համապատասխան թեմատիկ բովանդակությամբ: Արտաքին շահակիցների հետ հաղորդակցության մյուս միջոցը գրքույկները և տեղեկատվական տպագիր թերթիկներն են:

Կայքի և տեղեկատվական թերթիկներում զետեղված տեղեկատվությունը չի համապատասխանում ՄՈՒՀ-ի իրական կարողություններին և ներկա պահին իրականացվող կրթական ծրագրերին: Գովազդային նյութերը պարունակում են տեղեկություններ նաև չգործող ՄԿԾ-ների մասին:

Եվրասիա միջազգային համալսարանի կայքէջի ռուսալեզու և անգլալեզու հատվածներում տեղեկությունները ամբողջական չեն ներկայացված:

8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ն ունի առանձնացված ստորաբաժանումներ, որոնցից յուրաքանչյուրն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության առանձին ուղղություններով հասարակության և արտաքին շահակիցների հետ կապը:

ՄՈՒՀ-ն ունի հասարակության հետ աշխատանքի բազմամյա և բազմակողմանի փորձ. կենտրոնացումը դպրոցահասակ և քոլեջի ուսումնառողներն («Քայլ առաջ», «Աշակերտական գիտաժողով») ու աշխատաշուկան են:

ՄՈՒՀ-ն ունի միջոցառումների գնահատման թերթիկ: Կա որոշ բովանդակային հաղորդակցություն ՄՈՒՀ-ի և գործատուների միջև՝ ՄԿԾ-ների վերջնարդյունքների, դասավանդման մոտեցումների, բովանդակության գնահատման վերաբերյալ: Բացի այդ, աշխատաշուկայի ներկայացուցիչները մասնակցում են ամփոփիչ գնահատման գործողություններին որպես գրախոս: Փորձագիտական այցի ընթացքում նշվել է, որ ՄՈՒՀ-ը այս տարի ստանձնել է ծրագրերի բովանդակային փոփոխություններ գործատուների կողմից հետադարձ կապի մեխանիզմներով ստացված արձագանքների հիման վրա:

Իրավաբանական կլինիկայի առկայությունը ՄՈՒՀ-ում կանոնակարգվում է համապատասխան փաստաթղթերով և հանրության հետ հարաբերությունների կարգավորման լրացուցիչ մեխանիզմ է: Այնուամենայնիվ, իրավաբանական կլինիկայի դեպքում, երբ առաջին անվճար խորհրդատվությունից (ինչը ի դեպ, կիրառվող պրակտիկա է ՀՀ-ում ընդհանրապես)՝ իրավիճակի հայտորոշիչ գնահատումից հետո իրավաբանական աջակցության մյուս ձևերը վճարովի են: Այս մասին տեղեկություն ենք գտնում Իրավաբանական կլինիկայի մուտքի մոտ: Իրավաբանական կլինիկայի գործունեության մասին հանրության կողմից արձագանք առկա չէ:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Գիտելիքի և արժեքների փոխանցման հիմնական մեխանիզմները ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվող միջոցառումներն ու հարթակներն են, մասնավորապես՝ «Քայլ առաջ» նախագիծը, «Աշակերտական գիտաժողովները», «Կարիերայի օրեր» ամենամյա նախագիծը, «Պատանի դիվանագետի դպրոցը», «Պատանի իրավագետի դպրոցը»: ՄՈՒՀ-ի ինքնավերլուծության մեջ հիշատակվում են անվճար վերապատրաստման ծրագրերը և լեզուների դասընթացները, որոնց մասին վկայություններ փորձագիտական խմբին հասանելի չեղան ոչ փաստաթղթային եղանակով, ոչ էլ հանդիպումների ընթացքում տեղ գտած քննարկումների շրջանակում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԵՄՀ-ում առկա է հաշվետվողականության սահմանված կարգ: Անուամենայնիվ, հաշվետվության առկա ձևերում ներկայացված տվյալների համադրելիությունը ՌԾ-ին և դրանից բխող գործողությունների ծրագրին հստակ չէ, քանի որ ՌԾ-ի և ԳԾ-ի ցուցանիշները թիրախավորված չեն, հարաբերական են, և չկան ելակետային տվյալներ՝ աճի կամ նվազման միտումների տեսանելիության համար: Առանձին, միայն ցուցանիշներով հաշվետվության կիրառվող պրակտիկան, միայն քանակական ցուցանիշների արձանագրումը, առանց որակական վերլուծությունների, վտանգում է իրավիճակի և զարգացումների համակողմանի գնահատումը և հաշվետվողականության թափանցիկությունը:

ՄՈՒՀ-ի՝ ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության հիմնական գործիքը՝ ՄՈՒՀ-ի կայքը, գրավիչ է, գունեղ, հեշտ նավարկելի, այնուամենայնիվ, կայքի ֆոնային ԵՄ դրոշը գաղափարական հակասություն է ստեղծում Եվրասիա անունը կրող համալսարանի կողմից ԵՄ խորհրդանիշի կիրառմամբ: Կայքէջում օտարալեզու տեղեկությունների սակավությունը և ներկայացման որակը լուրջ խոչընդոտ են ՄՈՒՀ-ի միջազգայնացման և արտաքին շահակիցների հետ լիարժեք շփումներում:

Հետադարձ կապի մեխանիզմները կազմակերպվող միջոցառումների ձևով գործում են շահակիցների և աշխատաշուկայի ներկայացուցիչների դեպքում: Աշխատաշուկայի հետ հարաբերություններում հետադարձ կապի մեխանիզմների հստակեցումը կարևոր է ոչ թե ընթացակարգային, այլև բովանդակային առումով: ՄՈՒՀ-ն ավելի շատ կենտրոնանում է իր գործունեության ընթացակարգային կողմի ապահովման վրա, սակայն արդյունքում տուժում է փոխշփումների և գործունեության բովանդակային կողմը: Շահակիցների հետ գոյություն ունեցող հետադարձ կապի մեխանիզմներով ստացված արձագանքի բովանդակության պատշաճ վերլուծությունների պակասը խոչընդոտում է ինչպես ՄՈՒՀ-ում կրթության, այնպես և հասարակությանը տրամադրվող այլ ծառայությունների որակի բարելավումը:

Իրավաբանական կլինիկան կարող է լինել հանրության հետ կապերի ձևավորման կայուն և ազդեցիկ մեխանիզմ, սակայն առաջին այցին հաջորդող ծառայությունների վճարովի լինելը ստեղծում է հանրության հետ կապերը լրացուցիչ եկամուտի հայթայթման եղանակների վերածելու տպավորություն՝ այս կերպ խաթարելով Իրավաբանական կլինիկայի հանրությանը ծառայելու գաղափարը: Այսպիսի աշխատակարգը վտանգում է հանրության շրջանում ՄՈՒՀ-ի կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների ընկալումը:

ՄՈՒՀ-ի՝ գիտելիքների և արժեքների հասարակությանը փոխանցման գործողությունները բազմազան են՝ մասամբ նաև կապ ունենալով ՄՈՒՀ-ի «Եվրասիա միջազգային համալսարան» ՍՊԸ-ի մաս լինելու հանգամանքի հետ: Գործողություններից մի քանիսը կարելի է գնահատել դրական, հաշվի առնելով վաղ տարիքում քննական մտածողության, առաջնորդության նախադրյալների զարգացումը, այնինչ այլք, օրինակ՝ աշակերտական գիտաժողովներն ուղղորդված են գոյություն ունեցող տեղեկատվության վերափաթեթավորմանը՝ հեղինակային իրավունքի և ակադեմիական ազնվության հիմնարար սկզբունքների խախտմամբ: Այստեղ փոխանցվող արժեքների որակի հարցը խնդրահարույց է: Այլ կերպ ասած, եթե ամառային դպրոցն ունի ավագ դպրոցի

աշակերտների շրջանում քննական մտածողություն առաջ բերելու ներուժ, ապա աշակերտական գիտաժողովների նյութերի դիտարկումը հուշում է օրիգինալ գիտական գիտելիքի ստեղծման անհնարինության մասին: Այսպիսի իրողությունների համատեքստում ավագ դպրոցի աշակերտները դիմում են տարբեր աղբյուրներից տեղեկությունների ծաղկաքաղին, հիմնականում առանց հղումների՝ այս կերպ խախտելով ակադեմիական ազնվության սկզբունքները: Այսպիսի փորձառությունը լրջորեն վտանգում է աշակերտների կողմից գիտականության և գիտելիքի ստեղծման առաջնային ընկալումն ու փորձառությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ՄՈՒՀ-ի՝ հասարակական պատասխանատվության շրջանակում իրականացվող գործողությունները, հաշվետվողականության և թափանցիկության համար կիրառվող կառուցակարգերը, հանրության և շահակիցների տարբեր խմբերի հետ հարաբերությունների և հաղորդակցության իրականացմանն ուղղված ջանքերը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է Չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ը 2014-2018թթ. զարգացման ռազմավարական ծրագրում միջազգային համագործակցության ընդլայնումը սահմանել է որպես նպատակ և նշված տիրույթի մասով նախատեսել է խթանել միջազգային կրթական, գիտական և այլ համագործակցային ծրագրերի ավելացումը, ընդլայնել ուսանողների, ՊԴ կազմի, ասպիրանտների և վարչական աշխատակիցների շարժունության հնարավորությունները դեպի օտարերկրյա գործընկեր բուհեր և այլ շահակից կազմակերպություններ և հակառակը:

ՄՈՒՀ-ը մշակել է 2018-2023թթ. միջազգայնացման ռազմավարություն, որով սահմանված է 5 նպատակ՝ գնահատման ցուցիչներով, իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումներով: Նպատակներում թիրախավորված են ուսանողների և անձնակազմի մասնակցությունը շարժունության և հետազոտության ոլորտում գործակցության զարգացման ծրագրերին: Բացի այդ, մատնանշվում է օտարերկրյա ուսանողների հավաքագրման գործողություն, մասնավորապես առաջնահերթություն տալով հետևյալ երկրներին՝ Վրաստան, Ռուսաստան, Չինաստան, Հնդկաստան, Իրան, Իրաք, Սիրիա, Լիբանան, եվրոպական երկրներ, ինչպես նաև

հայկական սփյուռք: Ակնկալվում է, որ ՄՈՒՀ-ում ուսումնառող օտարերկրա ուսանողների թվաքանակը պետք է աճի տարեկան 5%-ով:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՄՈՒՀ-ում առկա է նշված տիրույթում հիմնական գործառույթներն իրականացնող ստորաբաժանում՝ Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոն, որն իր գործունեությունը ծավալում է 2009 թվականին ընդունված «Միջազգային կենտրոնի գործունեության» կարգով:

Կենտրոնը գործում է ԵՄՀ Ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի անմիջական ղեկավարությամբ: Կենտրոնի աշխատանքները համակարգում է կենտրոնի պատասխանատուն:

2016թ.-ին մշակվել է միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատուի պաշտոնի անձնագիրը: Դրանում սահմանվում են պատասխանատուի առջև դրված հիմնական խնդիրները, գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները՝ ՄՈՒՀ-ում միջազգայնացման ապահովման և հետազոտությունների իրականացման տեսակետից:

Միջազգային գործակցության քաղաքականության գնահատման համար պատասխանատու է ՈԱ կենտրոնը՝ ՈԱ ձեռնարկում նշված ցուցիչների հիման վրա: Այդ ցուցիչներն են՝ օտարերկրյա հաստատությունների հետ համաձայնագրերի քանակ, միջազգային նախագծերում և շարժունության ծրագրերում ներգրավված դասախոսների քանակ, օտարերկրյա ուսանողների թվաքանակ: Գնահատման հստակ քաղաքականություն դեռևս մշակված չէ:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ԵՄՀ-ն օտարերկրյա գործընկերների հետ գործակցում է մի քանի ոլորտներում: Համալսարանը զարգացնում է ուսանողների և անձնակազմի փոխանակման ծրագրերը եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ERASMUS+ ծրագրի շրջանակներում: ՄՈՒՀ-ը ՀԱՐՄՈՆԻԱ ծրագրի կոնսորցիումի անդամ է և համագործակցում է կոնսորցիումի անդամ համալսարանների հետ: Վերոգրյալ նախագիծը միտված է բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացման ռազմավարության մշակմանը, ինչպես նաև դրանց միջազգային ինտեգրմանը: ASPIRE (Access to Society for People with Individual Requirements) նախագիծը միջազգային գործակցության մեկ այլ ցանց է, որին ևս մասնակցել է ԵՄՀ-ը 2016 թվականին՝ հանդես գալով որպես ծրագրի հայաստանյան համակարգող: Այն ֆինանսավորվել է ՏԵՄՊՈՒՍ-ի շրջանակներում և համակարգվել Թբիլիսիի Իլիայի պետական համալսարանի կողմից: Նախագիծը ներառում էր 14 գործընկեր՝ ներառյալ ԵՄՀ-ն, 5 հաստատություն Հայաստանից (Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Գորիսի պետական համալսարան, ՀՀ կառավարման ակադեմիա, Հույսի կամուրջ):

2011-2016 թվականներին Համալսարանը հանդիսացել է Էրազմուս Մունդուս միջազգային փոխանակման ծրագրի երեք ծրագրերի (ALRAKIS I, ALRAKIS II և MID) կոնսորցիումների անդամ: ԵՄՀ ուսանողները հնարավորություն են ունեցել իրենց ուսումնառության որոշակի հատվածը (սկսած 6 ամսից) իրականացնել համագործակից

բուհերից որևէ մեկում, իսկ դասախոսները մասնակցել են տարբեր վերապատրաստումների: 2016-2017թթ ուսումնական տարում փոխանակման ծրագրերով համագործակից բուհեր է մեկնել ԵՄՀ 23 ուսանող: Փորձագիտական այցի ընթացքում հանդիպմանը մասնակից ուսանողները հաստատեցին նշված հնարավորություններին իրենց տեղեկացվածության մասին, ինչպես նաև մասնակցությունը այդ ծրագրերին:

Բացի այդ, ԵՄՀ-ի մագիստրատուրայի ուսանողները կարող են 1-2 կիսամյակ տևողությամբ շարժունության ծրագիր իրականացնել Վարշավայի բնական գիտությունների համալսարանում՝ օգտվելով Վիշեգրադյան կրթաթոշակի ընձեռած ֆինանսական աջակցությունից: ԵՄՀ-ը ուսանողների փոխանակման հատուկ պայմանագիր ունի Վիլնյուսի համալսարանի (Լիտվա) հետ: Բոսթոնի Քոլեջի միջազգային բարձրագույն կրթության կենտրոնի հետ ևս գործակցության եզրեր են մշակվել հետազոտական մի նախագծի շրջանակներում: Սթոնհիլ Քոլեջի հետ համատեղ համալսարանն իրականացրել է ամառային դպրոց և երկու միջազգային գիտաժողով՝ տարբեր երկրներից ուսանողների մասնակցությամբ: Նյութերն առկա են էլեկտրոնային տարբերակով:

Համալսարանը բավական ակտիվ է Իրաքում՝ ուսանողներ հավաքագրող գործակալությունների ծառայությունների շնորհիվ: Հավաքագրված ուսանողների առաջին խմբի դասերը կմեկնարկեն 2018 թվականի հոկտեմբերին՝ Ֆարմացիա մասնագիտությամբ: ԵՄՀ-ի անձնակազմի մի մասը մասնակցել է Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված աշխատաժողովներին: Հայաստանի ազգային ագրարային համալասարանի հետ իրականացվել է համալսարանների միջազգայնացման փորձի փոխանակում:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՄՈՒՀ-ն ուսանողների և աշխատակիցների համար իրականացնում է օտար լեզուների մակարդակի որոշում և անվճար տրամադրում է համապատասխան վկայական, անհրաժեշտության դեպքում իրականացվում են անվճար հավելյալ դասընթացներ: Բուհում օտար լեզուներով դասավանդվող առարկաների համար պրոֆեսորադասախոսական կազմը ստանում է 30%-ի չափով բարձր ժամավճար: Առկա չեն տվյալներ այն մասին, թե ՄՈՒՀ-ի դասախոսների և ուսանողների քանի տոկոսն են տիրապետում անգլերենին:

ՄՈՒՀ-ն իր միջազգայնցման ռազմավարական ծրագրում մեծ շեշտադրում է անում օտար լեզվի իմացության վրա՝ նպատակ սահմանելով, որ 2023թ. դասախոսների առնվազն 50%-ը պետք է դասընթացներ վարի օտար լեզվով: ՄՈՒՀ-ը, աշխատակիցների մոտիվացիան բարձրացնելու նպատակով, նախաձեռնել է անգլերենի իմացության ցուցանիշը ներառել աշխատակիցների գնահատման մեջ:

Դատողություններ: Դրական է ՄՈՒՀ-ի կողմից կրթության և հետազոտության միջազգայնացումն առաջնահերթություն դիտարկելը: Դրական է նաև ՌԾ-ում միջազգայնացման ուղղությամբ նպատակների և գործողությունների սահմանումը, ինչպես նաև առանձին միջազգայնացման ռազմավարության մշակումը: Այնուամենայիվ, ՄՈՒՀ-ի գործողությունները ուղղված չեն միջազգայնացման ուղղությամբ սահմանված

թիրախների ձեռքբերմանը, ինչը կվտանգի միջազգայնացման ռազմավարական նպատակների իրագործումը:

ՄՈՒՀ-ն ունի ստորաբաժանում, որը զբաղվում է միջազգային ծրագրերով: Թեև ստորաբաժանումը նաև համակարգում է հետազոտական բաղադրիչը, այն բավականին հաջող կերպով կարգավորում է միջազգային ծրագրերի հետ առնչվող գործողությունները: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ սահմանափակ ռեսուրսներ ունեցող ստորաբաժանումը չի կարողանա ապագայում կարգավորել նաև արտասահմանցի ուսանողների հետ կապված հարցերը, եթե ուսանողների զգալիորեն մեծ ներհոսք ապահովվի: Բացի այդ, ստորաբաժանման գործունեությունը պլանավորված չէ ըստ ՌԾ նպատակների: Այսպիսի աշխատակարգը կարող է վտանգել ՄՈՒՀ-ի կողմից միջազգայնացման ուղղությամբ սահմանված նպատակների իրագործումը և դրանց համար սահմանված ցուցանիշների և թիրախների ապահովումը:

ՄՈՒՀ-ն ունի արդյունավետ համագործակցության փորձ ինչպես ազգային, այնպես էլ արտասահմանյան ՄՈՒՀ-երի հետ: Սևիլիայի համալսարանի կողմից համակարգվող ՀԱՐՄՈՆԻԱ նախագծի շրջանակներում մոտավորապես 12 համալսարանների հետ կոնսորցիումի անդամ լինելը և դրանից բխող կապերը մեծ ազդեցություն են ունեցել ԵՄՀ-ի միջազգայնացման ուղու վրա: ՄՈՒՀ-ի համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է ՏԵՄՊՈՒՍ և ԷՐԱԶՄՈՒՍ ծրագրերով կոնսորցիումային համագործակցություններով, ինչը հնարավորություններ է ստեղծում ուսանողների ու դասախոսների շարժունության համար: Հատվածական է համագործակցությունը եվրոպական մի քանի բուհերի և երկու ամերիկյան բուհերի հետ: Այս համագործակցությունը չի ներառում ՄՈՒՀ-ի գործունեության ողջ տիրույթը, սակայն ապահովում է ուսանողների և դասախոսների ակտիվ փոխանակումներ և արտագնա ուսումնառության և վերապատրաստման լայն հնարավորություններ: Հարկ է ընդգծել, որ շահակիցները խիստ դրական են գնահատում ՄՈՒՀ-ի կողմից իրենց տրվող այս հնարավորությունը, որը նաև գրավիչ գործոն է թե՛ ուսանողների, թե՛ ՊԴ կազմի համար: Այնուամենայնիվ, համադրելի մասշտաբի և համանման խնդիրներ և նպատակներ ունեցող ՄՈՒՀ-երի հետ համագործակցության պակասը վտանգում է ՄՈՒՀ-ի սեփական կարողությունները սթափ գնահատելու, կոնկրետ ուղղություններով թիրախավորված ծրագրեր և նախագծեր իրականացնելու կարողությունը:

Դրական է, որ ՄՈՒՀ-ը հանձն է առել ՊԴ կազմի և ուսանողների համար օտար լեզուների անվճար դասավանդում իրականացնել, ինչպես նաև ապահովել օտարալեզու դասավանդում: Սակայն այս պահին գործուն քայլերի և ռեսուրսների բացակայությունը վտանգում է օտար լեզվի իմացությամբ դասախոսների և օտարալեզու դասավանդման ուղղությամբ սահմանված թիրախների ձեռքբերումը:

Եզրակացություն: Հաշվի առնելով միջազգայնացման ուղղությամբ ՄՈՒՀ-ի ՌԾ-ում սահմանված նպատակը, առանձին միջազգայնացման ռազմավարության, առանձին ստորաբաժանման առկայությունը, միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցությունը, առանձին համագործակցությունների կայացման փաստը, ինչպես նաև ներքին շահակիցներին օտար լեզու դասավանդելու պատրաստակամությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրահանգում: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՄՀ-ի որակի ներքին ապահովման նպատակներն ու ձեռնարկվելիք քայլերը սահմանվում են համալսարանի 2014-2018թթ. Ռազմավարական ծրագրում և ՈԱ քաղաքականության մեջ: Դրանց իրականացման կառուցակարգերը, ընթացակարգերը և գործիքակազմը նկարագրված են 2014թ. ընդունված ՈԱ ուղեցույցում:

ԵՄՀ-ն իր 2014-2018թթ. Ռազմավարական ծրագրում որպես նպատակ սահմանել է կրթության որակի շարունակական բարելավումն ու որակի մշակույթի զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը: ՌԾ-ով սահմանված յուրաքանչյուր նպատակ ունի իր ռազմավարական ցուցիչները, առկա են որակի քաղաքականության իրականացման համար պատասխանատու անձինք և ստորաբաժանումներ, սահմանվել են նաև տարեկան հաշվետվությունների /զեկույցների/ վերջաժամկետներ: Սակայն գործողությունների արդյունավետության գնահատում դեռևս չի իրականացվել: ՄՈՒՀ-ը, կրթության որակի շարունակական բարելավման նպատակով, նախատեսել է բարելավել իրականացվող ՄԿԾ-ների որակը, ՊԴ մասնագիտական և մեթոդական հմտությունները և ՈՆԱ համակարգը: ՌԾ-ով նախատեսված որակի մշակույթի տարածման նպատակով ՄՈՒՀ-ը աշխատանքներ է կատարում որակի մշակույթի տարածմանը նպաստող կառավարման արդյունավետ մեխանիզմներ ներդնելու, հաստատության գործունեության թափանցիկությունը բարձրացնելու ուղղությամբ՝ իրականացվող ծառայությունների վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմների իրականացման միջոցով:

2014թ.-ին մշակված ՈԱ ուղեցույցում ներկայացված են հաստատության ՈՆԱ քաղաքականությունը, իրականացման ընթացակարգերը, գործընթացները, կառուցակարգերը և գործիքակազմը: Հաստատությունն առանձնացրել է որակի ապահովման 8 ոլորտներ՝ կառավարում և վարչարարություն, ՄԿԾ-ներ, դասավանդման և ուսումնառության գործընթացներ, հետազոտություն և զարգացում, ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, հասարակական պատասխանատվություն, արտաքին կապեր և միջազգայնացում: Գործընթացներն ու ընթացակարգերը հիմնված են ՊԻԳԲ շրջափուլի վրա: 2015թ. ստեղծվել է որակի ապահովման ուղեցույցի վերանայման համար պատասխանատու աշխատանքային խումբ՝ որակի ապահովման կենտրոնի ղեկավարի գլխավորությամբ: Համալրվել է ռազմավարական ցուցանիշների ցանկը, խմբագրվել է համալսարանի շահակիցների ցանկը՝ նրանց թվում ավելացնելով նաև դիմորդներին, ավելացվել է ՈԱ համակարգի պլանավորման, իրագործման, ստուգման և վերանայման շրջափուլն արտացոլող աղյուսակ, լրամշակվել է ուսանողների կարիքների և պահանջմունքների բացահայտմանն ուղղված քանակական հետազոտությունների

ցանկը, կատարվել ավելացումներ կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման ընթացակարգում:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Որակի ներքին ապահովման համակարգի գործընթացների կառավարման նպատակով 2010 թվականին ԵՄՀ-ն ստեղծել է Որակի ապահովման կենտրոն և հաստատել կենտրոնի նոր գործառույթները. ՄՈՒՀ-ում դեռևս 2007 թվականին հիմնվել է Որակի ապահովման և ակադեմիական գնահատման կենտրոն:

Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՈԱ կենտրոնին տրամադրվել են մարդկային ռեսուրսներ: 2016 թվականից կենտրոնի գործառույթների իրականացման համար պատասխանատու են երկու մասնագետ, որոնք իրականացնում են ՈՆԱ գործընթացների գնահատման հետ կապված հիմնական գործառույթները: ՈՆԱ գործառույթներին աջակցում են նաև դասախոս և ուսանող-գործակալները: ՈԱ կենտրոնի աշխատակիցների և որակի գործակալների գործառույթները սահմանված են ՈԱԿ ղեկավարի, մասնագետի, ամբիոնային գործակալի, ուսանող-գործակալի պաշտոնի անձնագրերի միջոցով: Պաշտոնի անձնագրերում սահմանվում են պաշտոնական պարտականությունները, աշխատակիցների առաջ դրված հիմնական խնդիրներն ու գործառույթները, իրավունքները, պատասխանատվությունը: Առանձին գործընթացների իրականացման նպատակով կարող են ստեղծվել նաև աշխատանքային խմբեր. վառ օրինակն է Ինքնավերլուծության զեկույցի նախապատրաստման համար ստեղծված աշխատանքային խումբը: Ամբիոնային և ուսանող գործակալները հաշվետու են ՈԱ կենտրոնի ղեկավարին: Գործակալները կրթական ծրագրերի վերանայման ընթացքում գնահատում են իրենց ամբիոնի դասընթացների համապատասխանությունը Որակի կենտրոնի նախապես ներկայացրած պահանջներին, արդյունքները ներկայացնում ամբիոնի վարիչին և Որակի ապահովման կենտրոնին՝ հետագա բարելավումների նպատակով, գնահատում կրթական ծրագրերի վերաբերյալ բուհի պաշտոնական կայքէջում տեղադրված տեղեկատվությունը, ինչպես նաև իրականացնում որակի ապահովման ներքին համակարգին առնչվող այլ հանձնարարականներ:

ՈԱ կենտրոնը ֆինանսավորվում է համալսարանի բյուջեից, երբեմն նաև դրամաշնորհներից: 2013թ. «Կրթության որակ և համապատասխանություն երկրորդ վարկային ծրագրի «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում և դրա հետագա բարելավում» բաղադրիչի շրջանակներում ԵՄՀ-ին տրամադրված դրամաշնորհային ծրագրով կենտրոնը համալրվել է նոր ռեսուրսներով, որի արդյունքում ստեղծվել են հարմարավետ աշխատանքային պայմաններ: ԵՄՀ-ի բյուջեն չի մասնավորեցնում այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են որակի քաղաքականության իրականացման համար: Սակայն, ՈԱ կենտրոնի հավաստմամբ ներկայիս ֆինանսավորումը բավարարում է կենտրոնի կանոնադրությամբ վավերացված առաջադրանքներն իրականացնելու համար:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

ԵՄՀ-ի ներքին շահակիցների /դասախոսներ, ուսանողներ, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցներ/ մասնակցությունը ՄՈՒՀ-ի որակի ապահովման

գործընթացներին կազմակերպվում է հարցումների, ֆոկուս խմբային հանդիպումների միջոցով: Հանդիպումների, հարցումների պարբերականությունը սահմանվում է Որակի ապահովման ուղեցույցում: Մասնավորապես ՄՈՒՀ-ի ՈԱ կենտրոնի կողմից իրականացվել են ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծությանն ուղղված հարցումներ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի շրջանում, աշխատանքի և կարիերայի մասին հարցում նորավարտ շրջանավարտների շրջանում, պրոֆեսորադասախոսական կազմի մեթոդական և մասնագիտական վերապատրաստումների իրականացման կարիքի գնահատում, ուսանողների կողմից դասախոսի գնահատում, դասընթացի և կրթական ծրագրի գնահատումներ՝ ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ հարցումների արդյունքում հիմնական փոփոխություն եղել է դասախոսների շրջանում վերապատրաստվելու պատրաստակամության բարձրացումը և՝ մասնագիտական, և՝ մեթոդական առումով, որի պատճառը գուցե վերապատրաստման որակական բարելավումն է, ուսանողների միջև մրցակցության բարձրացումը նույնպես կարևոր փոփոխություններից է: Սակայն փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ նաև, որ ՈԱ գործընթացներում առկա է արտաքին շահակիցների թույլ ներգրավվածություն:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Կենտրոնը կարևորում է որակի շարունակական բարելավումը որպես իր քաղաքականության կարևորագույն սկզբունք: Սակայն, դեռևս չի իրականացվել Կենտրոնի գործունեության արդյունավետության գնահատում:

ԵՄՀ-ում գործում է որակի վերահսկողության երկու պարբերաշրջան՝ տարեկան և ռազմավարաման պլանավորմանը համապատասխան 4-5 տարին մեկ անգամ պարբերականությամբ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի տարբեր ոլորտներում որակի ներքին ապահովման գործընթացները գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր մակարդակներում: Մասնավորապես.

- Պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման շրջափուլով անցել են հետևյալ գործընթացները. ռազմավարական ցուցանիշների ցանկի համալրում, համալսարանի շահակիցների ցանկի վերանայում՝ դիմորդներին այս ցանկում ներգրավմամբ, ՈԿՀ պլանավորման, իրագործման, ստուգման և վերանայման շրջափուլն արտահայտող աղյուսակի կազմում, ուսանողների կարիքների և պահանջմունքների բացահայտմանն ուղղված քանակական հետազոտությունների ցանկի մշակում, դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի, ինչպես նաև արտաքին շահակիցների կարիքների բացահայտման նպատակով իրականացվող հետազոտությունների ցանկի կազմում, կարիքների վերհանման հետազոտությունների նպատակների և պարբերականության սահմանում,

Պլանավորվել, իրականացվել և գնահատվել է տարեկան պլանների կատարողականը:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ՄՈՒՀ-ի Որակի ապահովման քաղաքականության և ՈԱ կառավարման համակարգի ուղենիշներից է ՈԱԱԿ-ի չափանիշներին համապատասխանությունը:

Նախորդ հավատարմագրումից հետո հաստատությունը ներկայացրել է հաշվետվություններ ըստ բարելավման պլանի իրականացրած գործողությունների: Եվրասիա համալսարանն ապահովում է հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար: Այդ առումով հավաքագրվել են տվյալներ, իրականացվել հարցումներ, հաշվետվություններ, ըստ հավատարմագրման ձևաչափի իրականացվել է ինքնավերլուծություն: Յուրաքանչյուր չափանիշի համար ներառվել է բավականին հակիրճ տեղեկատվություն, ինչպես նաև իրականացվել է SWOT վերլուծություն՝ տարբեր չափանիշների պարագայում տարբեր ծավալով և խորությամբ: Այնուամենայնիվ, 10-րդ չափանիշի վերջում ներկայացված SWOT վերլուծության մեջ ներառված չեն թույլ կողմեր և ռիսկեր:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԵՄՀ-ն որակի ապահովման համակարգի և դրա արդյունքների վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների շրջանում տեղեկատվությունը տարածում է պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով: Համալսարանի ռազմավարական պլանը, գործընթացներին և ընթացակարգերին վերաբերող հիմնական փաստաթղթերը հրապարակվում են համալսարանի կայքում: Հաստատության ամբիոնների և համալսարանի այլ ստորաբաժանումների (օր.՝ ՈԱ կենտրոն, Ֆինանսական կառավարման բաժին, ՄՌԿ բաժին) ու ռեկտորի տարեկան հաշվետվությունները հասանելի են ՄՈՒՀ-ի ներքին շահակիցներին:

ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջում հասանելի են տարատեսակ փաստաթղթեր և զեկույցներ եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) հրապարակմամբ: Կայքի անգլերեն և ռուսերեն բաժիններն նույնքան հագեցած չեն, որքան հայերեն բաժինը: Անգլերենով կայքի «Որակ» բաժինը միայն տեղեկատվություն է պարունակում դիպլոմների հավելվածի և Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ: Էջի ռուսերեն տարբերակը տեղեկատվություն է տրամադրում որակի ապահովման մասին:

ՄՈՒՀ-ի ՈԱ գործընթացների՝ հաշվետվությունների, վերլուծությունների որակական կողմի մասին տեղեկատվություն տրամադրված չէ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը ողջունում է որակին վերաբերող հարցերի արծարծումն այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են ԵՄՀ-ի առաքելությունը և ռազմավարությունը: Վերոգրյալից զատ, ողջունելի է նաև ՈՆԱ համակարգի և դրա գործունեությանն աջակցող կառույցների ստեղծումը: Գոյություն ունեցող մյուս երկու փաստաթղթերը՝ ՈԱ քաղաքականությունը և ՈԱ ուղեցույցը, կարևորագույն դերակատարություն ունեն: ՈԱ քաղաքականությունը նկարագրող փաստաթղթերում առկա են «որակի մշակույթ» (հաճախ նաև «որակի ապահովման մշակույթ»), ինչպես նաև «որակի բարելավում» եզրույթները. վերջինս շատ ավելի հաճախակի գործածություն ունի: Այդուհանդերձ, պարզ չէ, թե ինչպես են վերոգրյալ հասկացություններն ընկալվում ԵՄՀ-ի համատեքստում, և թե ինչպիսին է անցումը որակի ապահովումից որակի մշակույթի: Հատկանշական են ՈՆԱ գործունեության լայն տիրույթը և միջազգային փորձառության ներգրավման ուղղությամբ գործադրված ջանքերը: Փորձագիտական այցի ընթացքում այս մասին պարզաբանումների բացակայությունը չի նպաստում ընկալմանն առ այն, թե որչափ է կրթական համայնքը կիսում և ընկալում Ռազմավարական ծրագրում և ՈԱ

քաղաքականության մեջ զետեղված արժեքները և մտադրությունները: Փորձագիտական այցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ ՈԱ քաղաքականությունը վերանայման չի ենթարկվելու՝ չնայած այն հանգամանքին, որ առաջիկա 5 տարվա նոր ռազմավարությունը նախապատրաստման փուլում է: Նոր ՌԾ-ին համապատասխանության նպատակով ՈԱ քաղաքականության վերանայման մտադրության բացակայությունը, ինչպես նաև համալսարական հանրույթի կողմից ՈԱ արժեքների և նպատակների ընդհանուր թյուրընկալումը վտանգում է ՄՈՒՀ-ի ռազմավարական զարգացմանը զուգընթաց ՈԱ քաղաքականության բարելավումը և ընդհանուր ՈԱ մշակույթի ձևավորումը:

ՈՆԱ գործընթացների կառավարման նպատակով բուհը տրամադրում է բավարար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ՝ ներգրավելով նաև ՊԴ կազմի ներկայացուցիչներին և ուսանողներին որպես որակի գործակալներ: Այնուամենայնիվ, ֆինանսական միջոցների հատկացումը ներառված չէ բյուջեի պլանավորման մեջ, ինչը հանգեցնում է միջոցների պլանավորման և գործողությունների միջև խզման և կարող է վտանգել գործողությունների կատարումը:

Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են ՈԱ գործընթացներում, թեև ակնհայտ է, որ արտաքին շահակիցների մասնակցությունն ավելի թույլ է արտահայտված, մասամբ նրանց ներգրավված մեխանիզմների ավելի թույլ գործարկման պատճառով: Ընդհանուր առմամբ, ՄՈՒՀ-ի փոքր լինելու հանգամանքը խոսում է շահակիցների հետ ավելի անմիջական շփումների հնարավորությունների մասին, քանի որ խիստ ֆորմալ ՈԱ համակարգը կարող է ծանրաբեռնել փոխգործակցությունը՝ այս կերպ խոչընդոտելով համակարգի արդյունավետությանը:

Դրական է, որ նախկինում որոշակի պարբերականությամբ ՈԱ համակարգի և դրա հիմքում ընկած փաստաթղթերի վերանայումներ տեղ են գտել ՄՈՒՀ-ում: Այնուամենայնիվ, տարակուսանք է առաջացնում նոր ՌԾ-ին համահունչ ՈԱ համակարգի հերթական վերանայման պատրաստակամության և պլանավորման բացակայությունը, ինչը կվտանգի ՄՈՒՀ-ի գործունեության և դրա ՈԱ գործողությունների համընթացությունը՝ ի նպաստ որակյալ կրթության: Բացի այդ, ինքնավերլուծության ՈԱ բաժնում չեն հատկորոշվել ՈԱ համակարգի թույլ կողմերն ու ռիսկերը, ինչը ստիպում է փորձագիտական խմբին կարծել, թե ՄՈՒՀ-ը այլևս չի տեսնում ՈԱ համակարգի բարելավման անհրաժեշտություն: Այսպիսի մոտեցումը կխոչընդոտի ՈԱ համակարգի ընդհանուր զարգացումը:

Ակնհայտ է որակի ներքին ապահովման համակարգի և որակի արտաքին ապահովման գործողությունների միջև տրամաբանական կապակցվածությունը, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ներքին ապահովման համակարգի այսպիսի սինխորանիզացիան արտաքին գործողությունների հետ գերծանրաբեռնում և չափազանց ֆորմալացնում է ՄՈՒՀ-ի որակի ներքին ապահովման համակարգը: Տպավորություն է ստեղծվում, որ ՈՆԱ համակարգի առաջնային գործառույթը ՈԱԱ գործողությունների ապահովումն է՝ ՄՈՒՀ-ի սեփական կարիքներին միտված լինելու փոխարեն: Արդյունքում բազմաթիվ են հիմքում ընկած փաստաթղթերն ու քանակական տվյալները, սակայն որակական վերլուծությունները, որոնք հավելյալ արժեք կստեղծեին ՄՈՒՀ-ի բարելավման գործում, թերի են կամ բացակայում են: Այսպիսի

աշխատակարգը խոչընդոտում է ՄՈՒՀ-ի սեփական խնդիրների վերհանումը և դրանց համար բովանդակային և հասցեական լուծումների որոնումը:

ՄՈՒՀ-ի ՈՆԱ համակարգն աշխատում է ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ, այուամենայնիվ, շահակիցների հետ փոխշփման հիմնական գործիքի՝ կայքէջի բովանդակությունը պարունակում է ֆորմալ փաստաթղթեր և հաշվետվություններ, որոնք միշտ չէ, որ ի ցույց են դնում ՄՈՒՀ-ում տեղ գտած որակական զարգացումները: Այս իմաստով շահակիցների հետ շփումների ֆորմալության նվազումը ի նպաստ անմիջական և բովանդակային շփման կարող է շահեկան լինել ՄՈՒՀ-ի ծառայությունների որակական կողմի մասին ակտիվ իրազեկման տեսանկյունից: Այլապես, ֆորմալ աշխատակարգերը և որակի մասին տեղեկությունների չտարածումը վտանգում է ՄՈՒՀ-ի զարգացումների մասին հանրության շրջանում իրազեկության ձևավորումը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով ՄՈՒՀ-ում ՈԱ քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը, հիմնական անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը, ներքին և մասամբ արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում, մինչ օրս ՈԱ համակարգի պարբերական վերանայումները, ՈՆԱ-ի՝ ՈԱԱ-ի հետ փոխառնչությունները և ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին որոշակի թափանցիկության ապահովումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է 10-րդ չափանիշի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Չի բավարարում
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

02 հոկտեմբեր 2018թ.

Քրիստինե Առղիկյան

Փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քրիստինե Սողիկյան – 2000թ.- ին ավարտել է Երևանի պետական լեզվաբանական համալսարանի Ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետը («անգլերենի և ֆրանսերենի մասնագետ, ուսուցիչ» որակավորմամբ), իսկ 2003թ.-ին՝ նույն համալսարանի առկա ասպիրանտուրան: 2000թ.-ից աշխատում է Վ. Բրյուսովի անվան համալսարանում: Մասնակցել է բազմաթիվ միջազգային ծրագրերի, գիտաժողովների, դասընթացների՝ լինելով արտասահմանյան մի շարք համալսարաններում, այդ թվում՝ Սիրակուզի, Կոլումբիայի, Միչիգանի, Մասաչուսեթսի համալսարաններ (ԱՄՆ): 2000-2001թթ.-ին աշխատել է Երևանի թիվ 67 միջնակարգ դպրոցում՝ որպես անգլերենի ուսուցիչ, 2001թ.-ին դասավանդել է նաև Երևանի «ՈՒսում» դպրոցում: 2003-2006թթ.-ին, որպես դասախոս, մասնակցել է 2003-2006թթ. ԵՊԼՀ-ի և Սիրակուզի համալսարանի միջև ԱՄՆ կառավարության ֆինանսավորմամբ իրականացվող «Գրելը հանուն ժողովրդավարության» ծրագրին: 2005-2007թթ.-ին եղել ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի փորձագետ (Ավստրիա)՝ համահեղինակելով The European Portfolio of Student Teachers of Languages (EPOSTL) համաեվրոպական մանկավարժամեթոդական ինքնագնահատման թղթապանակը, որը թարգմանվել է ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, անգամ՝ ճապոներեն: 2006-2008 թթ.-ին աշխատել է անգլերենի ուսուցիչ/դասընթացավար «Դեյվիդ Հոթսոն ընդ ասոսիեթս արքիթեքթս» ընկերությունում (Երևան, Հայաստան): 2008թ.-ին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանը, 2012թ.-ին՝ դոցենտի կոչումը: 2011-2012թթ.-ին դասախոսել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում, այդ նույն ժամանակահատվածում եղել է նաև ԵՊԼՀ-ի «Գրավոր խոսքի» մեթոդական խմբի ղեկավար: 2012թ.-ից նույն համալսարանի Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչն է: 2001թ.-ից մինչ օրս աշխատում է որպես գրավոր և հաջորդական/համընթաց թարգմանիչ՝ մի շարք միջազգային կազմակերպությունների, դեսպանատների հետ համագործակցությամբ: Երեք տասնյակից ավելի հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

Մստիսլավ Սոխա – 1969թ.ավարտել է Լոդզի (Լեհաստան) համալսարանը՝ ստանալով տնտեսագիտության մագիստրոսի աստիճան, իսկ 1974թ.-ին ավարտել է Վարշավայի համալսարանի տնտեսագիտության ասպիրանտուրան: 2000թ.-ին Վարշավայի համալսարանում ստացել է գիտությունների դոկտորի աստիճան: Ներկայումս դասախոսում է Վարշավայի համալսարանում, Լեոն Կոզմինսկիի ակադեմիայում, Հյուսիսային պետական համալսարանում, Եվրոպական քոլեջում, Պետական կառավարման դպրոցում: 2014 թ.-ից Լեհական հավատարմագրման կոմիտե Խորհրդատվական խորհրդի անդամ է, իսկ 2017թ.-ից՝ Հունգարիայի հավատարմագրման կոմիտեի Միջազգային խորհրդատվական խորհրդի անդամ: 2002 թ-ից Բարձրագույն կրթության լեհական հավատարմագրման հանձնաժողովի փորձագետ է, իսկ 2014 թ.-ից՝ Բարձրագույն կրթության հավատարմագրման եվրոպական կոնսորցիումի (ECA) Ֆինանսական կոմիտեի անդամ: Մասնակցել է բազմաթիվ գիտահետազոտական ծրագրերի, ազգային և միջազգային դասընթացների և գիտաժողովների: Հեղինակ և համահեղինակ է ավելի քան 120 գիտական աշխատանքների (գրքեր և հոդվածներ) և ավելի քան 40 գիտաժողովների զեկույցների, որոնք հրատարակվել են տեղի և արտասահմանյան մի շարք ամսագրերում:

Մարիամ Մոմջյան – 2004թ.-ին ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտը (ներկայումս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան)՝ Ընդհանուր տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ: 20004-2008թթ.-ին եղել է Հայաստանի Պետական տնտեսագիտական Համալսարանի Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում ամբիոնի հայցորդ: 2008թ.-ին, «Էլեկտրոնային առևտրի ներդրման հիմնախնդիրները ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ոլորտում (ՀՀ օրինակով)» ատենախոսության պաշտպանությամբ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2012թ.-ին՝ դոցենտի գիտական կոչում: 2006 - 2011թթ.-ին եղել է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության սակագնային բաժնի առաջատար մասնագետ, 2009-2013թթ. – ին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս: Ներկայումս դասախոսում է Երևանի պետական և Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարաններում: 2011թ. մայիսից աշխատում է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչությունում՝ որպես գլխավոր մասնագետ: Մասնկացել է մեկ տասնյակից ավել ազգային և միջազգային դասընթացների, հեղինակ է ավելի քան տասը հոդվածների:

Զոն Հայրապետյան – 2012թ.- ին ավարտել է Հայ-Ռուսական համալսարանը՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 2014թ.- ին, ավարտելով Հայաստանի ամերիկյան համալսարանը, ստացել է իրավագիտության մագիստրոսի աստիճանով: 2015թ.-ին ստացել է իրավագիտության թեկնածուի աստիճան (Հայ-Ռուսական համալսարան): 2013 – 2016թթ. - ին եղել է Ոստիկանության կրթահամալիրի դասախոս, այժմ դասխոսում է Հայ-Ռուսական և Հայաստանում ֆրանսիական համալսարաններում: 2012թ.- ից աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ ներկայումս որպես դատավորի օգնական: Ավելի քան տասը գիտական հոդվածների հեղինակ և քրեական դատավարության դասագրքի համահեղինակ: Մասնակից է տասնյակ գիտաժողովների, սեմինարների և դատախաղերի (ազգային և միջազգային):

Արմինե Խրոյան – 2017թ.-ին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսրանի Սկզբնական կրթության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա(տարր.կրթ) բաժնի բակալավրիատը, այժմ սովորում է նույն բաժնի մագիստրատուրայում: 2015թ.-ին ստացել է «Շախմատ» ուսումնական առարկայի ուսուցչի որակավորում: 2016թ.-ին մասնակցել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Ուսանողության ձայն» նախագծի կազմակերպած «Ուսանող փորձագետների վերապատրաստման» եռամսյա դասընթացին: Ուսանողական տարիներին դրսևորել է մեծ ակտիվություն՝ մասնակից լինելով ուսումնական և գիտական տարբեր միջոցառումների, սեմինարների, գիտաժողովների՝ հանդես գալով նաև հեղինակային հոդվածների զեկույցներով

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

20.06.2018թ.-22.06.2018թ.

	20.06.2018 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում բուհի ռեկտորի հետ	9:00	09:30	30 րոպե
2.	Հանդիպում բուհի կառավարման խորհրդի ներկայացուցիչների հետ	09:40	10:30	50 րոպե
3.	Հանդիպում բուհի պրոռեկտորների հետ	10:40	11:40	50 րոպե
4.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:50	12:35	45 րոպե
5.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ /ներառյալ ինքնավերլուծությունում ներկայացված երեք ՄԿԾ-ներն իրականացնող մասնագիտական ամբիոնների վարիչները/	12:45	13:45	60 րոպե
6.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	14:00	15:00	60 րոպե
7.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները) (10-12 հոգի)	15:10	16:10	60 րոպե
8.	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	16:20	17:20	60 րոպե
9.	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	17:30	18:30	60 րոպե
10.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:30	19:30	60 րոպե

	21.06.2018թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների, Ուսանողների իրավունքների պաշտպանի և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ	9:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում բակալավրիատի ուսանողների ներկայացուցիչների հետ (առկա և հեռակա բաժիններից, 10-12 հոգի)	10:10	11:10	60 րոպե
3.	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների ներկայացուցիչների հետ (առկա և հեռակա բաժիններից, 10-12 հոգի)	11:20	12:20	60 րոպե

4.	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, մարզասրահ, բուժկետ, բուֆետ)	12:30	13:30	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (ՄՌԿ բաժին, Օժանդակ ծառայությունների բաժին, Ֆինանսական կառավարման բաժին, Միջազգային կապերի և հետազոտությունների բաժին, կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոն, Հասարակության հետ կապերի բաժին, Նախապատրաստական բաժին, ՛Եվրասիա՛՛ դասընթացների կենտրոն)	14:50	15:50	60 րոպե
7.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	16:00	16:40	40 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:50	120 րոպե

	22.06.2018թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	9:00	10:00	60 րոպե
2.	Այցելություն /3 ՄԿԾ-ների/ ամբիոններ	10:10	11:10	60 րոպե
3.	Հանդիպում միջազգային ուսանողների հետ	11:20	12:20	60 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:30	13:30	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	14:50	17:50	120 րոպե
7.	Հանդիպում բուհի ղեկավարության հետ	17:50	18:20	30 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:30	19:30	60 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1	«ԵՄՀ 2019-2023թթ Ռազմավարական ծրագիրը» /նախագիծ/	1.1
2	Բուհի կառավարման վրա ազդող արտաքին և ներքին գործոնների ազդեցության վերլուծություն	2.4
3	Կառավարման որակի ապահովման շրջափուլի /PDCA/ մասին զեկույց/վերլուծություն	2.5
4	3 ներակայացված ՄԿԾ- ների ամբիոնների անձնագրեր	5
5	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույցը, պլանները	5.4
6	Առարկայական նկարագրերի վերանայումների վերաբերյալ վերլուծություն	3.2
7	Բակալավիրատի և մագիստրատուրայի թեզեր	3.5
8	Վիճակագրություն/վերլուծություն 3 ՄԿԾ-ների գծով զբաղվածության մակարդակի մասին	4.5
9	Յուրաքանչյուր ծրագրի համար հիմնական աշխատակազմի թվային տվյալներ	5.2
10	Երիտասարդ դասախոսների քանակը	5.5
11	ՊԴ անձնակազմի միջին տարիքը	5.5
12	Դասախոս ուսանող հարաբերակցությունը /վերջին 4 տարիների տվյալներ/	
13	ՊԴ կազմի վիճակագրություն՝ ըստ տարիքի և զբաղվածության /հիմնական/ժամավճարային/	5.5
14	ՊԴ կազմի մասին տեղեկատվություն՝ ըստ որակավորումների	5.7
15	Օտար լեզվով դասավանդվող առարկաների նկարագրեր	9.4
16	Աշխատանք-ֆարմացիա ամբիոնի վարիչ, մրցույթի հայտարարություն	
17	համալսարանի գործող համագործակցություններ և պայմանագրեր	
18	ՊԴ կազմի դրույքաչափերը և ժամավճարները	5
19	Տեղեկանք ՊԴ կազմի, 2017-18թթ. ուստարի, բակալավր, մագիստրատուրա, 2-րդ կիսամյակ, իրավագիտության ամբիոն	5
20	Դասախոսների դասավանդվող դասաժամերը 2017-18 ուստարի, գարնանային կիսամյակ, իրավագիտության ամբիոն	5
21	ՊԴ կազմի ծանրաբեռնվածություն, իրավագիտության ամբիոն	5
22	Գնահատման տեղեկագիր, իրավագիտության ամբիոն	
23	ռուսաց լեզվի ուսանողների հաշվառման թերթիկ, իրավագիտության ամբիոն	
24	Ավարտական ամփոփիչ ատեստավորման ամփոփաթերթ, իրավագիտության ամբիոն	
25	Թեզի պաշտպանության ամփոփաթերթ, իրավագիտության ամբիոն	
26	Մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովի նիստի արձանագրություններ, 2018, իրավագիտության ամբիոն	

27	Իրավագիտություն մասնագիտության բակալավր ԿԾ, իրավագիտության ամբիոն	3
28	Քաղաքական իրավունք և դատավարություն մագիստրոսական ԿԾ, իրավագիտության ամբիոն	3
29	Քրեական իրավունք և դատավարություն մագ. ԿԾ, իրավագիտության ամբիոն	3
30	Սահմանադրական իրավունք, իրավունքի և պետության տեսություն մագ. ԿԾ, իրավագիտության ամբիոն	3
31	Միջազգային և եվրոպական իրավունք մագ. ԿԾ, իրավագիտության ամբիոն	3
32	Քաղվածքներ, ԳԽ նիստի արձանագրությունից 2017թ. իրավագիտության ամբիոն	
33	2017-18թթ. ուստարում գործող ԿԾ, իրավագիտության ամբիոն	3
34	Ավարտական աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի նիստի արձանագրություն, Իրավագիտության ամբիոն, 2018	
35	Տեղեկանք ՊԴ կազմի, 2017-18թթ.ուստարի, բակալավր, մագիստրատուրա 2-րդ կիսամյակ, կառավարման ամբիոն	5
36	ՊԴ ծանրաբեռնվածություն, կառավարման ամբիոն	5
37	2016-17թթ. ուստարվա մասնագիտական վերապատրաստումների մասնակցություն, կառավարման ամբիոն	5
38	2017-18թթ. ուստարում գործող ԿԾ, կառավարման ամբիոն	3
39	ԿԾ լիցենզիաներ	3
40	Հետազոտական մեթոդների ներածություն դասընթացի առարկայական ծրագիր, բակալավրիատ, 2017 -այդ դասընթացի գնահատման համակարգի բարելավման փաստաթուղթ, 2018	3
41	Քանակական և որակական հետազոտության մեթոդներ, առարկայական նկարագիր	3
42	որոշ մասնագիտությունների ընդունելության ժամանակավոր հետաձգման մասին հայտարարություն	
43	Կառավարում մասնագիտության մագիստրոսի աստիճանի ԿԾ, կառավարման ամբիոն	3
44	Էլեկտրոնային բիզնեսի կառավարում մասնագիտացմամբ ԿԾ, կառավարման ամբիոն	3
45	Նախագծերի կառավարում մասնագիտացմամբ ԿԾ, կառավարման ամբիոն	3
46	Հյուրընկալման կառավարում մասնագիտացմամբ ԿԾ, կառավարման ամբիոն	3
47	Ավարտական աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի նիստի արձանագրություն, 2018 կառավարման ամբիոն	

	-ավարտական ամփոփիչ ատեստավորման ամփոփաթերթ, ավարտական աշխատանքի պաշտպանություն	
48	Մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովի նիստի արձանագրություն, 2018 կառավարման ամբիոն -ավարտական ամփոփիչ ատեստավորման ամփոփաթերթ, մագիստրոսական թեզի պաշտպանության	
49	ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի տիտղոսաթերթեր, Օտար լեզուների և գրականության ամբիոն	
50	ամբիոնի գործունեության կանոնակարգ, Օտար լեզուների և գրականության ամբիոն	
51	անգլերեն լեզվի և գրականություն, բակալավրիատ/մագիստրատուրա (1-ին կուրս), առակա, 2017-18թթ., գարնանային/աշնանային կիսամյակի դասացուցակ	
52	նախասավարտական պրակտիկայի պաշտպանության գնահատման տեղեկագիր, բակալավր+ուսանողի հաստատություն ուղարկելու փաստաթղթի և այնտեղից բնութագրի օրինակ, Օտար լեզուների և գրականության ամբիոն	
53	անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության բակալավրի աստիճանի ԿԾ	
54	ՊԴ կազմի ծանրաբեռնվածություն, Օտար լեզուների և գրականության ամբիոն	
55	2017ուստարում գործող ԿԾ-եր, անգլերեն լեզու և գրականություն	
56	2017-18թթ. գործող ԿԾ-եր, անգլերեն լեզու և գրականություն	
57	Ավարտական աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի նիստի արձանագրություն, Օտար լեզուների և գրականության ամբիոն -ավարտական ամփոփիչ ատեստավորման, ավարտական աշխատանքի պաշտպանության, 2018	

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Ամբիոններ /Իրավագիտության ամբիոն, Օտար լեզվի ամբիոն, Կառավարման ամբիոն/
3. Բիզնես դպրոց
4. Իրավաբանական կլինիկա
5. Հաշվապահություն
6. Կարիերայի կենտրոն
7. Համակարգչային լսարան / Erasmus/
8. Գրադարան
9. Կոնֆերանս դահլիճ
10. Ֆարմացիայի լաբորատորիա /ոչ լիարժեք վերանորոգված/
11. Մարզադահլիճ
12. Ուսանողական հանրակացարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԵԲԿՏ _ եվրոպական բարձրագույն կրթական տարածք
2. ԵԿԿՓՀ _ եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ
3. ԵՄՀ – Եվրասիա միջազգային համալսարան
4. ՀՀ _ Հայաստանի հանրապետություն
5. ՄԿԾ _ մասնագիտության կրթական ծրագիր
6. ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
7. ՈԱ _ Որակի ապահովում
8. ՈԱԱԿ_«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
9. ՈԱԵՉՈՒ _ որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշեր
10. ՈԱՇ _ որակավորումների ազգային շրջանակ
11. ՈԿՀ - Որակի կառավարման համակարգ
12. ՊԴԿ _ Պրոֆեսորադասախոսական կազմ
13. ՊԻԳԲ _ պլանավորել-իրականացնել-գնահատել-բարելավել
14. ՌԾ _ Ռազմավարական ծրագիր
15. ՌՊ _ Ռազմավարական պլան
16. ՌԻԽ _Ուսանողական խորհուրդ
17. ԿՕ - Կառավարման Օղակ